


ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՖԵՌԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՑՈՒՂԻ ՄԻԶԵՎ ԱՏԵՂԾՎԱԾ  
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Արտատպություն Գիտության յեվ Արվեստի Խնամիտութի  
և 2 յեվ 3 Տեղեկագրից)



Տի. Բայ. Աշխարհական :  
հեղեղութեաւ :

30/1/1921.  
Յիշեաւ:

Հայկ  
46

## ԱՐՄԵԿԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ ԶԵՂԴԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՑԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ԱՏԵՂԴՎԱՄ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Զեկուցված և Գիտության և Արվեստի Խնամքառութի պատմական-հասարակութի-  
տական բաժնում 1927 թվի մարտի 26-ին և ապրիլի 9-ին)

Ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակա-  
դրությունը մի բարդ թեմա է: Լիովին ըմբռնում ենք այդ: Դրությունը  
ավելի բարդանում է, յերբ նկատի ենք առնում այն հանգամանքը, զոր  
ֆեոդալական Հայաստանի մեր վերցրած ժամանակաշրջանի մասին բոլորովին  
բացահայում են մոնողքափիկ ուսումնասիրություններ և կարենքը, զոր  
դեռ ևս անցյալի քաղաքների ավերակները սպասում են իրենց պեղութերին:  
Այնուամենայինք, կարծում ենք, զոր մատենագրական աղբյուրներից (հայ  
թե ոտար) մեզ հասած վկայություններում կան բավականաչափ նյութեր,  
վորոնք հնարավորություն են առաջ մեզ յերեան հանելու այդ հակադրու-  
թյունը:

Հայաստանի անցյալի հասարակական կյանքը լուսաբանելու տեսա-  
կետից մեր առաջադրած հարցի քննությունը հիմնաբարն և կազմում:

«Բոլոր զարգացած և ապրանքափոխակությամբ պայմանա-  
վորված աշխատանքի բաժանման հիմքը կազմում և քաղաքի և գյու-  
ղի (Land) բաժանումը: Կարելի յե ասել, զոր հասարակության ամրող  
տնտեսական պատմությունը անփոփում և այս հակադրության  
շարժման մեջ»<sup>1</sup>:

Մարքսը սրանով վոչ միայն քաղաքի և գյուղի միջև ստեղծված հա-  
կադրության շարժման մեջ և տեսնում հասարակության ամրող տնտեսա-  
կան պատմությունը, այլ նա միաժամանակ մատնանիշ և անում սրա  
շուրջ կատարվելիք ուսումնասիրության մերսպը:

Քաղաքի և գյուղի բաժանումը կազում և անմիջականորեն աշխատան-  
քի բաժանման հետ: Մի բաժանում, զոր զարգացել և պայմանավորվել և  
ապրանքափոխականակությամբ: Ուրիմն, արտադրական ուժերի վորոշ զար-  
գացման աստիճանում:

Այս տեսակետից մեր ուսումնասիրությունը յերկու հիմնական հարց  
պիտի շոշափի:

ա) Եթերեան հանել այն շարժիչ ուժերը, վորոնք 7-րդ դարու կեսից  
ֆեոդալական Հայաստանի հասարակական աշխատանքում բաժանում են  
առաջացնում:

1. K. Marx. Das Kapital, 9. 12 IV, Էջ 299, Stuttgart 1921.

բ) Ցույց տալ ստեղծված հակադրության այն չափը, վոր գոյություն և ունեցել արարական շրջանի ֆեռդալական հայաստանի քաղաքի և գյուղի միջև:

Մեր կարծիքով, արարական շրջանում, շարժիչ ուժեր հանդիսանում են. ա) բնահարկերի մեծապույն մասի զրամական ձևով գանձումը և բ) ֆեռդալական հողային սեփականությունների շուրջ առաջացած փոփոխությունները:

Սրանից առաջինը մեր կողմից առանձին ուսումնասիրության նյութ և գարձել և տպագրվել Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագրի յերկրորդ համարում: Այդ ուսումնասիրության հիմնական յեղբակացություններից մին յեղել և Փեղալական հայաստանում արագրական արխատանքի մեջ առաջացած բաժանումը:

Առաջարգած յերկրորդ հարցը պարզաբանելու համար մենք կանոնական բնույթու առարկա ժամանակաշրջանի քաղաքային կյանքի լուսաբանման վրա:

Այս կերպ մեր ուսումնասիրությունը բաժանվում է չորս հիմնական գլուխների:

I. Արարական նվաճումի անդրագարձումը ֆեռդալական հողատիրության փոխ-հարաբերությունների վրա.

II. Թաղաքների բարգավաճումը.

III. Արհեստավորական արտադրությունը ֆեռդ. Հայաստանի աղբանքափոխանակության շրջանում.

IV. Առևտրական և վաշխառուական կապիտալ:

## I. ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄԸ ՖԵՌԴՈԼԱԿԱՆ ՀՈՂԱ- ՏԻՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐՄԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Արաբների վարած հարկային քաղաքականության զուգընթաց տար-  
վում եր նաև, հետեղական կերպով, Հայաստանի հողատեր ֆեռդալների  
տկարացման քաղաքականություն: Եթե այդ քաղաքականությունը սըկդ-  
րնական շրջանում եր արարական պետության համար նպաստա-  
վոր կերպով, ապա խալիքատի տկարացման շրջանում մենք ականատես-  
ենք լինում հողատիրական փոխարաբերությունների առաջակետից մի  
այնպիսի յերեսութիւ, վոր մի շարք տեսակետներից վերին աստիճանի  
ուշագրավ եւ:

Հայտնի յեւ, վոր արարական տիրապետությունից հետո վերստին հանդիպում ենք ֆեռդալակսն Հայաստանում քաղաքների զարգացման:  
Ներքին անտեսական կյանքում առաջացած այս փոփոխությունը ուներ  
իր խոր պատճառները: Ուստի, նախ քան ֆեռդ. Հայաստանի քաղաքների  
մասին խոսելը, հարկավոր է յերկու հիմնական հարցի պատասխանել.

1. Արարական նվաճումը ինչ անդրագարձում ունեցավ ֆեռդ. Հա-  
յաստանի հողատիրական փոխհարաբերությունների վրա.

2. Առաջացած հողատիրական այս նոր փոխհարաբերությունները

թնչ անդրագարձում ունեցան, իրենց հերթին, քաղաքների զարգացման վրա:

1. Խնչպիս ամեն մի տիրողի նույնպիս արարտների հիմնական նպատակն եր կազմում ֆեռոդ. Հայաստանը տնտեսապես նվաճել Այս տեսակետից խոշոր խոչընդոտ հանդիսանում է յին բազմաթիվ մեծ ու փոքր հայ ֆեռոդները: Միապետական արարտ պետությունը չեր կարող յերբեք հանդուժել նման փեղալների գոյությունը, մասնավանդ յերբ նկատի ունենանք, վոր այդ ֆեղալներից վուանք արարտական և բյուզանդական աշխարհակալական պայքարների ընթացքում արարտական պետության անհավատարձության մի շարք փաստեր տվել եյին:

Տեղական փեղալների տնտեսական ապա և քաղաքական իշխանությունը ակարացնելու ասպարիգում, արարտների վարած քաղաքականության մէջ մէնք կարողանում ենք յերկու հիմնական գիծ մատնանշել:

ա. Վորոշ պատմական վկայություններ թույլ են տալիս մեզ ասելու, վոր արարտական պետությունը ձգտում ուներ տեղացի փեղալները փոխարինելու արարացներով: Ոմարի (654—644 թ.) հին սկզբունքը, վորով արգելվում եր արարացներին գրաված յերկրներում հողային սեփականություններ ունենալ, վերանում եր Ռումանի (644—656 թ.) ժամանակ: Ենկական արարտները դարձան առաջին կարգի մեծ հոգատերեր»<sup>1</sup>:

Ուրիշն, արարտների նախ քան Հայաստանը վերջնականապես զրավելը (653/55 թ.<sup>2</sup>) Ոմարի գրած որենքը վերացած և լինում:

Համաձայն Բալատուրիի վկայության Հարիր թին Մասլաման, Մուավիայի առաջարկով, Կարին փոխադրել և 2000 հոգուց բաղկացած մի պահակախումբ և նրանց շնորհել ե ավատներ: Հավանաբար, սրանք այն հողերն եյին, վորոնց սեփականատերերը գաղթել եյին: Ըստ այդ վկայության՝ այդ հողերը մշակվում եյին տեղացիների կողմից, վորոնք կոչվում եյին ոյ և վճարում եյին շիրազ կոչված տուրքը<sup>3</sup>: 934 թ. վորձ և արգում բանակի մարդկանց հող տալ մշակելու, սակայն տալիս ե բացասական արդյունք և որենքը վերացվում ե<sup>4</sup>:

756 թվին Կարին տեղափոխված արարացների մասին Ղետնդ պատմիչի մոտ կարգում ենք.

«... եւ կարգեց (Եղիտ վոստիկանը) ոոցա պատրաստութիւն կերպոց յաշխարհէս հայոց»<sup>5</sup>,

Այս մասին մի ուշագրավ վկայություն ունենք նաև սուրբացի պատմիչ Դընիի կողմից, վորը խոսելով 766/67 թվին սուրբացի գյուղացիության վրա գործ դրված մնշումների մասին, հայտնում ե.

«... Նրանք (գյուղացիները) վոչինչ չունեյին աշխատելու համար, վորովհետեւ նրանց հողերը արարացների կողմից ծախված եյին»<sup>6</sup>:

1. H. Topdschian. Die innere Zustände u. s. w. Էջ. 14. Halle, 1904:

2. Ghazarian, Armenien unter d. Araberrschafft Էջ 96:

3. Baladuri, 197, 20 Էւ:

4. A. F. v. Kremser, Denkschriften d. Wienzer Akademie, Էջ 325, 1888:

5. Կ ռ ն դ զ, Թ լ. ի թ., Եջ 130, Պետրոպոլ 1887:

6. Chronique de Denys de Teimaché, IV—ème partie 1888, trad. fr. par L. B. Chabot Եջ 74/75. Paris 1895:

Հողերը ծախելու պատճառ ցույց և արվում զյուղացիության վրա դրված հարկերը չգանձվելը։ Գյուղացիությունը ճարակատյալ զաղթում էր։ Ցեմե պետական հողերի մասին այս ձերի քաղաքականություններ թույլ են տալիս մեզ յեղբակացնելու, վոր արարական իշխանությունը հովանավորում էր այն արարաներին, վորոնք բանի գրավութեանով տեղացի փեղալները քշում եյին իրենց սեփականություններից։ Այսպիս, Բերկրիի Ֆնունիները քշում եյին Ռւսականիների կողմէց<sup>1</sup>, Կամսարականները Արշարունիքից՝ արար Զահապյանների կողմէց։ սրա հետեանքով և, վոր Կամսարականները այդ մասը վաճառում են Աշոտ Մասկերին<sup>2</sup>:

Արարաները գեղի հոգեոր իշխանները վարում եյին մեզմ քաղաքականություն։ Սակայն, մի շարք պատմական փատամթղթեր ցույց են տալիս, վոր արարական արքապետության շրջանում անտեսապես ուժեղացող հայ յեկեղեցին<sup>3</sup> ևս զերծ չեր այդ րոնազրավումներից։

Ստ. Որբելյան պատմիչի 9-րդ և 10-րդ զարերից մեզ հասցրած մի քանի փաստաթղթեր, վորոնք վերաբերում են յեկեղեցին յեղած նվիրատվություններին, պարունակում են հետեալ հետաքրքիր վերջարանները։

«...Եւ եթէ տաճիկ աւագութիւն փոխի և յափշտակել ջանայ, հաղարէն հազար նաւար ի վերայ նորա զայ, և յիւր Փեղամբարէն ապիզար եղիցի։ կամ,

«... և թէ ի տաճիկ աւագութիւն հասանի և յափշտակել ջանայ յաստուծոյ և յիւր Փեղամբարէն ապիզար եղիցի, և բիւր 1.000 նաւար եղիցի...»

և կամ

«...և թէ տաճիկ աւագ լինի և յափշտակել յաստուծոյ և յիւր Փեղամբարէն որոշած լինի և յամենայն սրբոց նզովեալ և 100.000 նաւար<sup>4</sup>։

Այս փաստաթղթերը կասկած չեն թողնում, վոր տիբողների կողմէց հողային բռնազրավումները սովորական մի յերեսույթ ե յեղել։ Ցեմե վորոշ արտօնություններ վայելող հոգեոր իշխանների հանդեղ բռնազրավումներ լինում եյին, ապա շատ հավանական և, վոր նրանք ավելի մեծ համեմատություններով պիտի արտահայտվեյին աշխարհիկ իշխանների մասին։

Բանակի մարդկանց ավատներ տալու, ինչպիս և հողային բռնազրավումների կողդին, պետք ենկատի ունենալ նաև այն հանդամանքը, վոր

1. Թ. Ար ծ բ ու ն ի, |||, 28, էջ 247. Հմա. նահ Մարզարտ, Streifzüge, էջ 404։

2. Վ. բ դ պ ա ն, էջ 26, հմատ. նահ Մարզարտ, Streifzüge էջ 403.5, 451.5։

3. Հիշյալ զարերում յեկեղեցին խօսող սեփականատեր զանալու մասին ունենք ուշագրագ փաստաթղթեր Ստ. Որբելյան պատմիչի մասու Սյունիթում յեկեղեցական հորային սեփականությունը յերեան հանելու տեսակետից հետաքրքիր, մանողազափիկ ուսումնաբրության նշութ կարող է լինել հիշյալ պատմիչի մեզ հասցրած փաստաթղթերը։

4. Ստ. Որբելյան, Գլ. Խ. էջ 265, Գլ. ծա, էջ 13, Գլ. ծղ էջ 47, Փարիզ 1859, մաս 1 և 11։

մի շարք քաղաքներ սկսած 7-րդ դարուց դառնում են արարների բնակատեղին: Այսպիս Ամրդը, Մանողկերտը, Բերկրին, Արզնը, Դվինը, Դատվանը Նախիջևանը, և Կարբնը<sup>1</sup>: Հետազա դարերում այս քաղաքներում առաջանում են խոշոր հողատերեր, վորոնք դառնում են վարոշ քաղաքական ուժ: Անշուշտ, հետազա դարերի այդ արտահայտությունը արգյունք էր աստիճանական այն պրոցեսին, վոր կատարվում էր այդ քաղաքներում հաւատվող յեկվորների կողմից:

Մատնանշված այս յերեք հիմնական մոմենտները, անտարակույս, խոշոր փոփոխություններ առաջանում ելին հողային սեփականության փոխարարերություններում: Սակայն, սրանք գեռ ևս անդոր եյին արարական պետության առաջադրած նվաճումը լրիվ իրադորելու:

Բ. Տեղացի ֆեոդալների տնտեսական և քաղաքական իշխանությունը տկարացնելու տեսակետից բացի այն, վոր միայն 15.000 հոգինոց բանակ ունինալու իրավունք եր տրվում, արարական պետությունը շարունակում եր այն հալածանքները, վորոնք տեղի եյին ունեցել նախորդ դարերում: Այս տեսակետից բարձական և հիշատակել միայն Սրբութ Մելիք խալիֆի որով՝ Միջազգետքի, Հայաստանի և Ասրապատականի ևմիլ Մոհամեդ բին Մերվանի Նախիջևանում և Խրամում հայ ավատակելուների համար կազմակերպված ջարզը 8-րդ դարու սկզբում<sup>2</sup>: Նույն դարու վերջին կեսին տեղի եր ունենում Բաղրամյանդի ճակատամարտը, վորը ճակատազրական նշանակություն ունեցավ այնքան ուժեղ Մամիկոնյան նախարարության համար: Այդ ճակատամարտից հետո անցյալի հասարակական կյանքում խոշոր գեր կատարող Մամիկոնյան տոհմը չքանում եր հարազարեկից: Նրանց կալվածները բաժանվում եյին այն նախարարական տունների միջն, վորոնք խալիֆատի վատահությունն եյին վայելում—Բաղրատունիները և Արծրունիները: Այդ բաժանման մեջ անմասն չեյին մնում նաև արաբ ֆեոդալներ<sup>3</sup>:

Բացի հալածանքներից արարացիները կիրառում եյին նաև տեղացի ֆեոդալները իրար հետ կովկեցնելու և այս կերպ նրանց տկարացնելու քաղաքականությունը: Պետական պաշտոններ այլազան նախարարությունների հանձննելով կամ միաժամանակ նույն պաշտոնը յերկու տարբեր նախարարական տունների տալով: Այս կերպ նրանց միջն ստեղծվում եր մրցակցություն, վոր հաճախ վերջանում եր արյունահեղ կոխվներով:

Թէ առաջին և թէ յերկրորդ պարագաներում ամենից ավելի առժողությունը եյին փոքր ազնվականները, վորոնք ուժեղ ֆեոդալների մոտ պաշտպանություն եյին վորոնում և մտնում նրանց ծառայության մեջ և դառնում վասալների ժամանակի ընթացքում նրանց հողերը կլանվում եյին մեծերի կողմից: Այս տեսակետից նվազ դեր չեր կատարում նաև զբաժական հարկային քաղաքականությունը, վորի մասին խոսել ենք վերև մեր

<sup>1</sup> Արարական գաղութների մասին հմտ: Թռ փշյան: Die innere Zustände u. s. w. եջ 14—22:

<sup>2</sup> Դեռն դ Պլ. զ. եջ 56. Marquart, Streifzüge եջ 448:

<sup>3</sup> Դեռն դ Պլ. ը. եջ 169 շաբ., 183. Marquart, Streifzüge, եջ 37, 403 հն, 452 հն. Կույսպիս Շահարան, Արմենիան Արաբական պատրիարքությունը, եջ 49:

մատնանշած ուսումնասիրության մեջ և ցույց տրվել թե ինչպես այդ գրամական հարկերը քայլայման եյին հասցնում փոքր ազնվականությունը: Հաճախ առողքերի պատճառով նրանք ստիպված եյին լինում վաճառել իրենց սեփականությունը:

Արարեների՝ Հայաստանը տնտեսապես նվաճելու այս հետեղական քաղաքականությունը ստանում էր 9. բգ դարում բոլորովին այլ բովանդակություն, յերբ բազմաթիվ փեղալները վիրանում կամ վասար գառնում եյին և սաեղծվում եյին փոքրաթիվ, սակայն անտեսապես վիրին աստիճանի ուժեղացած նախարարական տուներ: Այդ ուժեղ փեղալները, ոպտիկով խալիքատի տկարացումից և արարական պետության սահմաններում ծագած ապստամբություններից, կարողանում եյին իրենց տնտեսական զորությամբ քաղաքական իշխանություն ձեռք բերել: Դազրաշյանը իրավացի յի, յերբ զրում ե.

«Բարեկը մեծագույն ազդակն և IX դարում հայ մասնակի իշխանների ուժեղացման համար. քսան տարի շարունակ իր հաղթություններով ան խալիքատը զբաղեցրեց, նրանց ազգեցությունը Հայաստանի վրա բոլորովին թուլացրեց, և մինչ այդ հայ մասնակի իշխաններ ժամանակ շահեցան տնտեսական և զինվորական տեսակետից ամրանալու»<sup>1</sup>:

Թեև մի կողմից այնքան նշանավոր նախարարական տուններ, ինչպիսիք Մամիկոնյանները, Կամսարականները, Սահառունինները, Ըշտունինները, Գոռունինները և ուրիշներ, վորոնք նախորդ դարերին խոշոր հասարարակական ազգեցություն ունեցին, ճամանակի ընթացքում անհնատացան կամ գաղընեցան վորոնք մի դեր խաղալ Հայաստանի հասարակական կյանքում, մյուս կողմից մի քանի իշխանական տուններ, ինչպիսիք՝ Բազրատունինները, Արծունինները և Սյունիք իրենց հոգամասները մեծ չափով մեծացրին:

Հայաստանի փեղալների հողային սեփականությունների մեջ առաջացած առ փոփոխությունների մասին Թոփչյանի կատարած ուսումնասիրությունից զալիս ենք հետեւյալ յեղակացության:

9 բգ դարի վերջին քառորդում, Հայաստանում վորպես խոշոր հողատերեր հանդես են զալիս. 1. Բագրատունի, 2. Արծունիքի, 3. Սյունիքի, 4. Անձնացյաց, 5. Մոկի, 6. Զանարքի, 7. Խաչենի, 8. Ռւտիքի, 9. Գուգարքի, 10. Գարգմանի իշխանները. (6—10 հիշվածները գտնվում են Աղվանից յերկրում):

Աշու 1-ի ժամանակ Բագրատունինները տեր եյին որինակ՝ Բագրարանի, Շիրակի (մայրաքաղաք Շիրակավան), Վանանդի (մայրաքաղաք Կարս), Անիի, Տայքի մի մասին և Արագածոտնի լեռնամասին մինչև Ցերեան քաղաքը, նոր գրավումներով այս յերկրամասերը ավելի ընդարձակվում են<sup>2</sup>:

<sup>1</sup> Daghbaschian, Gründung des Bagratiden Reiches u. s. w. Եջ 7.

<sup>2</sup> H. Topolschian. Polit. u. Kirchengesch. Armen. Mit. d. Sem. f. orient. Sprachen Jahrg.

Արծրունիները, վորոնք նախապես Աղբակում կալվածներ ունեյին, վերև հիշած ժամանակաշրջանում տեր ելին վասպորականի և կարողացան նոր նվաճումներով, մանավանդ Գագիկ I ի որով (904—909 թ.) իրենց կալվածները նմանապես ընդարձակել Հետեանքը լինում եւ այն, վոր Բաղրամունիների և Արծրունիների միջն իշխանության հարցի շուրջ պայքար և առաջանում: Պայքարը մզգում եր նախ Խոյ քաղաքի մարդին ապա՝ Բերկրիի, Մանազկերտի, Խալթի և Բաղեշի մահմեդականների վրա զերիշանության հարցի շուրջ<sup>1</sup>:

Սյունիքի յերկու իշխանական տուները իշխում ելին ամբողջ Սյունիքին:

Այս յերեք իշխանական տուները այն ժամանակ ամենից ուժեղն ելին: Վորովհետեւ, Մոկաց և Անձնացյաց իշխանական տուները զանգում ելին Արծրունյաց ազգեցության տակ և վերև հիշված 6—10 իշխանական տուները Բաղրամունիների ազգեցության տակ<sup>2</sup>: Ազգանից իշխաններին առավելապես փանդ եր սպասում Ատրպատականի մահմեդականների կողմից: ուստի նրանք հենվու ել ելին Բաղրամունիներին:

Հոգենոր իշխանների կալվածների մասին բավական տեղեկություններ ունինք Ստ. Որբելյանի մեզ հասցրած փաստաթղթերում և Վիմական Ցարեգի արձանագրություններում, վորոնցից վորոնցակի յերեսում և, վոր տնտեսապես ուժեղացած աշխարհիկ իշխանները «իրենց հոգվության համար առատորեն հողային նվիրատվություններ են անում յեկեղեցիներին և վանքերին: Այդ նվիրատվությունները լինում են յերբեմն «հայրենատեր» գյուղացիության հաշվույն»:

Այն հանգամանները, վոր արաբական պետությունը, առաստարակ, դեպի հոգեռականները և նրանց սեփականությունները համեմատաբար զիջող քաղաքականություն ե վարել, մեզ թույլ ե տալիս յեղբակացնելու, վոր այս ժամանակաշրջանում նրանք հանգիսանում են առնվազն նախորդ դարերի խոշոր հոգատերերը:

Մի քանի նախարարական տուների ձեռքում գավառների կենտրոնացումը հոգենոր իշխանների համար ստեղծում եր նպաստավոր հանգամաններ:

Մեր դրած առաջին հարցի քննությունը մեզ բերավ հետեւյալ յեղբակացություններին.

ա) Ֆեռդալական Հայաստանում առաջացել ելին արար հողատերերը իրն Հառուքալի կողմից արտաքին Երմենիա անվանված մասում զոյլություն ո նիցող քաղաքաներում, մասնավորաբար, հաստատավում են արարներ. հավանաբար առևտրականներ: Այս մասին ունինք Դընիի մի վկայությունը 769/770 թ. վեր բերող, վորեց յերեսում և, վոր այդ քաղաքներում Մուսա - լից գաղթած ժողովուրդը խոշոր հարստությունների տեր ե դարձել<sup>3</sup>,

բ) Ներքին ֆեռդալներից մի քանիսը կարողացել ելին կլորացնել իրենց տե-

1 Martkward, Südarmenien u. die Tigrisquellen էջ 801/2 note 311:

2 H. Topeschian, Polit. u. Kirchengeschichte և. ս. վ. էջ 142/152, 156/57, 198, 200:

3 Ստ. Որբելյան, Գլ. լզ. էջ. 209, Գլ. լէ. էջ. 218 շ., Գլ. լթ. էջ. 253 շ. Գլ. լս. էջ. 259:

4 Chronique de Denys de Telli-Mahrè, tr. L. B. Chabot էջ. 92:

րիտորիաները և վաստակ զարձնել մանր ֆեոդ շները Նրանց անտեսական այս ուժեղացումը հետագայում հնաբավորություն և տալիս «թաղավորիկ» դառնուր. Այդ ֆեոդալները ապրում են իրենց մայրաքաղաքի ապարանքներում, վորտեղ հավաքվել եյին նաև վաստակ իշխանիկները, Փոքրաթիվ, սակայն անտեսապես ուժեղ այդ աշխարհիկ ֆեոդալները իրենց քաղաքական իշխանության համար կարիք ունեյին հոգեոր իշխաններին. Յեթև ամենայն հայոց կաթողիկոսը Բագրատունիներին եր հավանավորում, Արձրունի և Սյունյաց իշխանները ևս ունեյին իրենց յեղիսկապունները<sup>1</sup>. Այդ հոգեոր իշխանները իրենց կատարած ծառայությունների համար լիուլի գարձաւրվում եյին:

2) Ի՞նչ անզրագարձում ունեցավ հոգատիրական այս նոր փոխարարակրությունը ֆեոդալական Հայաստանի քաղաքների զարգացման վրա:

Այս անզրագարձումը, գլխավորաբար, տեղի եր ունենում յերկու ուղղությամբ:

ա) Փոքրաթիվ, սակայն անտեսապես ուժեղացած այդ խոշոր ֆեոդալները, իրենց բնակությունը հաստատելով գոյություն ունեցող և զարգացման պրոցեսում գտնվող քաղաքներում, հնաբավորություն եր ստեղծվում այդ վայրերում խոշոր ֆեոդալին յենթակա զավաններից հարկի ձեռվ գանձվածները կուտակելու. Բացի այս, այդ խոշոր ֆեոդալի շուրջ ավելի մեծ թիվով անտաշխատ սպառողներ եյին հավաքվում, թե մին և թե մյուսը հարմարագույն պայմաններ սահնդում ելին զրամական հարկերի պատճառվ հասարակական աշխատանքի մեջ սկսած բաժանումը խորացնելու:

Պետք է նկատի ունենալ նաև մի շարք հանգամանքներ ևս, վորոնց կոմպլեքսի մեջ և նրանց միջոցով միաժամանակ կատարվում և այդ փոխազդեցությունը:

Մեթոդական տեսակետից կատարած մեր բաժանումներում յերաքանչյուր տնտեսական ազգակ գործնական կյանքում խաչաձեռւմ, ներգործում են միմյանց վրա:

Բացի արտաքին հարկերի մեծագույն մասի զրամական ձև ստանալուց, պետք է նկատի ունենալ զարգացման պրոցեսում գտնվող քաղաքները և վոր կարեորն և այդ քաղաքներից անցնող արևելքի և արևմուտքի առևտունական ճանապարհների ցանցը: Իսկ առևտունական կուպիտալի կողքին, նրա անբաժան ընկերակից վաշխառուական կապիտալը, վորի շահագործումները, ինչպես կը տեսնենք մեր ուսումնասիրության վերջում, որինական ցվում են:

Տնտեսական այս խաչաձեռվ ազգակների մեջ առ այժմ անհրաժեշտ և ընդգծել այն, վոր ապրանքափոխակության այս ժամանակաշրջանում թե հոգեոր և թե աշխարհիկ իշխանների տնտեսական պահանջները ավելանում և բազմանում են. այս կերպ անզրագառներով իր հերթին առևտունական կապիտալի աշխառժացման վրա:

Այս յերեւոյթը անդրագառնում եր այն բանի վրա, վրո նախկին շրջաններում, յերբ բնահարկը գանձվում եր ֆեղալական իշխանների սպառզական կարիքների համար առավելապես, այժմ կուտակված այդ բարիքները դառնում եյին ապրանք։ Մրանով մի կողմից բնահարկի գանձման սահմանները վերանում եյին և մյուս կողմից հարկահավաքման պահանջը դառնում եր անսանձ։

Մեր կարծիքով այս մասին ե Արխոտ. Լաստիվերտացիի ակնարկությունը, վոր անում և ժամանակի առետրական կենտրոններից միույն 1049 թ. ի Արծնի մասին։

«... վաշխից և տոկոսեաց օրէնք եղան, և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի...»<sup>1</sup>

Առաջին պարբերության մասին մենք ստորև խոսելու հնք։ Այստեղ հետաքրքրականը՝ «ցորենոյ բազմապատկություն» դարձվածքն ե, վոր անկասկած արտադրող դասից գանձվող բնահարկն և ակնարկում։ Պատմիչը իր այս տողերում մեզ տալիս է զարգացման այն պրոցեսը, վորով ընթառում եյին այդ քաղաքները։

Վոր այդ կուտակվող ցորենը ապրանք եր դառնում, այդ հաստատվում և արար պատմիչ Տարտրիի վկայությամբ, վորի համաձայն Հայաստանից դեպի Բաղդատ հացանատիկ արտածվելիս ե յեղել<sup>2</sup>։

Արդոք իշխանական դասը իր տնաեսական կարիքները բավարարելու համար միայն բնահարկ եր գանձվում թե հարկի վրոշ տեսակներ զրամականի եյին վերածվել։ Այս մասին ունենք շահեկան վկայություններ Ս. Որբելյանի փաստաթղթերում և Վիմական Տարեգրի արձանագրություններում։ Ցերկու վկայություններ ցույց են տալիս, վոր իրապես ներքին իշխանների կողմից գանձվել են վրոշ գրամական հարկեր։

Այսպիս, Ստ. Որբելյանի մոտ կարդում ենք 903 թ.-ի հայոց սպարապետ Շապուհ Բագրատունիի թողուժ մի փաստաթղթում։

«...եւ եաու հինգ գեղոց սահման՝ Կոթաքարն, Աղաբոյ վանս, Շաւառնահողն, Գետամէջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, 260 դրամ ի Կոթաքարէն, 530 ի Բատենեացն, 660 յԱղաբոյ Վանացն ծովէ, 990 ի Կարբին գետերէն և ի նաւերէնւա<sup>3</sup>։

901 թ.-ի Մաքինացցց վանքին յեղած նվիրատվության մեջ կարդում ենք։

«.. ես Սուփան, Սյունյաց իշխան... եաու որս ձկանց... և եւթն հարիւր դրամ ի Դեղձանգետոյ՝ զապալէն, երկու հարիւր դրամ ի Կաթէկայ, երեք հարիւր յիսուն յԱնմեռէն, որ լինի ՌՄՇ դրամ, և ետու հինգ կուղպակ յԱնի...»<sup>4</sup>

<sup>1</sup> Արք ի ստ. Լաստիվերտաց երտացի, Քլ. Ժ. 53/55, Վենիտիկ 1844.

<sup>2</sup> Տարբելյ 372, 275 տես C h a z a r i a n. Armenien unter Araberherrschaft Եջ 68.

<sup>3</sup> Սա Որբելյան, | Գլ. լէ, եջ. 226/27. Հմմատ. նահ կ. կոստանյաց, Վիմական Տարեգրի, եջ 6:

<sup>4</sup> Կոստանյաց, վիմական Տարեգրի, եջ 5. Ստ. Որբելյան, ի. Գլ. լէ, եջ 223/24. այսուհեղ շահեկան և այն հիշատակությունը, վոր Սուփանը, Սյունյաց իշխան, Անիում կուղպակներ և ունեցել:

Սա. Որբելյանի պատմության վերջում քրիստոնեաց հրկուասանն զավառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին՝ ցուցակում զյուղերի առջև գրված թվանշանների մասին Շահնազարյանցը (հաստարակիչը) հետեւյալ ծանոթությունն եւ տալիս մեզ:

«Արարացի թիւքն ցուցանեն զորքանութիւն մարզանից ցորենոյ զոր շէն իւրաքանչիւր իրր գուազանապառուղ, և նոյն քան դահնական (փանահապատ) որ է կէս զոան իրր աթոռահարկ, առայ ամի ամի Տաթեայ վանիցն»<sup>1</sup>.

Համաձայն այդ ցուցակի 682 զյուղեր 1304 թ.-ից առաջ վանքին հարկատու են յեղեր Շահնազարյանցը, ինչպես տեսնում ենք, չի տալիս մեզ թե ինչ հիման վրա զավազանապառուղը բնահարկով եր վճարվում և աթոռահարկը գրամահարկով:

Բրոսեն ել ընդունում եւ թե բնահարկ և թե զրամահարկ եւ հաշվում եւ 189,870 բեռ ցորեն և 10:12 ռ. 12 կոպ.<sup>2</sup>: Դեռնդ Ալիշանը ընդունում է միայն բնահարկ:<sup>3</sup>

Եթե թաթարական շրջանին վերաբերվող այս վկայության մեջ զրամահարկի գոյությունը պարզաբանվի, կարող եւ այս վկայությունը մեծ չափով լույս սփոռն նաև անցյալ գործերի վրա:

Մի կողմից արաւաքին իշխողների վճարված հարկերը, մյուս կողմից տեղացի աշխարհիկ և հոգեւոր ֆեոդալների գանձած հարկերը զյուղացիությունը մատնամ եցին ծանր կացության: Ան ստիպված պիտի լիներ բացի հողաշակությունից ապրու ստի այլ միջոցներ վրբունել: Դրամական հարկերի ներմուծով հասարակական աշխատանքում սկսած բաժանումը այս վերջնի պատճառով ել ավելի խորանում եր:

Ազրանքափոխանակությամբ ֆեոդալների տնտեսական կարիքների ավելացումը և բազմազան դառնալը, յեթե արտադրող գասի վրա այս անդրագարձումն եր ունենում, ապա հոգած երի կենտրոնացումը փոքրաթիվ ֆեոդալների ձեռքում մի այլ ուղղությամբ գալիս եր շահագործման այս պրոցեսը խորացնելու:

Մենք ակնարկում ենք վարչական այն փոփոխության, վորին վերստին հանդիպսաւմ ենք Թ-րդ դարում:

բ) Փոքրաթիվ նախարարական տուների միջև հողամասերի կենտրոնացումը առաջին հերթին առաջացրել ե այդ հողամասերի կառավարման մեջ վարչական փոփոխությունն Խոշոր ֆեոդալը, վոր զանվում եր քաղաքում, ի վիճակի չեր անձամբ հսկողությունը կատարելու և հարկերը հավաքելու: Այս մասին ուշագրավ վկայություններ ունենք Թովմա Արծրունիի մոտ, վորոնք վերաբերում են Արծրունիների հողամասերին:

«...Բայց զերկորդ մասն Անձաւացեաց հանգերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանիկն նուաճեալ ընդ իւր գործակալօք, և զՄար-

<sup>1</sup> Սա. Որբելյան, II, Գլ. հղ. հջ. 259. ծանոթ. 190:

<sup>2</sup> Brossat, Histoire de Siunie, 1, ch. 74, հջ. 289 note 4.

<sup>3</sup> Դեռնդ Ալիշան, Սիսական, եջ 22, 23

դաստան զաւառ զբուճն բաժին տուեալ յԳուրգէն և նորա զիւր  
զործակալս թողեալ անդր»<sup>1</sup>:

«...Բայց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնազքուեալ յինքն  
զրաւեաց և կացոյց ի վերա նոցա զիւր զործավարու»<sup>2</sup>:

«...և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ (Հասանից) և  
կացոյց աշխարհին զիւր զործակալս»<sup>3</sup>:

և կտմ,

«...տեղի տայր (Գագիկ) բովանդակ զա առապետաց զօրագլ-  
խաց...»<sup>4</sup>

Խոլ Սյունիքի մասին Ստ. Որբելյանի մոտ կարգում ենք.

«Ժողովեալ ժամանեցին և ամենայն ազատք և զործակալք Սի-  
ստական աշխարհին...»<sup>5</sup>

Այս վկայություններում հիշտակված «զործակալ», «զործավար»,  
«գաւառապետ» բառերը ցույց են տալիս հողամասերի ընդարձակումով նը-  
րանք կառավարելու համար ստեղծված վարչական փոխուսոթյուններ»<sup>6</sup>:

Այս կերպ նախկին մանր ֆեոդալներին փոխարինում եյին վարչա-  
կան պաշտոնյաները: Յեթե այդ նախկին մանր ֆեոդալների շահագործումը  
առավել կամ նվազ չափով նահապետական եր, վորովնեսեւ նրա հպատակ-  
ները ֆեոդալի իշխանության տեսականացման մեջոց եյին ծառայում, նոր  
վարչական պաշտոնյաներին այս վերջին մոմենտը վոչ մի շահագործու-  
թյուն չեր ներկայացնում: Այդ պաշտոնյաներից նրանք, վորոնց հանձնըն-  
ված եր հարկանավարման պատոնը, կատարում եյին այդ՝ առանց վորեե  
բան նկատի առնելու:

Բացի այն, վոր այս կերպ արտադրող դասը ստիպված եր լինում  
ձրիւկերների մի նոր խումբ ևս կերպերիու, ավելանում եյին «րա վրա  
այդ պաշտոնյաների բազմաթիվ կամայականությունները, վորոնք, ան-  
կասկած, հաճախ ավելի ծանր եյին լինում քան սահմանված հարկերի  
գանձումը»:

Այս ցավոտ հարցն և շոշափում ներսես Շնորհալին իր «Ընդհանրա-  
կան թղթում», յերբ նա խոսքը ուղղում է իր ժամանակի իշխաններին.

«Եւ արդ՝ առաջին զայս պատուիրան աւանդեմք ձեզ, մի  
անիրաւարար վարիք առ հնազանդեալսդ ծանր և զժուարակիր հար-  
կադրությամբ՝ զոր ոչ կարեն բառնալ:

1 Թովմա Արծըռւնի, III, Գլ. ժե. եջ 209:

2 Ibid, III, Գլ. ի. եջ 221:

3 » , III, Գլ. ի. եջ 225:

4 » , III, Գլ. ի. եջ 228:

5 Ստ. Որբելյան, II, Գլ. ժը. եջ 57, 58:

6 Այս մասին Թովչյանը նկատում է հետեւալը (Եյ լուրջ լուրջ 25/26)  
«Երդ զարի յերկրորդ կիսան առաջին անդամը լինելով, սկսան խոշոր հողամասերը (այս)  
արարական որինակին նետելով մի պաշտոնություն կազմել: Այս նոր հողամասերը, վոր  
անոնք զբավում եյին, բաժանում եյին գավառների և նշանակում վարչական պաշտոնյա-  
ներ, կուսակալներ (գաւառակալ)»:

...Մի չար և անիբաւ գործակալս և գտփառապեսս կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ...այլ զարդարամիսս և զարդարազատս ընտրեցեք ունել ի վերայ մարդկան զգործակալութիւն, զի մի զարդունական սահմաններ իրաւունսն վաստակաւորացն՝ թողցեն վասն ստկաւ կաշառացն զրազումն, և կամ ինքեանք զողասցն. և մի առաւել քան զնրամայեալն նեղեսցեն զնսսա և առցեն...»<sup>1</sup>

Այս կերպ վոչ միայն ապրանքափոխակալությամբ ստեղծված նոր փոխհարաբերություններում արտազրող զասի շահազործումը ավելանում էր, այլ հոգածասերի կետարոնացումով ստաջացած այս փոփոխությունը խորացնում էր շահագործման պրոցեսը:

Ցիթե այս շահագործումը մի կողմից հանդիսանում էր հասարակական աշխատանքում տուաջացած բաժանումը խորացնող ազգակ, մյօւս կողմից հանդիսանում էր քաղաքներում ապրող փեղքալական զասի ստեղծած հակագրությունը քաղաքի և գյուղի միջև:

Այս շահագործումով պայմանագործում էր մի այլ ավելի քայլքայիշ շահագործում, զորը կատարվում էր քաղաքների վաշխառուական կողիտալի ներկայացուցիչների կողմից:

Այժմ հարկավոր և քննել թե ինչ եյին ներկայացնում իրհնցից փեղքական հայաստանի այդ քաղաքները:

## II ՔԱՂԱՔՆԵՐԻ ՔԱՐԴԱՎԱՑՈՒՄԸ

Արաբների զրամական հարկային քաղաքականությունը, հողատիրական նոր փոխհարաբերությունները, ինչպես տեսանք, մի շարք շահականներից արտազրող զասի կեղեկութիւնները սաստակացնում եյին:

Այս գրության անմիջական հետեանքը լինում էր այն, զոր արտադրական աշխատանքում բաժանում էր առաջանում և վերջինս խորացման պրոցեսով ընթանալով, առաջ եր բերում արտադրական նոր հարաբերություններ, վորոնց անմիջական արտահայտությունը մենք տեսնում ենք տվյալ ժամանակաշրջանում քաղաքների բարզավաճման մեջ:

Մեր այս գիտողությունը պիտի լիներ անկատար յիթե մենք նկատի չառնեյինք մի շարք ուրիշ հանգամանքներ ևս, վորոնք զալիս եյին ներքին այս շարժումը ավելի խորացնելու և կերպարանավորելու:

ա) Արաբական տիրապետության շնորհիվ Առաջավորմ ստեղծվել էր քաղաքական մի ամբողջական յերկրամաս: Մանր ֆեղալական սահմանները և նրանց հարուցած դժվարությունները, ընդհանրապես և մեծ մասամբ, վերացել եյին: Մի պարագա, զոր վերին սատիհանի նըպաստավոր էր մի յերկրի համար, զորտեղ ապրանքափոխակալություն էր կատարվում:

բ) Ֆեղալական հայաստանում տիրապետող պետության բանակների հաստատումը այն վայրերում, զորտեղ բերգեր զոյություն ունեյին և վորոնց պաշտպանությունը զինվորական տեսակետից անհրաժեշտություն

<sup>1</sup> Ն. Շնորհալի, Ընդհանրական թուղթը, հջ 89, Վենիտիկ 1871:

եր ներկայացնում: Վերև մենք՝ հիշատակեցինք արգեն կարինի մասին: Ֆեոդալական Հայաստանի միջնաշխարհում յերկրորդ հիմնական վայրը հանդիսանում եր Դվինը: Այդ գինվորական պաշտպանությունը անհրաժեշտ եր ամբողջ դարերի ընթացքում, քանի վոր Բյուզանդիոնի և Արարիայի միջն Առաջավոր Ասիայի շուրջ հակամարտությունները շարունակվում եյին: Այդ բերդաքաղաքներում բանակների հաստատումը տնտեսական տեսակետից նշանակում եր այն, վոր անաշխատ սպառողների քանակը ավելանում եր և ստեղծվում եր արտադրող դասի (յերկրագործ թե արհեստավոր) արտադրությունների շուկա:

Բացի բանակից, ինչպես տեսանք, Հայաստանի հարավային մասի մի շարք քաղաքներում հաստատվում եյին արարացիներ, վորոնք անմիջական հարաբերություններ պահպանում եյին Հայաստանից գորաս: Մի պարագա, վոր կարևոր և նկատի առնել ապրանքափոխանակության աշխատացման տեսակետից:

գ) Գլխավոր ազգակ հանդիսանում եր և այն, վոր սույն ժամանակաշրջանի յերկու գլխավոր քաղաքների, Բյուզանդիոնի և Բաղդադի միջն Հայաստանի վրայով ստեղծվում եր տարանցիկ առևտուր և Միջերկրականի ափերից քվում եյին հույն առևտրականները:

Այս կերպ 7-րդ դարու կեսից սկսած արդեն իսկ գոյությունն ունեցող քաղաքները մեծ թափով զարգանում եյին և կամ ժամանակի ընթացքում ստեղծվում և բարգավաճում եյին ուրիշ քաղաքներ:

10-րդ դարում ֆեոդալական Հայաստանը ներկայացնում է իրենից քաղաքների իշխանության պատկերը. այնպես, ինչպես այդ տեղի եր ունեցել հին Հռոմաստանում և միջին դարում Իտալիայում:

Այս դարում մենք հաշվում ենք ֆեոդալական Հայաստանում յոթը թագավորություն իրենց մայրաքաղաքներով:

1. 885 թվին հիմնվ Սեծ Հայքի Բագրատունիների հարստությունը, վորի մայրաքաղաքը յեղավ Անին 954 թ-ին<sup>1</sup>: Սմբատ Լ-ի որով վերածվում ե գաճաճ Հայաստանի:

2. 909 թվին Արծրունիները դառնում են ինքնավար Վան մայրաքաղաքով<sup>2</sup>:

3. 914 թվից Սյունիքի իշխանությունը գրեթե բոլորովին ինքնավար եր: Սյունիքի Սմբատ իշխանը (մեռած 998 թ-ին) 10-րդ դարու յերկրորդ կիսուն Խորա-անի սուլտանից հրաման առնելով թագավոր և հոչակում իրաւունք:

<sup>1</sup> Առաջին Բագրատունիները ընդհանուր մայրաքաղաք չունեյին... Միայն ավելի հետո... հետզենեան կառուցում երին խոշոր Անի բարդաքաղաքը, վոր պատմության մեջ ծանոթ ե վորպես Բագրատունիների մայրաքաղաքը: Ա. Տօքչիան, Polit. Kircheng. u. s. w. եջ 165: Թօփչյանն այն կարծիքին ե, վոր Բագրատունիները Անին սկսում են կառուցել յերբ Կրանք խալիքատից ամբողջովին անկախ են դասուում: Մեր կարծիքով Բագրատունիների ամբողջական անկախության մասին իսոսք չի կառու մինչ տես մեր հոգվածը «Արարական հարկային քաղաքականությունը ֆեոդ. Հայաստանում», Պետ. Համարարանի Գիտական Տեղեկագիր, թ. 2 Երեսն 1927 թ.<sup>3</sup>

<sup>2</sup> Թ. Արքունի թ. եջ 264: Այս թագավորությունը Արծրունի նախարարության արվում եր Յուսուֆի կոմմիտ յերկու խոշոր ֆեոդաները կովեցնելու և տկարացնելու նպատակով: Յուսուֆը համարում է իր նպատակն ինք: Թ. Արծրունի Ա, Գլ. գ. եջ 284:

<sup>3</sup> Ստ. Որբելյան լլ. գլ. եջ 43:

4. Նույնպես Տայքը, վոր Մամիկոնյանների ժառանգական գավառն էր, անցավ Բագրատունիների տան վրացական ճյուղին, վորպես ինքնավար սեփականություն:

5. Շապուհի վորդին և Աշոտ II յերկաթի յեղբայրը, Աշոտ, Դվինի թագավոր էր անգանվում շնորհիվ Յուսուֆ և իրին 921 թ-ից Առանց հաջորդի մեռած և 936 թ-ին:

6. 962 թ-ին Վանանդի գավառը Կարս մայրաքաղաքով բաժանվում էր Բագրատունիների հաստությունից: Այս թվականից Բագրատունիների հարստությունը կոչվում է «Անիի թագավորություն»:

7. Ավելի ուշ 982 թ-ին, Բագրատունիների մեջ ուրիշ ճյուղը, Գուգարաց աշխարհում, Վրաստանի և Աղվանից սահմանի մոտ, հիմնում է թագավորություն, վորի վերջին մայրաքաղաքը լինում է Լոռին<sup>1</sup>:

Ժամանակի ընթացքում հիմնվող այս փոքր թագավորական տունների հետեւկանքով տեղացի իշխանների և ոտար կառավարիչների պահակազորքի թիվը ավելանում էր: Այս վերաբերում և, մասնափորաբար, Անի, Դվին, Կարս, Վան, Ալիլաթ, Արծիշ, Արծն, Բերկրի քաղաքներին, վորոնք իրրե իշխանանիստ քաղաքներ կամ բանակատեներ քիող. Հայաստանի անտեսական կյանքի վրա սկսան խողոք ազգեցություն ունենալ:

Հայ և արաբ պատմիչների և աշխարհագիրների, ինչպես նաև այլ ճամբարորդների տված տեղեկությունները և անցյալի քաղաքների ավերտիների մասին յեղած ուսումնասիրությունները (վերջինները շատ քիչ են մինչև այժմ) մեզ հնարավորություն են տալիս հետեւյալ յեղբակացությունները անել:

1. Ֆեոդալական Հայաստանի քաղաքների մեծ մասը, անկասկած, տարբերվում եյին այժմյան քաղաքներից նրանով, վոր նրանց ազգաբնակության վորոշ մասը կազմված էր դեռ ևս յերկրագործության հետ: Այս հոնագամանքը անհրաժեշտ է ընդգծել յերկու տեսակետից:

ա) Արտադրական աշխատանքի մեջ առաջացած բաժանումը ֆեոդալական շրջանում դեռ ևս չեր հասել իր լրման և չեր նլ կարող հասնել տվյալ արտադրական ուժերի զարգացման սահմաններում:

բ) «Քաղաքի» բնակիչների վորոշ մասը յերկրագործական արտադրությունների սպառողներ չեյին հանդիսանում: Այս կերպ զյուղատնտեսական մթերքների համար ներքին շուկան դատնում էր ավելի նեղ:

Ֆեոդալական շրջանի «Քաղաքը» այս հիմնական կետում տարբերվում է կապիտալիստական շրջանի քաղաքներից:

Թովմա Արքունին թ-րդ դարու յերկրորդ կեսի Դվինի ազգաբնակության պարապմունքները, գարնան յեղանակում, այսպես և նկարագրում:

«Եւ եղեւ իրեւ ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն Դվայ, և ընդարձացեալ արմատքն ու բոյսքն զգենուլ սկսան զգօրութիւն, և

1 A. Akullian, Hinverlebung armenischer Territorien durch Byzanz im 11. Jahrh. հջ 10/13. Grossset, Histoire de la Slavie I հջ 172 ժանոթ. 8.

թուչունք և գագանք ծանեան զժամանակ։ զալստեանն իւրիանց, և աշխատաէր մշակքն պատրաստեցան ի գործ հրկրասէր վաստակոցն, որսորդքն զինքեանց գործիսն պատրաստէին, և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն, և հովիւքն տաւաղելով զգաոինսն քշէին ի դալարաբեր հովիտն և ամենայն ոք ազգս ազգս փութայր ի հնարի ինքեանց վաստակոցն մի զմիով ելանել։<sup>1</sup>

Մեր կարծիքով պատմի; այս նկարագրականում բանատեղական կողմը ավելի շեշտված եւ Մենք 9 րդ դարու Դիվինի մասին, վորպես քաղաքի, այլ կարծիք ունենաւ Այս վկայությունը ըերինք վորպես նմուշ այն քաղաքների համար, վորոնք իրապես զանգելիս են յեղել զարգացման այս աստիճանի վրա։ Այսինքն, յերկրագործական պարապմունքը գերակշռող տեղ և գրավի նրանց մաս։

Պրոֆ. Ն. Մատը Անիում իր կատարած պեղումների հիման վրա հայտնում եւ, վոր Անիի գյուղացին մեկ թողել և այլազան արորներ։<sup>2</sup>

Այժմյան Խորհրդային Հայաստանի յերկու աչքի ընկնող քաղաքների, Յերևանն ու Լենինականը, առաջինի այցիները, յերկրորդի «գեղացոց թաղաքներ» անցյալի քաղաքներից ավանդ մնացած մնացորդներ չեն։

Արար պատմիչների և աշխարհագիրների մոտ մենք հանդիպում ենք մի շարք քաղաքների նկարագրությունների, վորոնք ապացուցում են, վոր այդ քաղաքներում յերկրագործական պարապմունքը վորոշ տեղ և բռնել աղաբարնակության արտադրության մեջ։

770 թ-ին Տերկրին Դեռնդ պատմիչի մոտ հիշվում ե վորպես «գյուղակի Արձելը վորպես «գյուղաքաղաք»։ Բերկրի և Արձելի հետագա զարգացման համար այս հիշատակությունները ուղագրավ են։ Խլաթը այդ շրջանում արգելն «քաղաք» եւ Ավան։ և «քաղաքագյուղ» վործ են ածվում միևնույն ժամանակի համար Արձելի մասին։<sup>3</sup>

Նույն և պատկերը նաև հարևան «քաղաքների» մասին։ Այսպես, իրն Հառ Փալը Փայտակարանը նկարագրելիս ասում է.

<sup>1</sup> Թոմաս Արծունի, III գլ. թ. եջ 172։

<sup>2</sup> Շարտարագետ Թ. Թորոմանյանը Աղդ. Հանդեսում (զիքք ԽХI 1912 թ.) լույս է ընծայել մի հետաքրքր հոգված «Անի քաղաք թէ ամրոց»։ Մեկնելով այն հանգամանքից, որ այժմյան Անիի ավերակների վայրը հազեվ ք քառ. քիլ. մ. տարածություն ունի, վոր բոլորովին անբավարար եր մեծ թվով ընակշության ընակալպար ծառայելու, մյուս կողմից նկատի ունենալով մեծ թվով ազատանիի զյությունը, և վերջապես այն հանգամանքը, վոր պարիսպներից զուրու կան ավերակների մնացորդներ, ինչպես յեկեղեցի, գերեզմանատուն, մեկ ք. քիլ. մ. ից ավելի), հուշարձաններ և զամբաններ, ճանապարհ, ավելացնում ե. անպայման հոսումնի վանքը, Բագնայր (Ղողինա), Արջո առին (Արճան զյուլ) և ասոնց նման 4-5-ն մինչև 10 քիլ. մ. հեռագորության վրա այժմ ավերակ զյուղեր Անիի արքարձաններն եյին հետո կազմական կազմական կազմական կազմական անտեսական գործերուն հետո։ Թորոմանյանի այս կարծիքը չի հաստատվում արդյոք Արքստ. Լաստիկիտացիի հետեւյալ վկայությամբ։

<sup>3</sup> Անի ի որ շուրջ զնովաւ զստերը իւր առաւել յամբարտանութիւն կրթեալ ընդդիմ երկնելի կայթս հարկանէննէ։ (Արքիստ. Լաստիկ գյուղացի գյուղեր Անիի արքարձաններն եյին հետո կազմական կազմական կազմական կազմական գործերուն հետո։ Թորոմանյանի այս կարծիքը չի հաստատվում արդյոք Արքստ. Լաստիկիտացիի հետեւյալ վկայությամբ։

Պրոֆ. Ն. Մատը, Անիի ավերակները «Արտաքած ամսագրում № 8, 1911 թ. եջ 662։

<sup>4</sup> Դ. և ո՞ն դ. Գլ. լու եջ 146։

«Անվանի քաղաք և ջուրով, ծառերով (անտառներով), այգիներով և միքաբերով, ջրանցքներով, վորոնց վրա ջրաղացները յերզում են»<sup>1</sup>.

Շերեփ Ռողդինը կիվա Ամբդի մասին մեզ թողել և մի հետաքրքիր վկայո թյուն, այն քաղաքի, վորը սուրբացի պատմիչ Դընին մեզ ներկայացնում և առետրականներով լեցուն քաղաք դեռ ևս 769/770 թ-ին<sup>2</sup>:

«Խոյակին վերել գտնված գետին յեղերէները», ասում և պատմիչը, «ներկայացնում են ձմեռուկի և սեխի այգիներ, ուր ամեն մի ընակիչ իր հոգամասը ունի... Ձմեռուկի ժամանակ ընակիները զնում են իրենց պարտեզը շինում են յեղեգի տնակ (kulibe) և մի քանի որ հաճույքի և ուրախության անձնատուր են լինում: Այս քաղաքը կարող և ամբողջ մի բանակի ձմբան ոթեան ծառայելի»<sup>3</sup>:

Այս վկայությունը վորքան վերև մեր առածը հաստատելու տեսակետից հասկանական է, նույյքան և բնորոշ ֆեոդալական քաղաքների ներքին կենցաղի տեսակետից:

Այս բոլորից կարելի յե յեղերակացնել, վոր ֆեոդալական Հայաստանի քաղաքների խոշոր մասը գտնվում եր զեռ ևս, յեթե հնարավոր և այսպիս կոչել, յերկրագործական քաղաք վիճակում: Այս միանդամայն հասկանալի յե, յեթե մենք, առհասարակ, ֆեոդալական շրջանի քաղաքների զարգացման ենք հետևում: Երանք առաջացել են վոչ թե այս հանկարծական ձեռվ, վորին մենք հանդիպում ենք այժմ, որինակ հյուսիսային Ամերիկայում, այլ նրանց զարգացումը ընթացել և բոլորովին աստիճանական և արտադրական ուժերի զարգացման զուգընթաց: Նրանց տիպը աստիճանական այդ զարգացման ընթացքում յեղել և տարբեր:

Անտարակուց, զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող քաղաքներ ևս զոյություն ունեցել են Փեոդ. Հայաստանում: Յեթե յերկրագործական քաղաքների տիպը անվանենք առաջին կատեգորիա, յերկրորդ տեսակի քաղաքները կարելի յե կոչել առետրական-արհեստավորական քաղաքներ: Մեր ուսումնակարության ընթացքում մենք աչքի տուածնենք այս վերջին տիպի քաղաքները:

Ինչպես ստորև կտեսնենք, մենք ունենք պատմական վկայություններ մի շարք քաղաքների մասին, վորոնք արտացոլում են վերև մեր արած բնորոշումը:

Յերբ Արիստ. Լաստիվերտացին 11-րդ դարի Կարս քաղաքի մասին ասում է,

«... հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցաւաքէ ամբարեալ»<sup>4</sup>:

և կամ խոսելով 1049 թ-ի Արծն քաղաքի մասին, ասում է,

«... և ծով և ցաւաք երկնէր և առատանայր կրել ի սմազորութիւն իւր»<sup>5</sup>.

<sup>1</sup> Ի բ ն Հ ա ս տ բ ա լ ե զ 244:

<sup>2</sup> Chronique de Denys de Tel-Mahré, յն-ժետիալական պատմությունը ամենահայտնի մասը, պատմությունը ամենահայտնի մասը:

<sup>3</sup> Cheref Oundine, Cheref-Nameh trad. fr. par Bern. Charmoy, t. I. եզ 141.

<sup>4</sup> Արիստ. Լաստիվերտացին թի 44. եզ 61.

<sup>5</sup> Ibid. Թի. եզ 53:

մեր կարծիքով, այս յերկրորդ քաղաքների հատկանշական վորակութեան և անում պատմիչը:

Ուրիմ, ֆեռդալական շրջանի քաղաքները կաբելի չեմ մի ընդհանուր հայտարարի տակ բերել: Ֆեռդալական Հայաստանի ապագա մոնողրափիկ ուսումնասիրությունները, մեր կարծիքով, պետք է լինեն այս հիմնական բաժանման հիման վրա: Առանց այս տեսակի մերձեցման մենք պիտի հանդիպելինք պատմական վկայություններում վորոշ հակասությունների:

2. Ինչ վերաբերում ե ֆեոդ. Հայաստանի քաղաքների շինության արտաքին տեսքին, յեղած նկարագրությունները կասկած չեն թողնում, վոր նրանք յեղել են նույն ձեփ, վորին մենք հանդիպում ենք ֆեռդալական Ցեղոպայի քաղաքների մոտ: Ֆեոդ. Հայաստանի զրեթե բոլոր քաղաքները առաջացել են բերդերից:

Կարինը, Դվինը, Վանը, Անին շրջապատված են յեղել պարիսպներով<sup>1</sup>: Այդ պարիսպները պաշտպանելով գլխավորաբար իշխանական զյակը, քաղաքի զարգացման զուգընթաց ժամանակի ընթացքում ավելի ընդարձակվել և ամրացել են:

Արենելյան քաղաքների միջնադարյան Ցեղոպայի քաղաքների նման մինելը տեսնում ենք Իրն-Բատուտանի նկարագրությունից<sup>2</sup>:

1717 թ. Պիտոն դը Պուրնը ֆորը Հայաստան այցելելով մեզ թողել և երգումի, Կարսի, Հասան-Բալեյի մասին նկարագրություններ և նկարներ, Վորոնք հիշեցնում են ֆեռդալական Ցեղոպայի քաղաքները<sup>3</sup>:


3. Ֆեռդալական Հայաստանի քաղաքների թիվի մասին խոսելիս, մենք պիտի տոաջնորդվենք, անկասկս, այն բաժանումով, վոր մենք վերև արեցինք: Այսինքն՝ առաջին և յերկրորդ կատեգորիայի քաղաքներ: Մեկնելով այս բաժանումից, մենք յերկու տեսակի սահմանավորում պետք ե տանք ֆեռդալական Հայաստանի քաղաքներին: Ցեղեթ առաջինները տնտեսական իմաստով զյուղաքաղաք են, մենք այդ չենք կարող ասել յերկրորդ տիպի քաղաքներին, վորոնք իրապես հասել են զարգացման այն աստիճանին, վորի շնորհիվ ստեղծվել ե քաղաքի և գյուղի հակագրությունը:

Ցեղեթ այս բաժանումով մոտենանք ֆեոդ. Հայաստանի քաղաքներին, այն ժամանակ պարզ ե, վոր մենք չենք կարող մեծ թիվով յերկրորդ տիպի քաղաքներ գտնել այստեղ: Այս առթիվ պատմագիրների տված վկայությունները պետք ե մեծ զգուշությամբ և վերապահությամբ ողտագործելու Մեր ուսումնասիրության համար խոշոր նշանակություն ունեցող այս հարցի մասին մենք չենք կարող առ այժմ սպառիչ պատասխան տալ: Մասնակի ուսումնասիրություններ հարկավոր են այս հարցի պարզաբանման համար: Ցեղեթ հնարավոր չե վերջնական թիվ տալ այս մասին, ապա կարելի

<sup>1</sup> Խոտանը ի, եջ 188. Պը ո Փ. Ն. Մաս, Անիի ավերակները «Արարատ» ամսագրում № 5, 1911 թ., եջ 399/400:

\* Voyages d' Ibn Batoutah T. I, եջ 146 հն, Paris 1858:

\*\* Pitton de Tournefort, Voyage du Levant, t. II եջ 260, 290 & 380. Ամիգ, Խարբերդ, Վան, Բիթլիս քաղաքների մասին հմտություններ հարկավոր են այս հարցի պարզաբանման համար: Ցեղեթ հնարավոր չե վերջնական թիվ տալ այս մասին, ապա կարելի



յե ասել այն, վոր յերկորդ տիպի քաղաքների թիվը քիչ եր, Այս մասին կարող ե գորոշ ուղեցույց լինել Մատթ. Առահեցիի մի վկայությունը. յերբ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը հունաց կայսեր կողմից Սերաստիան ստանալով իր կարգածները նրան և տալիս, նրանց մեջ հաշվում ե «Թեմարերգ» 72 և զյուղ 4400<sup>2</sup>: Սամուել Անեցին որպանց վրա ավելացնում ե նաև «8 քաղաք»<sup>3</sup>:

Ցեթե վորոշ վերապահությամբ մոտենանք Հայաստանի հարավում մատնանշված այդ 8 քաղաքներին և մի մասը առաջին կատեզորիայի հաշվենք, այն ժամանակ տարանցիկ առեսուրի հանգույց հանգիսացող զավառում մենք ավելի քիչ թիվով յերկորդ տիպի քաղաքներ կունենք: Ցեթե հարավում այդ եր զրությունը, Հայաստանի միջնաշխարհում և հյուսիսարևմտությունում, մեր կարծիքով, այլ չեր պատկերը: Ուստի, ֆեոդալական Հայաստանի հազարավոր քաղաքների մասին խոսելը և կամ պատմիչների այս մասին տված վկայությունները անքննադատորեն յուրացնելը, նշանակում ե անտեղյալ լինել ֆեոդալական Հայաստանի արտադրական ուժերի զարգացման չափին<sup>4</sup>:

4. Ինչ վերաբերում ե քաղաքների ազգաբնակության ընդհանուր թիվին, այլազան ազնուների միջոցին պատմիչների տված տեղեկությունները՝

<sup>1</sup> Մատթ. Առահեցի, եջ 41, Վազարշապատ 1898:

<sup>2</sup> Մատթ. Առահեցի, եջ 104, Վազարշապատ 1893. համաձայն Յահան Ռուսի վկայության՝ բերդերի շանակը ցույց է տրվում միայն ավելի քան 40. հմտ. Ա. Ակուլյան, Einverlebung armenischer Territ. եջ 41:

<sup>3</sup> Թռ գչչ անը (Die innere Zustände u. s. w. եջ 41) հիմնվելով Յաքուտի և Իջնալ-Ֆարենի տեղեկությունների վրա, ընդունում ե, վոր Փեոդ. Հայաստանում յեղել են «18,000 փոքր ու խոշոր քաղաքներ» և վոր միայն «Արաբսի յեղերը» 1000 քաղաք»:

Մարդկարությունը հետեւալ նկատողությունն ե անում այս մասին. «Յագուարը, վոր իջնալ-Ֆարենից արտագրել ե, վերջնույն աղյուրը կազմում ե նշանազոր Ամեն իջն վազին ալ-Յագուարին: Իջն ալ-Ֆարենի մոտ ամբողջ վկայությունը հետեւալն ե (ԴԳ 1 թ). առն (իջն վազինը) տեղեկացնում ե, վոր իշխանությունների թիվը (Հայաստան մամալիքահայի) 113 ե (Յագուար 118), վորոնց մեջ ե զանկալու իշխանությունը (առ Սարեր, Ազգարենի յերկեր, վոչ Հայաստան), Աղվանցից աշխարհի և Բաք-ալ-Ազգարի (Դարբանդի) միջև նա պարունակում է 18000 զյուղեր (զարյա): Աղվանը Հայաստանում առաջին իշխանությունն ե. այնաւելի կան 4.000 զյուղ: Նրանուականից շատը գահակալող տիրող զյուղերն են: (Ֆարենը ավելացնում է). Մասայց իշխանների մոտ 4000-ը անցնում են և միում նո գահակալող իշխանություններ (գյուղերի թվեց) ցածք:

«Իջն ալ-Ֆարենը Յագուարի մոտ (II ՎՎԶ. և II ԱՂ 1—5) պատմում ե մի լեզնատա, վորի համաձայն նախապես Արաբսի մոտ Հայաստանում յեղել են 1000 քաղաք, վորոնք կործագել են, վորովհետ մի Մօվսես մարգարեյի հանգեղ վատ են վերաբերվել: Նման անքննազատական տեղեկություն վոյ մի արժեք չունիք»:

Հոգհ. կաթողիկոսի մոտ այն վկայությունը (եջ 176) թե Աշոտ լ-ը «յարդարէր յաշ-խարհի տերության իւրոյ, յօրինաւած տանց իւրոց, քաղաքաց, շինից—զաստակերտաց» պետք ե ընդունել, մեր կարծիքով, այն իմաստով, վոր յեղածների վրա շինություններ ելին կատարվում: Քաղաքները արդյունք են արտադրական ուժերի վորոշ աստիճանի զարգացման և վոյ թե մի իշխանի կամ թաղավորի ցանկության:

իսղոր առարկա քաղաքի ազգաբնակության մասին չեն կարող վորեալ հիմք ծառայել<sup>1</sup>,

Ուստի, քաղաքների ազգաբնակության քանակի մասին ևս մենք հնարավուրություն չունենք թվական տվյալներ տալ:

Մասնավորաբար, ոտար ժողովուրդների արշավանքների ժամանակ քաղաքների գրավման առթիվ ջարդված և գերի տարված ազգաբնակությունը ընդունել վորպես խնդրո առարկա քաղաքի ազգաբնակությունը, մեր կարծիքով, պիտի լինի բոլորովին սխալ Հայտնի յէ, վոր նման վառնդների պահուն դաշտային անպատճապար ազգաբնակությունը խուժում երայն վայրերը, վորոնք կամ արվեստական և կամ բնական ամրություններ եյին կազմում Ֆեռոյալական Հայտնատանի քաղաքների մասին մեր հանած յերկրորդ յեղակացությունը ցոյց տվեց, վոր նրանք գրիթե բոլորը պարսպաներով շրջապատված՝ ներկայացնում եյին իրանցից ապահով վայրերը. Վոր դաշտային ազգաբնակությունը վտանգի պարագաներում նման ապահով վայրեր եր ապաստանում, պարզ յերկում և պատմիչների վկայություններից.

Արբաստ. Լաստիվերտացին յերբ պատմում է Սելջուկ-Բուրքերի Խորձ-յանում և Հանձիթում կատարած արշավանքների մասին, մեզ հաղորդում ե.

«Բաղում և անհամար հոգիք ի վերապոյն դաւառացն, վասն տղիհացն ամրութեան՝ անդր ժողովին էին...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Միշաբը ուսումնական թյուններ ընդունելով այդ աղետների ժամանակ պատմիչների տվյալ տեղեկությունները վորպասի վավերական, մենք հայտնում են, վոր 11-րդ զարուհի Անդիք աղջարնակությունը յեղել է 100,000 հոգի, Դվինի ազգաբանակությունը՝ 70,000—150,000 հոգի: Արդ բազարը նույնիսկ 300,000 !! Փօրփը 150,000-ը 1049 թվին ջարգագում... Համաձայն Թբիլիսից պատմիք Թբիլիսի, արարացիները Դվինը զրավելու ժամանակ 12,000 մարդ սպասել են և 35,000 հոգի գերի տարեկ: Սա: Որբենային հաստարակիչ՝ Շահնազարյանը (լ, ծառող. 3, էջ 297/298), Սյանյաց Մշբառ իշխանի թագավոր լինելու առթիվ, հայ նախարարների միջն տիրող անմիաբանությունը վորպալուց հետո, (ի հարկե չեր կարեկի սպասել նրանից, վոր հասկանար թե այդ յերեսոյթը Փեռողայիկան շրջանի յուրահատուում մի զրություն եր)հիմքվելով Մշբառ Գունատասազի և Սա: Որբենային տվյալ տեղեկությունների վրա, պայմանական աշշիվներ կատարելով, զավասի ե այս իշղակացության, վոր Բագրատունյաց հարսաւություններ զուրու զանովով զավասների հայերեւ յեղել են Յ միլիոն ... Այսպիսի յիշրակացություն կարող է միայն ազգայնական սպակուլացիայից առաջանալ:

Պարփ. Հակոբ Մանանդյանը (Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական շրջանում, էջ 30) թեև Արծին քաղաքի ազգահնակության համար իր տված թիվը՝ 300.000 հոգիի մասին կառկած ե հայտնութեամբ, այնուամենայիվ թեքված ե սրբ մռամ մի թիվ ընդունել, քանի զոր նույն թիվուն անանական ե գտնում նաև Անիի համար (էջ 90), և ավելացնում ե աշեալիք քանի համանական է, որով այդ քաղաքաների իրանց ընակառության քանակով շատ մեծ են յեզ կեր, քան միջնադարյան յերպական քաղաքները (էջ 90). Մեր կարծիքով ֆեոդալական Հայաստանի քաղաքաների մասին հայտնված այս կարծիքը առաջնում է նրանց քարգավաճանանութեամբ:

Բերված թվերի մասին հմտ. Թոգմա Արքունիք, III, Դլ. իր. էջ 231. Տարա-  
բ, III, 4 չ 190. Յաքուտ, VII, 176. Ն. Մառ, «Արարատ» ամսագիր, № 6, 1911 էջ  
482. Կերինոս II, 518, 9. Մատթ. Աւանի էց ի, էջ 103. H. Tordeschian, Polit. u.  
Kircheng. u. s. w. էջ 170. Հակոբ Մանանդյան, Հայաստանի պատմությունը Թուրք-  
ըաթարական շրջանում, Եթերնան 1922, էջ 30, 90:

<sup>2</sup> U. P. *h. u. m.* I. *m. n. m. h. q. h. p. m. m. g. h.*, *q. f. d. q. h. q. 64.*

Նույն պատմիչը ավելի վորոշակի ասում է գաշտային, անպատճառ ազգաբնակության գեղի քաղաքների խուժումը, յերբ նա պատմում է 1055 թ-ին Սելջուկ-թուրքերի Անիի վրա հարձակումը.

«Յորոց հինէն մարդաբնակ տեղիքն փախուցեալ՝ ի քաղաքն Անի ժողովցան, և ոչ ժամանեալ ամեննցուն ժամանել, քանզի երկոյացաւ ժամն և ածին զգրունս քաղաքին»<sup>1</sup>.

Կարին քաղաքի 1241 թվին թաթարների կողմից զրավելու առթիվ կիր. Գանձակիցի պատմիչը հազորդում է.

«... և զի յոյժ բազմամրոխ էր քաղաքն ի ժամանակի յայն-միկ՝ լցեալ քրիստոնէիւք և տաճկօք, և այլ ամենայն գաւառն անզր հաւաքեալ էր ...»<sup>2</sup>

Նույն պատմիչը թաթարների Կայան բերդի զրավման առթիվ հայտնում է.

«... և կին և ամենայն բնակիչքն գաւառին ամրացան և նո-քա շուրջ զբերգովն»<sup>3</sup>.

Մեր կարծիքով, նույն իմաստով պետք է հասկանալ Մատթ. Ռւուհեցու այն վկայությունը, վոր վերաբերում է Արծն քաղաքի 1049 թ-ին գրավման և ըստ այն զնահատել այս մասին պատմիչին հազորզած թվական վկայությունը տիրոք ըիր հնգետասանն ...»<sup>4</sup>.

Պատմական այս վկայություններից պարզ կերպով յերեսւմ է, վոր նման ազետների ժամանակ քաղաքների ազգաբնակություն ցույց բրկած այդ թիվերը միայն այդ քաղաքների բնակչության չեն վերաբերում Ռւստի, անքննազատորեն ողսագործել այդ թիվերը և հարյուր հազարների հասնող ազգաբնակություն ցույց տալ այդ քաղաքների համար վոչ թե չի համապատասխանում պատմական ճշտության, այլ և զուրկ ե տնտեսական հիմունքներից:

Ավելորդ չեր լինի այստեղ մի քանի թիվեր բերել ֆեոդալական Ցե-րպայի մի քանի քաղաքների ազգաբնակության թիվի մասին: 1500 թվին Գերմանիայի Դրեզդեն քաղաքը ունիցել է 4000 բնակիչ: Միջնադարի վեր-ջում Ֆրանքֆուրտ քաղաքը ունիցել է 10.000 բնակիչ<sup>5</sup>: Ամենաշատ բնակ-չությունը յեղել է 25.000 հոգի:

Ցեթե տնտեսական նման պատճառներ առաջ են բերում նմանորի-նակ յերկութիներ, և այդ այդպիս և, ապա ֆեոդալական Հայաստանի քա-ղաքին հարյուր հազարների բնակչություն վերաբերումը թե մեր առաջ բե-րած պատմական վկայություններով և թե ֆեոդալական Ցերպալի քաղաք-ների ցույց տված պատկերով, պարզվում է, վոր այդ հարյուր հազարներից

<sup>1</sup> Արիստ. Լատա. Գլ. ԺՀ. եջ 23:

<sup>2</sup> Կիր. Քանձակեցի, Գլ. լր. եջ. 152:

<sup>3</sup> Ibid, Գլ. իջ, եջ 136:

<sup>4</sup> Մատթ. Ռւստահեցի, եջ 103:

<sup>5</sup> Horst Jecht, Studien u. s. w. Vierteljahrsschrift f. Sozial. u. Wirtschaftsgeschichte XIX Bd. 1-8 Hft 1926, եջ 60/61:

շատ հաղարներ պետք և կրճատել իրականության համապատասխան մի թիվի հասնելու համար:

Քաղաքների բնակչության քանակը անմիջականորեն կազմած և այդ քաղաքի տարածության հետ:

Արար պատմիչ Խոտաբրին հաղորդում ե, վոր Աստրեյջանի եմիրի նոտած քաղաքը, Արդարիլը 2/3 քառակուսի փարսախ<sup>1</sup> տարածություն ունեցել ե: «Դարձիլը=Դվին Արդարիլից տվիլի խոշոր եր»<sup>2</sup>: Առողջի մոտ մոտավորապես 770 թ-ին Դվինը կոչվում ե «լայնանիստ քաղաք»<sup>3</sup>: Խոտախրին Բարձավի մասին հաղորդում ե. «անսովոր խոշոր քաղաք ե. ավելի քան մի փարսախ յերկարություն և նույնքան լայնություն ունի»<sup>4</sup>:

Ֆեոդալական շրջանի քաղաքների տարածության մասին խոսելիս, պետք և նկատի ունենալ և այն հանգամանքը, վոր քաղաքներում խոշոր տեղ ելին գրավում պարտեզներն ու այդիները:

Համաձայն Պրոֆ. Ն. Մասի հետազոտությունների, Անիի ավերակները գրավում են 150 գեոյատին<sup>5</sup>:

Դվինի և Անիի մասին այս վկայությունները գալիս են ապացուցելու, վոր ֆեոդալական Հայաստանի քաղաքների բնակչությունը չեր կարող հարյուր հազարների հասնել:

Առաջավոր Ասիայի քաղաքների մասին խոսելիս, մենք չպետք ե մոռանանք մի եական հանգամանք: Այդ քաղաքները այլազան ժամանակներում, նույնիսկ մի գարագրչանում, ունեցել են տնտեսական բոլորպին այլ պատկեր: Ուստի, մի վորեն քաղաքի մասին խոսելիս, առաջին հերթին պետք ե ճշտել ժամանակը:

Այժմ մնում ե մեզ պատասխանել այն հարցին թե քաղաքների բարգավաճումը ի՞նչ ազդեցություն ունեցավ ֆեոդալական Հայաստանի հաստարակական փոխհարաբերությունների վրա:

ա. Նախորդ զլիսում, յեթե մենք խոսեցինք հողատիրական կենտրոնացման և այս յերկույթի արտադրող գասի վրա արած ազդեցության մասին, այնտեղ ցույց տվինք քաղաքների ֆեոդալների կողմից վերցված ծանը հարկերը, վորոնք ծանր կացության ելին մատնում արտադրող գյուղացիությունը: Նման տնտեսական պայմաններում, ամենայն հավանականությամբ, գյուղացության մի մասը ստիպված եր լինում գաղթել քաղաք, վորտեղ անաշխատ սպառողների բազմությունը կարիք ուներ աշխատող ձեռքերի:

<sup>1</sup> Փարսախ, վորի հին հայկական ձեր հրասախ ե, (Հմմա, Hübschman, Altarmenische Gramm. 183 № 357) պարսկական բառ ե կույց և առլիս 3740 քայլ (Schritten) կամ 30 Տաճեն. Համաձայն Տոմաշեկի (Zur hist. Topographie von Persien I 7, SBWA Bd. 102, էջ 149) փարսախը թ. 123 մետր ե: Արա մոտենում և Տօռսեհ շ-ի արած հաշիվը՝ I փարսախը = 6 քիլ. մ. (Revue du monde musulman Bd. 11, 1911 էջ 160): Համաձայն La grande Encyclopédie Արքայանների շրջանում I փարսախը = 4 քիլ. ժ.

<sup>2</sup> Խորա խորի, Մարկվարտի թրդմ. (անտիոք) էջ 181=182, 188.

<sup>3</sup> Դ. Ա. Զ. դ. Գլ. լո. էջ 141:

<sup>4</sup> «Արքայանները ամսագիրը, № 7, 1911 էջ 568.

Վերև քաղաքների բնակչության մասին խոսելիս, մենք մեջ ըերինք մի շարք պատմական վկայություններ, վորոնք վորոշակի ցույց երին տալիս, վոր աղեաների ժամանակ անպաշտպահ, դաշտային բնակչությունը խուժում եր գեղիք պարիսպներով պաշտպանված քաղաքները. Անհավանական չեր, վոր աղեալը անցնելուց հետո, զյուղացիության մի մասը հաստատվեր տեսական կերպով այդ քաղաքներում. Մանավանդ յերբ նկատի ունենանք, վոր ֆեռդալական Հայաստանի աշխարհագրական գիրքի պատճառով նման հարձակություն հաճախակի տեղի երին ունենում. Ազատ զարձնող քաղաքը հրապուրիչ մի վայր եր մասնավորաբար զյուղացիության այն շերտի համար, վոր հնարավորություն ուներ այլազան միջոցներով տերերի համար կատարելիք պարտադիր ծառայություններից պահավել.

Անտարակույս, քաղաք գաղթող թէ չքափոր և թէ ունեվոր զյուղացիության խոշոր տոկուր սկզբնական շրջանում զեռ ևս կտպված եր մնում զյուղի հետ:

բ. Ցեթե առաջին անդրադարձումը լինում եր ազգարնակության տեղափոխության բնագավառում, ապա յերկրորդ անդրադարձումը կարելի և նիշել շահագործման սաստկացում:

Ֆեռդալական տնտեսության հիմքը կազմում եր ծախսելը: Փողը գոյություն ուներ ծախսվելու համար: Արտադրական ավելի բարդ փոխհարաբերություններում, ինչպիսին իրանից ներկայացնում և քաղաքների բարգավաճումը, ավելանում երին այդ քաղաքի ֆեռդալների պահանջները: Հարկավոր եր այդ պահանջները բավարարել: Ապրանքափոխանակության այս շրջանում զգալի յեր գառնում փողի սուր կարիք: Այդ ֆեռդալները բոլորովին կտրված զյուղացիական տնտեսություններից, և հեռու մնալով, ինչպիս միշտ, արտադրական աշխատանքից, զյուղում արտադրական ուժերի զարգացման մասին խոսք չեր կարող լինել: Ուստի, այդ ֆեռդալները հարկավոր փողը ճարելու համար պետք ե դիմեյին հարկերի քանակը:

Թէ գեղիք քաղաք գաղթը և թէ հարկերի ծանրացումը իրենց սուր կողմով ուղղված երին շինական դասի դեմ:

Մի կողմից գեղիք քաղաք գաղթը և կամ զյուղացիության մի մասի պարագարի ծառայություններից աղատվելը ֆեռդալի հողերի վրա աշխատող բազուկների թիվը նվազեցնում երին. մյուս կողմից ֆեռդալի փողի սուր կարիքը շահագործումը հասցնում եր ավելի մեծ համեմատությունների: Տնտեսական ստրկացած շինականը և կամ հողագուրկ զյուղացին սոցիալական տեսակետից դառնում եր ստրուկ<sup>1</sup>: Ֆեռդալական Հայաստանի տնտեսական կյանքում տեղի ունեցող այս պրոցեսը կստարվել և աստիճանաբար և մենք կանում ենք նրա մասին վկայություններ հետագա դարերում:

1224 թ-ին Դադի վանքի արձանագրության մեջ կարդում ենք.

<sup>1</sup> 14-րդ և 15-րդ դարերին Գերմանիայում տեղի ունեցած այս պրոցեսի մասին հմտ. F. Engels, Die Entwicklung des Sozialismus von d. Utopie z. Wissenschaft, էջ 64 հն 1929 Berlin

«... Ես Գրիգոր որդի Հասանայ, որ մեծաւ յուսով տուի Դաղի գերեզմանս չորս ոռւն օֆինական հոգւոյ իմոյ ...»<sup>1</sup>

1272 թ-ի Բագնայրի արձանապրության մեջ կարդում ենք.

«... Ես Խաւուզ ... ի Բգներս տվի, յԱստուածածինս, զվերի էզին իւր ընձանովն, բ. օֆինական, զՄերեւան և զԽաչատուր, Դուլուսին փեսայն, իւրենց հողովն ու ջրովն ...»<sup>2</sup>

Հետագա յերկու արձանապրությունները ուշագրավ են այն տեսակետից, վոր շինականներ նվիրվում են առանց հողի. այս միանգամայն աղացուցում են նրանց ստրկական վիճակի ծանրությունը:

1243 թ-ի Հաղբատի արձանապրությունից.

«... Ես Թաւիթ ... հաստատեցի սուրբ Սարգսի մուտքն զկաթանցն այգին իւր մազրովն և գ. օֆինական ...»<sup>3</sup>

1244 թ-ի Աստուածընկալի (Արարատում) արձանապրությունից.

«... Ես Թուրդ իշխանաց իշխան ... տուաք ընծայ զմեր այգին ի Փարբի, ա. խունցան յԱւշական, ա. այգի ի Կարբի, ա. օֆինական, գ. ողջատուն ...»<sup>4</sup>

13-րդ դարի վերջերին Սյունյաց յեպիսկոպոս՝ Ստ. Որբելյանը, մեղ թողել և մի արձանապրություն, վորից պարզ յերեվում ե, վոր շինականները իւրենց մշակած հողի հետ վաճառքի նյութ են դառնում.

«... Եւ ընծայեցի ի սոսա (Նորավանքի յեկեղեցիներին) զիմ հալալ հայրենիքն և զգանձագին զիւղն Զուայ իւր ամեն և ահմանօքն, հողով և ջրով և այգեստանեօք և բոլոր բնակչօք, զոր գնեալ է իմ յիմ եղբօրէն ...»<sup>5</sup>

Այս վկայությունները կասկած չեն թողնում, վոր 13-րդ դաշտում շինական դասը սոցիալական տեսակետից գտնվել ե ստրկական վիճակում: Խսկայս, արդյունք եր աստիճանական այն պրոցեսին, վոր տեղի եր ունեցել նախորդ դարեւ ուժ:

Գ. Քաղաքային կյանքի առաջ գալը տնհնտեանք չեր թուում հոգեորական դասի վրա: Ապրունքափոխանակության զարգացման շրջանում հայ յեկեղեցին ևս յենթարկվում եր փոփոխությունների: Յերբ մի ժամանակ ասկետական կյանքը զրագում եր հոգեորականներին և քաշվում եյին հեռավոր վանքեր, հեռի աշխարհիկ ժխորից, այժմ յերբ ստեղծվել եյին քաղաքներ և քաղաքային պերճանքի և ճոխության կյանք, մենաստանները քաշվածները սկսում են քաղաք հավաքվել և մասնակից լինել աշխարհիկ կյանքին: Այս կերպ նախկին սակետիզմին հաջորդում եր հոգեորական դասի աշխարհականացումը:

Այս առթիվ 1022 թ-ից հովհաննես կողեռնի անհեծքում կարդում ենք հետեւ հատկանշական տողերը.

<sup>1</sup> Վ. ի մական Տարեգիր, էջ 68:

<sup>2</sup> Ibid, էջ 104:

<sup>3</sup> Ibid, էջ 85:

<sup>4</sup> Ibid, էջ 87:

<sup>5</sup> Ստ. Որբելյան, 11, գլ. համ. էջ 241.

«...կրօնաւորք թողուն զանապատս և գմհնաստանս և յաշնաբին դրազումս դեկերին և շրջին ընդ փողոցս և ի ուշ կանչնց ...»<sup>1</sup>

Մի դար հետո Ներսես Շնորհալին ստիպված և լինում իր ընդհանրական թղթում ավելի զառնությամբ խոսել այս մասին.

«Են ոմանք դարձեալ յաշխարհասէը և ի մեղկ կրօնաւորաց ... անձամբ իսկ ընդ աշխարհականս բնակեն ի գիւղս և ի քաղաքս, և ի բանից բերանոյ գարշութիւնս և ի գործ վատթարութեան, և յորովայնամոլութիւնս անպատկառս, և յարբեցութիւնս անսառակա, և յամենայն անկարգութեանց բերմունս առաւելուն քան զնսուա»<sup>2</sup>.

Ցեկեղեցիի աշխարհականացման այս յերեսոյթը, վոր անմիջականորեն կապ ուներ ապրանքափոխանակության հետ, փողի սուր կարիք եր առաջնում: Հոգեոր իշխանների աշխարհիկ պահանջները բազմանում եյին: Հոգեորական զասը վերտնում և գտնում եր բազմաթիվ կերպեր քրիստոնեական հավատքը ապրանքափորելու և ստեղծելու գրամտկան միջոցներ: Հետաքրքիր ե այս տեսակնիւթից Աշու Հովհաննիսյանի մյուսոն ը ապրանք գառնալու շուրջ կատարած ուսումնասիրությունը<sup>3</sup>:

Այս կերպ առաջանում ե մի ուրիշ յերեսոյթ, վոր զալիս ե, ավելի սաստկացնելու արգեն դոյցություն ունեցող շահագործումների չափը:

գ. Ցեղողական Ցերոպայի քաղաքներում սոցիալական տեսակետից դոյցություն ունեցող հակագրությունների մասին հատաքրքիր մի ուսումնասիրություն ե մեր կերեւ հիշած Հորստ Ցեխտի հետազոտությունը: Թվական տվյալներով նա կարողանում ե ապացուցանել վոր միջնադարյան Ցերոպայի քաղաքներում չե տիրել սոցիալական ներդաշնակությունը<sup>4</sup>:

Մեր կարծիքով, այլ չեր կարող լինել պատկերը ֆեղալական Հայաստանի քաղաքներում, յեր նկատի ունենանք այդ ազգաբնակության պարապմունքները և սրանցից առաջացող նյութական հարստության տարրեր սատիճանները:

Վորոշ մարդկանց մոտ առեւրական և վաշխառուական կապիտալի աշխուժացումով կուտակվող այդ հարստությունն իր հերթին մի այլ հակագրություն առաջանում եր քաղաքի և գյուղի միջն: Մի հակագրություն, վոր իր արտահայտությամբ, կարելի յն ասել, ամենից ավելի քայլայիշն եր մանը զյուղացիական տնտեսությունների համար:

Սակայն, նախ քան այս հարցի քննությանը անցնելը, հարկավոր ե ծանոթանալ քաղաքի արհեստավորության հետ, վորպեսզի կարողանանք վորոշ չափով լրիվ պատկեր ստանալ քաղաքի երի զարգացման մասին:

1 Մատթ. Առանցեցի, հջ 53:

2 Ներսես Շնորհաւութիւն, Ընդհանրական թուղթը. Ցերուսաղիմ 1871, հջ 19:

3 Աշու Հովհաննիսյան, եղմիածնի նվիրագետության շուրջը. «Խորհրդ. Հայաստան» Որաթերթ 1926 թ. սեպտ. 22/23 Խ. 1568/1569:

4 Horstj e c h t. Studien u. s. w. Viertel. f. Soz. u. Wirt-gesell. Bd XIX, 1-3 Heft. 1926, հջ 48 հն:

### III. ԱՐՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԵՌԴ. ՀԱՅԱՏԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ֆեռդ. Հայաստանի արհեստավորական արտադրությունը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ունեցել և այլ ձեսակերպում և բովանդակություն։

Յեթե սկզբնական շրջաններում նախանյութի վերամշակումով ինչպես արտադրական այլ բնագավառներում աշխատողները յեղել են հոգեոր և աշխարհիկ իշխանների վանքերում և զգյակներում ծառայողներ, նույնը չհկարելի ասել ֆեռդական այն շրջանի մասին, յերբ ստեղծվել եր քաղաքյին կյանքը։

Վոր հոգեոր և աշխարհիկ իշխանների անմիջական կարիքներին բարարող արհեստավորական մի դաս զոյություն ունեցել և վանքերում, մենք բավականանում ենք այստեղ մի վկայություն բերել Ալ-րդ դարուց։

«Այս բազմերշրջանիկ եպիսկոպոս (Տեր Հովհաննես) ... զարդարեաց զ Տաթէ զանազան զարդուք... նաև յոզնապատիկ արհեստաւորօք»։

«...Այլ զամենայն շինուած վանացն այրեցին և քակեալ յատակեցին զգործատներն...»<sup>2)</sup>

Սո. Որբելյանի այս վկայությունը, վորը վերաբերում և վանքերում գոյություն ունեցող արհեստավորների և գործատուների, շարունակությունն և անշուշա այն դրության, վոր զոյություն և ունեցել ավելի մեծ չափերով նախորդ գարերում։ Յեթե սկզբնական շրջանում արտադրական աշխատանքի մեջ առաջացած բաժանումը, սպառողների մեծ չափով քաղաքներում կենտրոնացումը, ապրանքափոխանակության շրջանի հատուկ տնտեսական կարիքների բազմազանությունը առաջ եյին բերում արտադրության այս ասպարեզում աշխատանքի մի նոր կազմակերպություն, վոր իր հերթին անմիջականորեն անդրադառնություն և ազգաբնակության սոցիալական շերտավորման վրա։

Մասնաւորաբար, քաղաքներում առաջացած այս փոփության կողքին դեռ ևս շարունակվում եյին զյուղական անտեսություններում արտադրության ասպարեզում տնայնազործական այն ձեր, վորին հանդիպում ենք մինչեւ մեր որերը։ Մյուս կողմից քաղաքների այն տեսակները, վորոնց հայութ զլիում անվանեցինք յերկրագործական քաղաքներ, ըստ ինքյան հասկանալի յե, վոր նման քաղաքներում առաջացած այս փոփոխությունը խոշոր անդրադառնություն չեր կարող ունենալ նրանց ազգաբնակության սոցիալական շերտավորման վրա։ Հիմնական փոփոխությունը

1) Տես սկզբը Տեղեկազրին 2-րդ համարում։

2) Սո. Որբելյան, II, գլ. Ֆ. եջ 55—56, 57.

առաջանում եր այն քաղաքներում, վոր մենք անվանեցինք արհեստավուական-առեստրական:

Արտադրական աշխատանքի մեջ առաջացած այս փոփոխությունը ինչպէս եր կայանում:

Ֆեոդ. Հայաստանի ապրանքափոխանակության շրջանում առաջանում եր ազգարնակության մեջ մի շերտ, վոր բացառարար պարագում եր նյութի վերամշակումով (և այլ կարգի շինություններով) և վոր զիմավորն և արտադրական աշխատանքը նոր կազմակերպություն եր ստանում և արտադրական միջոցների սեփականատիրական նոր փոխհարաբերություններ ելին ստեղծվում:

Առաջ եր գալիս արհեստավորական դասը:

Այստեղ մեղ հետաքրքրում են հետեւյալ հիմնական հարցերը.

ա. Ի՞նչ տեսակի արհեստաներ գոյություն ունեցին.

բ. Ի՞նչ աստիճանի վրա յեր գտնվում արտադրողականությունը.

գ. Ո՞ւմ համար եր արտադրում արհեստավորը և ի՞նչ չափով կապված եր շոկայի հետ:

դ. Ի՞նչ եր ներկայացնում իրենից արհեստավորական դասը սոցիալական տեսակետից.

Այս հարցերի պատասխանները մեծ չափով կապված են այն պեղումների հետ, վորոնք կատարվելու յեն ֆեոդ. Հայաստանի քաղաքներում: Շեշտ և, այն պեղումները, վոր մինչև այժմ կատարված են, շատ քիչ են այս հարցերին վկանատար պատասխան տալուց: Մակայն, մենք կարծում ենք, վոր թե մատենադրական վկայություններում և թե կատարված մասնակի այդ պեղումներից մենք ունենք այնպիսի փաստեր, վորոնք մեղ հնարավորություն կտան, իր ընդհանուր զծերով, բնութաղրելու արհեստավորական արտադրությունը:

ա) Յերր 1064 թվին Անին Սելլուկ-թուրքերի կողմից զրավում ե, քաղաքի «արուեստագետները» գերի են տարվում: <sup>1)</sup> Նույն պատմիչի մոտ 1254 թ. ի մասին մենք ունենք հետեւյալ ուշադրավ վկայությունը: Խոսքը վերաբերում է թաթարների կողմից զրված հարկերին.

«...Այլ և զամենայն արուեստագէտս եթէ ի քաղաքս և եթէ ի գիշու՝ զամենայն ի հարկի կացուցին. այլ և ծովակս և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս և զդարբինս և զշպարաս և զի՞ պետոյ է մասնարար ասել... և զամենայն աղանանսն առին որ ՚ի կողը, և յոր այլ կողմանս: Նաեւ ի վաճառականացն բաղում ինչ ուսեալ և շահեալ, կուտեցին բաղում զանձս ոսկոյ և արծաթոյ և ականց պատուականաց»<sup>2)</sup>

Կիրակոս Պանձակեցու այս վկայությունը վոչ միայն նախանյութի վերամշակման տեսակետից ուշադրավ ե, այլ և ընտկոն հալսուառթյունների

<sup>1)</sup> Կըր. Գանձակեցի, զլ. ին. եջ 139.

<sup>2)</sup> Ibid., զլ. Ծև. եջ 210:

շահագործման և առետրական կապիտալի մասին մի հետաքրքիր փաստ է:

Դարբինները և ներկարարները հիշատակելուց հետո, պատմիչը պետք չի տեսնում մանրամասն տալ գոյություն ունեցող արհեստավորների ցուցակը. «զի՞ պիտոյ է մասնաբար տարի»:

Ցեմե արտադրության սուրյականների, արհեստավորների, մասին չունենք մանրամասն տեղեկություններ, ապա ունենք նրանց արտադրությունների, որյեկտների, մասին մի շարք վկայություններ, գորոնք անմիջական փաստեր են նրանց արտադրությունների մասին:

Բատախորի և Իրն Հառուքալ արար պատմիչներից խմանում ենք, վոր Դիլին քաղաքը իր հյուսվածեղիններով նշանավոր եր<sup>1</sup>): Նրա այսպիս կոչված մարիցի հագուստաները և կերպասները (այծի մազից կամ ազնիվ բրդից պատրաստված), ինչպիս նաև գորգերը, բազմոցները, քողերը, վարագույրները մեծ համբավ եյին վայելում: Մայաֆարիքինին հայտնի յիր իր անձնուցներով:

Անիում զանվել են մետաքսե, տանգնագործված հագուստներ, քողեր և գոտիներ, վորոնք իրենց թանկարժեք և նուրբ աշխատանքով զարմանք են առաջ բերում<sup>2)</sup>:

Մարքո Պոլոն իր հայտնի զրքի XX-րդ գլխում խոսելով Թուրքմենիայի մասին (այժմյան Թուրքիան), մեզ տալիս ե այսուղ ընակող հայերի մասին շահեկան վկայություններ: Նրանք պարապում են տանտուրով և արուեստներով: ասում ե շինում են ամենանուրբ և աշխարհի ամենազեղցիկ զորդերը: Գործում են ճախ և բազմագույն մետաքսյա կերպասներ: Պատմիչը ավելացնում է. «Եթ բավականին ուրիշ բաներ ևսում») կերակոս Գանձակեցիի նամն կարճ և կապում:

Մարքո Պոլոյի այս վկա, ությունները, մեր կարծիքով, շարունակությունն են այն գրաւթյան, վոր յերկու գար առաջ ֆեոդ. Հայաստանուն ույություն ուներ և քաղաքական այլական դեսպերի բերումով, մասնա-

<sup>1)</sup> Իր Հառուքալ, եջրած. Խոսակար, եջ 188. Cheref-Ouddine I, եջ 172.

<sup>2)</sup> Ա. Մատ, Անիի ավերակները. «Արարատ» ամսագիր № 8 1911 թ. եջ 659.

<sup>3)</sup> .... Et les autres gens sont Hermans et Grecs (Arméniens et Grecs) qui melléement (du'une manière mêlée) demeurent avec eux (Turquemans) en villes et en chateaux, et vivent de marchandise et d'ars (arts), car il labourent (travaillent) les plus fins tapis et les plus beaux de monde. Encore il labourent draps de soie de diverses couleurs moult beaux et moult riches, en moult grand quantité, et d'autres choses assez. Le livre de Marco Polo par M. G. Pauthier, Paris 1865: I, Ch. XX,-ի. 35—37. Մարքո Պոլոյի Թուրքիայի հայերի մասին տաճ տեղեկությունը հաստատվում է նաև ուրիշ մի ճանապարհորդի կողմից, 13-րդ դարի 50-ական թվականներին. De la Turquie, vous saurez que la dizième partie des habitants n'est pas sarrazine, presque tous sont Arméniens et Grecs<sup>4</sup>. Guillaume de Rubrouck, Récit de son voyage, Paris 1877 p. 294—95.

վորաբար քաղաքի ազգաբնակությունը զաղթում եր Հայաստանից դուրս իր հետ տանելով իր արհեստաները:

14-րդ դարի առաջին կիսում առաջավոր—Ասիայում ճանապարհորդություն կատարած Իրն-Բատուտանից խմանում ենք, վոր Երզնկա քաղաքը այդ ժամանակաշրջանում անվանի յի յեզել իր կերպարներով, վորոնք իր անունով կոչվելիս են յեզել<sup>1)</sup>:

Բերված այս վկայությունները ցույց են տալիս վորոշակի թի Հայաստանը հյուսվածեղենի ասպարեզում խոշոր զեր կատարել եւ:

Հյուսվածեղենի հետ սեր առընչություն ունեցող ներկարարությունը նույն համեմատությամբ գտնվել է ծաղկած վիճակում: Դվինը պատրաստված «Քիրմիզ» ներկը արաբ պատմիչների կողմից քանից գովասանքի առարկա եւ գարձել:

Դվինից մի քանի քիլ. մ. հետավորության մրա գտնվող Արտաշատը, իր ներկարաններով այնքան եր նշանափոր, վոր Բալաստորին կոչել եւ կարսմիր գույնի գյուղը (qarja elqirmiz)<sup>2)</sup>: Համաձայն Իրն մաքինչ Հայաստանում կար նաև Rubia tinctorium:<sup>3)</sup> Կիր. Գանձակեցիի մոտ հիշատակված «շղարաբները» այն արհեստավորներն եյին, վորոնց զրադունքն եր կերպասները ներկել:

Կիր. Գանձակեցին մեղ խոսում է վորոշակի դարրինների և յերկաթահանքերի գոյության մասին: Մետաղագործության ասպարեզում ունենք նույնական բավականին հետաքրքիր վկայություններ, վորոնք ցույց են տալիս արհեստավորական այս ճյուղի բավականին առաջացած վիճակը:

Յերբ 8-րդ դարու յերկրորդ կիսում Արտավազդ Մամիկոնյանը արարների գեմ ապստամբություն եր սարքում, զնում և Խվին մայրաքաղաքը:

«...և ստանայք անդ զէսս և անօթս (զանօթս) պլատիրազմի, և վառէր զինքն զրահիւք և սաղավարտիւք և ամնայն սպառազինութեամբք...»<sup>4)</sup>

Նկատի ունենալով մետաղագործության առաջացած վիճակը, մենք հիմք ունենք ընդունելու, վոր Արտավազդ Մամիկոնյանի դնած այս զինքերը Դվինում պատրաստվել են:

<sup>1)</sup> „...Arzendjan possède des marchés bien disposés, on y fabrique des belles étoffes, qui sont appelées de son nom“. Voyage d'Ibn Batoutah (1325—1349 թթ.) T. II, p. 294, Paris 1854. հմմտ. նաև Marco Poio, ch. XXI, p. 37—38.

<sup>2)</sup> Բալազուրի, I եջ 28. հմմտ. H. Topdschian, Die Innere Zustände եջ 46.

<sup>3)</sup> Իբն Քաբի, եջ 24. գորգաշինության և քիրմիզ ներկի մասին հմմտ. նաև Fr. Stiwe, Die Handelszüge der Araber unter den Abbassiden. Berlin 1836, եջ 184.

<sup>4)</sup> Պատմութեազգ, Ա. լու. եջ 138.

Ն. Մասի Անիում կատարած հետախուզությունները ցույց են տվել վոր պղինձի ձուլարաններ դոյցություն ունեցել են՝<sup>1)</sup>

Պղինձանանքների շահագործության մասին 1247 թ.-ի Զուբառակ վանքի աշտանագործության մեջ ունենք հետևյալ վկայությունը.

«Կամաւն Այ (և) աէր Յորդանան շինեցի զեկեղեցիս ի թվին Աղղ (1247 թ.) իշխանութեամբ Աւազին ողորմութեամբ և տաւք Պղինձանանքն Աստուածոծնի...»<sup>2)</sup>

Վերև հիշած իրն Բատուատահ ճանապարհորդից տեղեկանում ենք, վոր Երզնկարամ հեղել են պղինձի հանքեր, վորից պատրաստելիս են յեղել անոթներ և ժամանակի լարաբանները»<sup>3)</sup>

Մետաղագործության մի ճյուղն եր կազմում նաև վոսկերչությունը, վոր Հայաստանում հասն եր պարզացման բարձր աստիճանին»<sup>4)</sup>

Ն. Մասը պղինձի ձուլարանների մասին խոսելիս, հայտնում ենան, վոր Անիում զոյություն ունեցել են պղուս և անոթներ պատրաստելու գործարաններ<sup>5)</sup>: Պետական թանգարանի Անիի բաժնում ցուցադրված անոթները մի մի հուշարձաններ են այս մասին:

Աղյուսի պատրաստությունը սերտորեն կապված ե շենքերի շինության հետ: Մինչև մեր որերը կանգուն և քայլքայլված յեկեղեցիները, վանքերը, բերդերն ու պարփակները մի մի կինդանի կոթողներ են այս բնագավառում ձեռք բերված հաջողությունների մասին:»<sup>6)</sup> Շարցկովսկին, վոր

<sup>1)</sup> Կ. Մառ, Անիի ավերակները «Արարատ» № 8, 1911 թ. հջ 660—62. Քաղաքի արգյունաբերության զարգացման մասին հմմտ. նաև I. Օրբելի, „Հայալին Անոց“ „Նեվա“ ամսագրում № 5, 1911 հջ 440—41:

<sup>2)</sup> Կ. Կոստանյանց, Վիմական Տարեգիր հջ 92:

<sup>3)</sup> Voyages d'Ibn Batoutah, trad. fr. par C. Desfreméry p. 294 „...Il y a des mines de cuivre avec lequel on fabrique des vases, ainsi que les baïçons“. 263—64 եղի ըրա „baïçon“ բառի մասին հետեւյալ բացառությունն և առավու. „On appelle ainsi une espèce de colonne ou candélabre de cuivre porté sur trois pieds, à son extrémité supérieure il a une sorte de lampe, aussi de cuivre, au milieu de laquelle il y a un tuyau pour la mèche. Cette lampe est remplie de graisse fondu, et on place à côté des vases de cuivre, pleins de graisse, et dans lesquels se trouvent des ciseaux pour arranger les mèches“.

<sup>4)</sup> H. Topdschian, Die Innere Zustände հջ 45—46. I. Mourier, L'art religieux au Caucasse. 1887. «Հանդէս ամսորեա», II 1888 հջ 49—50:

<sup>5)</sup> Կ. Մառ, Անիի ավերակները, «Արարատ» ամսագիր № 8 1911 թ. հջ 660—62:

<sup>6)</sup> Ցեղերաշափական գիտելիքների ասպարդում ձեռք բերված փորձառության մասին արժեք հիշատակել Տաթերի յեկեղեցին մոտ զանգազ սյունը. «...Ան զայս իսկ աւարտեալ զաման մետասան՝ կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ զբանն հարաւոյ մին մի զարմանալի յանուն որբոյ Երբորդությանն է մանը քարանց պատրածեալ ի շափ 30 կանգնոյց: Առ. Արքըլյան, լ, գլ. ԽԱ. հջ 270: Այդ սյունի մասին Բրունի գրումն: „Cette colonne qui s'ébranle quand on s'appuie dessus, subsiste encore: elle a été vue par Chahnameziantz et par M. Abich qui n'a pu m'en expliquer le mécanisme“, Broset, I, p. 134 note 7. Histoire de la Siunie, հմմտ. այդ սյունի մասին նաև Բասարացաց, Մխիթար Գոշի զատաստանագիրք հջ 92 ծանոթ. 162:

հայկական ճարտարապետության յերկու հատոր մի ընդարձակ ուսումնամիբություն և նվիրել, նույնիսկ գալիս և այն յենթագրության, վոր արքայան Յելքողայի վերածնունդի ճարտարապետական վոճը նախ Հայաստանում և զարգացել<sup>1)</sup>

Ասողիկ պատմիչը մեզ հայտնում է, վոր 989 թ.-ին Կոստանդնուպոլսում պատահած յերկրաշարժի պատճառով կործանած Սոփիա տաճարի վերակառուցման որինակը տալիս և մի հայ ճարտարապետ Տրդատ անունով.

«Այլ անդ գիպեալ ճարտարապետին հայոց Տրդատայ քարտազործի՝ տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ գիտապապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զիննելն որ և գեղիցկապէս շինեցաւ պայծառ քան դառաջնոնա»<sup>2)</sup>

Գասպարականում Գագիկ 1-ի որով կտարաված շինարարությունների նկարագրությունները վորոշակի ցույց են տալիս ոյս առարկեզում ձեռք բերված հաջողությունները<sup>3)</sup>

Շինարարական ասպարեզում հիշատակության արժանի են ջրասակալ հայաստանում վոսովման ասպարեզում կանալների ցանցը. Շատ վաղ ժամանակներից հանդիպում ենք այս բնագավառում արտադրյած և մինչեւ մեր որերը պահված ասցորդներին<sup>4)</sup> 10-րդ դարուն վերաբերող վկայություններ ունենք այս մասին Ս. Արքելյանի մոտ<sup>5)</sup> Հետազա դարերի մասին կան նաև այլ վկայությունները<sup>6)</sup>

Շինարարության ասպարիզում կտարաված այս աշխատանքները սերտորեն կապված ենքն վայտի վերամշակման ասպարեզում գոյություն ունեցող արհեստաների զարգացման հետ. Հովհաննես Կաթողիկոսի մոտ հիշատակված հեյտասահաց մասուելք ը և Թովմա Արծրունիի մոտ գործ ածված հեյտանական զործեաց բատերը ցույց են տալիս հյուսնության գոյությունը<sup>7)</sup>

1) Strzygowski, Die Baukunst d. Armenier in Europa 2 Bde. Vien 1918.

2) Ասողիկ, III, զլ իշ, եջ 251.

3) Թովմա Արծրունի, III, զլ. իթ, եջ 252 շար.

4) Հայաստանի կանալիզացիայի մասին հմմտ. W. Belecz, Z.f. Ethnologie 31 Bd. 1899, S. 237. Հովհաննեկը հստաքրքիր տեղեկություններ և տալիս իրազական ժամանակի վերաբերյալ վան, Բերկը, Բայազետ քաղաքների վառողման ցանցի մասին Կանալիզացիայի տեխնիկայի մասին հմմտ. նույն հովհաննեկի հորժածը Jahrb. Frankf. Vergl. f. geographie u. Statistik s. 64—65. S. 127—37.

5) Եերջին ժամանակներս պեղումների ընթացքում Արագած լեռան շրջանում հայտնարերված վոսովման ցանցի մասին տես Ս. Քաջանքարի հողվածը և Նորքը ամսագրում № 5—6, եջ 207—232.

6) Սա. Արքելյան, զլ. 48, զլ. 49.

7) Մինիքար Այրեգանեցի, եջ 58 Մոսկա 1860. Ակմական Շարեզիր եջ 39 և 164.

8) Հովհ. Կաք. զլ. իթ. եջ 300. Թո. Արծրունի, III, զլ. իթ, եջ 256.

Սուրբացի պատմիչ Դրնիի մոտ ունենք ավելի վորոշ տեղեկություններ, վորոնք ավելի նախորդ գարերին են վերաբերում և ցույց են տալիս միաժամանակ հյուսնության արձեստի վորոշ զարգացման աստիճանը, կամախ պաշտպան ժամանակ պատմիչը հաղորդում է, վոր Արքասը հրամայում է Հայ սայլապահներին մայրի փայտ բերելն հրամայում է հյուսներին մեքենաներ շինել. այդ մեքենաները պործ և ածում ամրությունը քանդելու<sup>1)</sup>

Բացի շինարարական և պատերազմական ասպարեզներից, հյուսները զրագում ենին փոխազդական միջոցներ կառուցելու թե ցամաքի և թե վճերի վրա Յամաքի վրա սայլերն եյին, իսկ լճերի վրա նավեր լիճերի վրա կատարված նավազնացության մասին ուշազրագ վկայություններ ունենք թե Թովմայի պատմությունը շարունակողի և թե Հովհն կաթողիկոսի մոտ այդ վկայությունները վերաբերում են Վանի և Սևանի լիճերի մասին.

«...Բաղասմ նաւաց յօրինեալ (Գագիկ I Արծրունի) խազաղ և անքոյթ նաւահանգիստ»<sup>2)</sup>

«Եւ ապա նաւակառոյց լիալք սրավար թիակօք իրը ի տապանի ինչ երթեալ զօղեալ ամրանային ի Սևան կղզուղ...»<sup>3)</sup>

Գետերի վրա կատարված նավարկության մասին Վիմական Տարեզրի արձանագրություններում կան ուշազրակ վկայություններ<sup>4)</sup>

Այս բոլորը ապացուցանում են, վոր հյուսնությունը պետք և լիներ բարփականին զարգացած աստիճանի վրա Յնվ այս հասկանալի յև միանգամայն այն հիմնական պատճառով, վոր փայտը տնտեսության այս փազում կազմում եր հիմնական նախանյութը:

Այս կերպ տեսնում ենք, վոր մասնավորաբար քաղաքների ազդաբնակության վորոշ մասը վորպես արհեստավորներ միտյն պարագնել են նախանյութի վերամշակությամբ և կամ շինարարական ասպարեզներում վերև ասածներից պարզ կերպով հետևում է, վոր ֆեոդ. Հայաստանում ըացառութը զարդացել են հյուսվոծներնի, մետաղազործական և ճարարաբաղետական ճյուղերը: Վերին սատիճանի հետաքրքրական եր իմանալ թե այդ արհեստավորական ճյուղերը ինչպիսի ստորաբաժանութներ և մասնագիտականացութներ ունեցել են: Արհեստների զարգացման շափը իմանալու անսկանից այս հանգամանքի պարզաբանումը ունի խոշոր նշանակություն: Մինչ այժմյան փաստերը հնարավորություն չեն տալիս այդ յերեան հանել:

Ինչ վերաբերում ե բնական հարստությունների շահագործման, կասկածից զուրս և արծաթանանքերի, պղնձահանքերի և երկաթահանքերի զու-

<sup>1)</sup> IV-me partie de Chronique de Denys de Tel Mahré, եջ 74:

<sup>2)</sup> Թօռվմաս Արծրունի, IV, զլ. է, եջ 294. հմմտ. նաև III, զլ. իթ, եջ 257:

<sup>3)</sup> Հովհ. կարսղիկոս, զլ. իէ, եջ 287, զլ. կէ. բջ 444:

<sup>4)</sup> «...Իննարիւր ի կարբին գետերէն և նաւերէն...» և կամ «...եկի ի սուրբ ուխտա, ետու Շամեա ջաղացներն, Երասխի նաւն,...» Փ.իմ. Շաենգիր, եջ 6, 8:

յությունը, Սրանց կողքին պետք և համկապես հիշատակել աղահանքերի շահագործումը, վորոնցով այնքան հարուստ և յեղել հայաստանը<sup>1)</sup>

Արտադրության այս ճյուղը Բնչ չափով եր զարգացել և կամ ազգաբնակության վեր մասն եր ընդգրկում, առաջմ հնարավորություն չունենք այս մասին վհչ ուղղակի և վհչ անուղղակի ճանապարհներով վորոշ յեղբակացությունների համար ցածր աստիճանը կասկած չի կարող լինել այն մասին, վոր հանքային այս շահագործումները գտնվում երին նախնական աստիճանի վրա: Իսկ այդ հանքերի շահագործումը տեխնիկայի զարգացման այդ աստիճանի վրա հնարավոր եր միայն արտադրական աշխատանքի ստրկացումով<sup>2)</sup>

Դընիի մոտ ունենք ուշադրավ վկայություն որավարձով աշխատող դաշտային բանվորների մասին, վորից պարզ յերեսում և այն սոսկալի կեղեցումը, վոր տեղի յի ունեցել Միջազգեաբում 8 թղ զարի յերկրորդ կեսին:

«Նրանք (կալվածատերերը), ասում ե պատմիչը, որավարձ տալիս եյին 5 որոր<sup>3)</sup>, կամ ամենաշատը տասը, Այսպես հնձել ավելին իրենց առաջ հունձքը՝ առանց նիճալու այդ գժբախտների ուժերին, նույնիսկ հազենալու չափ չոր հաց չեյին տալիս, վոչ թե նվազ ունենալուն համար, այլ՝ նրա համար վոր չար կամեցողություն ունեցյին<sup>4)</sup>:

Ուստի, արտադրության ասպարեզում ամենից կեղեցվածները հանդիսանում են նրանք, ովքեր զուրկ լինելով արտադրական սիջոցներից, ստիպված եյին լոկ իրենց աշխատանքի ուժով ապրելու:

Վերև մենք ասացինք, վոր հնարավորություն չունենք առանձին արհեստների մեջ առաջացած մասնագիտականացումը—արտադրական ուժերի զարգացման չափը—յերեան հանել, Ցեթե ուղղակի վկայություններ մեզ հնարավորություն չեն տալիս այդ անել արդյոք մի ուրիշ անուղղակի ճանապարհով հնարավոր չեր արդյոք այդ մասին մի ընդհանուր զաղափար կազմել:

բ) Աշխատանքի արտադրողականությունը անմիջականուրեն կախյալ ե արտադրական ուժերի զարգացման չափից: Ուստի, յեթե կարողանանք աշխատանքի արտադրողականության մասին մի բան տանը, այն ժամանակ հնարավոր կենի յերկրորդ անձանոթը վորոշ չափով հայտնաբերել:

<sup>1)</sup> H. Topdschian, Die Innere Zustände հջ 45:

<sup>2)</sup> Այդ սորկացումը և զործ զրված կեղեցումները անասելի չափներէ եյին հասնում, յերբ հանգատաները արտադրություն մեջ տեսնում եյին անմիջական փոխանակական արժեքը գրամի ձեռաւ: այս մասին K. Marx, Das Kapital, III, գլ. 8, հջ 125:

<sup>3)</sup> Ուրոի 8-րդ գարում ունեցած արժեքի մասին ձեռքի տակ ավանդներ չունենք, չայտնի ե սակայն գոր հին Հունաստանում յեղել և փոքր յերկաթյա կամ պղնձյա զրամ և արժել ե 6 որոր=1 զրախմ, 13-18 ֆենիզ արժողությամբ: Սանրությունը տատանվիլ ե 0,7-1 զրամի միջն:

Սակայն, հետաքայում Սուրբիայի և Ցեղպատութագալորների կողմէց յերբ զբախմեն կեղծիկ ե, անտարակույս որոլը և կորցրած պիտի միներ իր հին արժեքը:

1833 թ.-ի Հունաստանում կերառված զբամական չափների հիման վրա 1 որոլը արժեքը 0,036 մարկ, հմմտ. Brockhaus-ը,

<sup>4)</sup> VI ieme partie Chronique de Denys de Tel-Mahré, հջ 182—183:

Ապրանքափոխանակության շրջանում աշխատանքի քանակական և վորակական արտադրողականությունը ուղղակի արտահայտվում և արտադրության պրոցեսի տեսողությամբ և անողողակի՝ արտադրույթ-ապրանքի շուկայում ունեցած գինությունում:

Ուստի մեզ հարկավոր ե՞ն

1) Պատմական ժամանելով ցույց տալ թե արտադրական պրոցեսը վարքան և տեղել.

2) Արտադրույթ-ապրանքը ի՞նչ գինով և գնահատվել:

Մեր կարծիքով այս և այն ուղին, վորով պետք և ընթանանք ուղղակի վկայությունների բացակայության գեպքում:

1) Արտադրական պրոցեսի տեսողության մասին ունենք բավականին առատ տեղեկություններ ճարտարապետական կառուցումների ասպարիգում: Յերբ նկատի ունենանք այն համգամանքը, վոր նման կառուցումներ տարրեր ճյուղերի արհեստավորների համագրական արտադրությունն և, այն ժամանակ մի յեկեղեցիի կամ վանքի շինության արտադրական պրոցեսի տեսողության մասին մի վկայություն մեզ վորով չափով զաղափար կըտա մի շարք արհեստաների մասին:

Հայտնի Տաթերի յեկեղեցիի շինությունն սկսվում և 895 թվին և ավարտվում և 906 թ.-ին: 1) Ուրեմն զործ և զբվում 11 տարվան մի ժամանակ միջոց:

1029 թ.-ի Մարմաշենի արձանագրությունից տեղեկանում ենք, վոր այդ վայրում յեկեղեցին կառուցվում և 43 տարվան ընթացքում: <sup>2)</sup>

Զալալ Դուլլա Հասանի 1240 թ.-ին թողած մի արձանագրությունից իմանում ենք, վոր Գանձասարի յեկեղեցիի շինության վրա դրվում և 22 տարի: <sup>3)</sup>

Անշուշտ արտադրության պրոցեսի այս յերկար տեսողության վրա կարող ելին ազդել և քաղաքական արտաքին պատճառներ:

Արտադրական պրոցեսի տեսողության մասին ունենք հետաքրքիր վկայություններ զբարք արտադրության մասին:

Մի աստվածաշնչի 1330 թ.-ի հիշատակարանում կարդում ենք.

«... Զաս սկսեալ ի գեկտքմբերի աւարտեցաւ ի հոկտենբերի, ի ձեռն երկու քաջ քարտուղարի»: <sup>4)</sup>

Ուրեմն, յերկու «քաջ քարտուղարներ» կարողանում են 10 ամսվա ընթացքում մի աստվածաշնչ արտագրել իսկ այդ աստվածաշնչի կազմության համար 40 որ հարկավոր և լինում:

1314 թ. մի գիրք արտագրողի հիշատակարանը հետաքրքիր և այն տեսակետից, վոր այնտեղ պարզվում են այն պայմանները, վորոնց մեջ տեղի և ունեցել այդ արտադրությունը: Մեր կարծիքով, այս վկայությունը

1) Յա. Ռեբելան. I. գլ. խա. եջ. 270, 269 և գլ. ԽԳ. եջ 1280.

2) Ա. Կոստանդնաց. վկայական տարեգիր. եջ 16/17.

3) Ուիմ եջ 81/82. այս յեկեղեցիի շինության մասին կիր. Գանձակեցիի մոտ կարգում ենք. «...և յուով ամս աշխատեն ի նմաց. գլ. ԽԲ. եջ. 146.

4) Պ. Ֆլիուան. Հայապատում եջ 547

ժամանակի մի պարագա չե այդ ժամանակների արտադրական պայմանների համար: Այդ հիշատակարանում կարգում ենք՝

«... Տես թե քանի աշխատեցայ

Ես Մխիթար զրիչ սորա.

Թուղթս անկոկ ու զրիչ չկայ,

Աւուրքըս ցուրտ ու պարզկա,

Զարգախս բարձր ու կրակ չկայ

Դոնիբու չոր ու սպաս չկա,

Եւ այս Գլածորն ով զիտենայ,

Ես յոյժ նեղած ու ճար չկայ»: <sup>1)</sup>

Արհեստավորական ձեռ արտադրության մեջ առաջացրել եւ տնտեսական այն վոզին, վոր վարպետը ապրում եր իր արտադրությի հետո Այդ արտադրությը ամբողջ իր ստեղծագործությունն եր և յերբ արտադրության վրակական արժեքն եր գերակշռում, այն ժամանակ մի ամրող մարգակյին սերունդ, արտադրական ամենաաննպաստ պայմաններում, զործ եր զրում նման արտադրությների վրա: Այս թե ինչով պետք եւ բացատրել Քեռողական Հայաստանից մեզ հասած վանքերի կամ յեկեղեցիների հիացմունք պատճառող զարդարուն քաշե խոյակների և ձեռակերտ փայտե քանդակների այդ կերպ արտադրության պատճառը: Իսկ այս ըոլորին յեթե ավելացնենք վարպետին պատվո նախանձախնդրությունը (արդյունք արտադրության արհեստավորական ձևին), այն ժամանակ մեզ համար պարզ կը լինի արտադրության պրոցեսով այդ անհավատալի լինելու չափ աեղողությունը:

Թեև արհեստավորական այլ ճյուղերի արտադրական պրոցեսով տեսողության մասին պատմական վկայություններ չունենք, սակայն մեր կարծիքով, նկատի ունենալով ներքին ապրանքափոխանակության դարդացման այն սատիճանը, զորի մեջ գտնվում եր Քեռողական Հայաստանը, գժվար թե արտադրական այլ ճյուղերում տարրեր պատկեր լիներ:

2. Ֆեոդալական Հայաստանի ապրանքների գիների հայտնարերումը գետ ես կարոտ եւ հատուկ ուսումնասիրությունների: Այսպիսի մի աշխատավորուն կը լուսաբաներ վոչ միայն մեր առաջադրած հարցը, այլ և կը պարզեր աշխատավարձի խնդիրը, զոր մեզ հնարքավորություն կըտար աշխատավոր զասի սոցիալական դրությունը պարզելու:

Առ այժմ մենք բավականանում ենք տալ մի քանի որինակներ այս մասին:

Համաձայն իբն Հառուքալի վկայության, հայկական դոտիները արժեն են 1-10 դինար: <sup>1)</sup> Ուրեմն մի գոտիի գինը տառանգում եր 11,66-116,60 մարկի սահմաններում:

1253 թ-ի Հաղբատի արձանագրության մեջ կարդում ենք.

«... և Շնորհաւոր Տիփիսեցի... միաբանեցաք Հաղպաղայ Ար.

Նշանիս և տուաք հարիւր զանեկան ի շինության ժամանակ...» <sup>2)</sup>

<sup>1)</sup> Պ. Թափառ, Հայապատում եջ 526

<sup>2)</sup> Պ. Կոստանտին, Վիմական Տարեգիր եջ 98.

Մի հայ վանականի գնահատման վրա թաթարների Մանգու խանը 1254 թ.-ին քանդված մի յեկեղեցի վերաշինության համար նվիրում է 200 յասրու:

... Մանգուն հարցրեց հետո նրան (հայ վանականին) թե ինչ գնով պիտի կարողանար այդ (յեկեղեցին) վերաշինել. ան պատասխանեց թե 200 յասրոյի, այսինքն՝ 2000 մարգիս: <sup>1)</sup>

Գրքի արտադրության ասպարիզում գանում ենք հետեւյալ վկայությունը, վրը 1330 թ.-ին և վերաբերում:

«Բայց Խարեն որ եղեւ այս աստվածաշունչ <sup>2)</sup> զրոցու ընդ ամենայն միահամում 2200 դրամ է:

Ապրանքների գնները վորոշիկու ժամանակ, ինչպես տեսնում ենք, մեծ կարեվորություն և ներկայացնում խնդրո առարկա ժամանակաշրջանում գրամի արժեների ճշտումը: Մի հարց, վոր զեր ևս հատուկ ուսումնափրության կը կարուի: Մի կողմէց ուղղակի վկայությունների բավարար չափով զոյտքյուն չունանալը. մյուս կողմից դրամական արժենքների ճշտված չիննելու պարտղան, մեզ հնարավորություն չեն տալիս ապրանքների զըների մասին իրական գաղափար կազմել: <sup>3)</sup>

Սակայն, կարելի եւ ասեմ, վոր արհեստավորական արտադրության ասպարիզում, տրված լինելով նյութի թանգությունը և արտադրական սրբոցին յերկար տեսողությունը, արհեստավորական ապրանքների գիները անցյալում շատ ավելի բարձր ելին գնահատվում բան յերկադրութական և անամոնապահական արտադրությունը և վոր վերջիններս համեմատած ներկայի գինների հետ շատ ցածր ելին: <sup>4)</sup>

1) Guill. de Rubrouck. Récit de son voyage Paris 1877, եջ, 180

2) Պ. Ալիօսան. Հայապատում էջ 547. Ալիօսան 2200 դրամի արժեների մասին հետեւյան և նկատում. «Այս գումարն կը ույ ըստ նյութական արժեյից 1350 ֆր. բայց բառ արժեյից արծաթոյ ժամանակին՝ ամելի քան զ 4000»: Այս վկայության մեջ «խարճ» ընդհանուր բառի տակ պիտի համարնալ նաև թղթի և այլ նյութերի համար ծախսվածը 1427 թ.-ի մի ուրիշ վելայություններ տեղիներում ենք, վոր մի աստվածաշնչի համար ծախսվածը և 2000 զանհան (գիկնան) արժամ լինելով թագին ու անհրաժեշտ նյութերը: Լիբրդալայան, նոսարք էջ 84, 160/161, 190.

3) Յօնաթանոս Ալիօլիքպյանը հիմնվելով վեհական տարեկարի արձանագրությունների մի շաբթ ավագների վրա կատարելի և մի հատաքրթիր ուսումնափրություն, վոր մասնանիշ և անում այն միջոցը թե ինչպես հնարավոր և փեղու. Հայաստանի ապրանքների զները ճշշտել ՀՀ-ը դարձու մինչև 13-ը դարու ժամանակաշրջանում: Տես Տեղեկագիր ՀԱՅ: Դիտության և Ալբլուսի Խնամիւտաւիք նո, Ցերեան 1927 թ.:

4) Պրոֆ. Հակիմ. Մանաւելյանը (Տեղեկագիր ՀԱՅ: Դիտության և Արվեստի Խնամիւտաւիք նո, 1926 Ցերեան, եջ 11) հիմնվելով Կրեմերի աված տեղեկության վրա՝ ընդունաւմ է, վոր 632-634 թ.-ին Արարիայում մի վաշիարք գնահատվել և 10 ֆր.: Մրանից յեզրական ցածր և համապատասխան, մոտավորապես, նորագույն ժամանակին ես լինել բավական ցածր և համապատասխան, արտադրությունը մասին մեր կատարած ուսումնափրության մեջ (տես Պետ. Համարաբանի Գիտական Տեղեկագիր նո, Ցերեան 1927) յերկարագործական և անամոնապահական արտադրությունների մասին մեր վկայությունները (սուրբական ապրյուրից) այլ բան են ասում: Կրեմերի բերած միակ վկայության վրա հիմնվելով չեկարելի դրամի իրական արժեների մասին նման մի ընդհանրացում անեմ Մեր կարծիքով, այդ ընդհանրացումը տվյալ ըշշանի տնտեսական կյանքի անհամապատասխան, սիամ մի ընդհանրացում եւ:

Ապրանքների արտադրությունը պայմանավորված է շուկայի պահանջով։ Վերջինն ել իր հերթին ազգաբնակության քանակով։ Մեր կարծիքով ֆեռագալական Հայաստանի ազգաբնակությունը չեր կարող մեծ լինել։ Ազգաբնակության քանակը պայմանավորվում է այլալ ժամանակաշրջանի արտադրական ուժերի զարգացման չափով։ Ֆեռագալական տնտեսության ժամանակաշրջանում արտադրական ուժերի զարգացումը, ինչպես անհնում ենք, գտնվում եր ցած աստիճանի վրա։ Մյուս կողմից մեղ ծանոթ են պարբերական այն խուժումները, փորոնց յենթակա և յեղել ֆեռագալական Հայաստանը։ Սրանք առաջին հերթին անդրագառնում եյին պղարբնակության քանակի վրա։ Ցերե սրանց վրա ավելացնենք նաև հաճախակի համարականերն ու սովերը և առողջապահության բացակայումը, այն ժամանակ մեղ համար պարզ կը լինի աղջարնակության աճման գանդապությունը։ Համաձայն Կրեմերի ուսումնասիրության, պարզվում է վոր 622-1495 թ. թ.-ը Սուրբայում, Իրակում, և Յեղիպատում 94 անգամ խոշոր համաճարակներ տեղի յեն սևնեցիլ<sup>1)</sup>։ Այս միայն արաք պատմիչների և աշխարհագիրների գրի առածներն են։ Քանինից մեղ չեն հասել Ուստի զարմանալի չե, յերբ մի շարք հայ պատմիչներ մեղ հաղորդում են այն սովեկալի սովերի և համաճարակների մասին, վորոնց հաղարավորներ դու եյին գնումը<sup>2)</sup>։

Մի ուրիշ կարևոր հանգամանք խոշոր արգելք եր հանդիսանում ներքին շուկայի աճման։ Ազգաբնակության ճնշող մեծամասնության, պյուղացիական դասի, զնողան կարողությունից զուրկ լինելու հանգամանքն եր այդ թե ներքին և թե արտաքին հարկերի ամբողջ ժանրությունը ընկնում եր արտադրող այս դասի վրա։

Մի կողմից արտադրական ուժերի զարգացման ցած աստիճանը, մյուս կողմից զոյ խիտ ազգաբնակությունը և զյուղացիական դասի զնողական կարողությունից զուրկ լինելու հանգամանքը, խոշոր արգելքներ եյին հանդիսանում արհեստավորական արտադրույթների համար ներքին շուկայի ընդլայնման։

Ում համար եյին արտադրում այդ արհեստավորները և ի՞նչ չափով կապված եյին շուկայի հետ։

Դ). Մի կողմից արտադրված ապրանքների տեսակները, մյուս կողմից պյուղացիական դասի մասին մեր ասածները նկատի ունենալով, պարզվում ե այն շուկան, վորի համար սահմանված եյին այդ ապրանքները, Առաջին հերթին արտադրվում եր աշխարհիկ և հոգերո իշխանների համար։

Ցերկար տարիների ծանր աշխատանքով արտադրված գորգերը սահմանված եյին արքայական պալատների և իշխանական դղյակների շքեղացման<sup>3)</sup>։ Վուկեթել հարծաթաթել մետաքսյա գործվացքները ինչպես և դի-

<sup>1)</sup> Alf. v. Kremer. Die grosse Seuchen des Orients nach arabischer Quellen, S. 44, 49, 56, 59, 72, 76.

<sup>2)</sup> ԽԵԺԻԱՅԹ, Հնախոսություն, հատ. I, էջ 51 հատ. III էջ 360/364.

<sup>3)</sup> Սորբ, էջ 18 համատ. H. Topdschian, Die Innere Zustiaude էջ 47

պակները, իշխանական դասի գփակիւսում կանանց» զարդարելու:

Վասկերիչները պատրաստում եյին թագավորների և իշխանների համար թագեր, սուրեր, դաշույններ և իշխանական կանանց այլազան զարդեր: Այս վերջնին և ակնարկում կաստիկերտացին, յերբ նա պերճանքի հավելումը ամբարտավանություն և անվանում և ավելացնում, «կարի առաւել կանանց ազգի» վորոնց համար անհաժեշտ եյին դինզեր, մատանիներ, ապարանջաններ և այլն: Այդ պերճանքի առարկաններից անմասն չեր մնում հոգեւոր իշխանական դասը: Յեկեղեցիների և նրա պաշտոնյանների համար պատրաստվում եյին խնկամաններ, սկիններ, խաչեր ավելարանի զարդեր և այլազան իրեր: <sup>1)</sup> Մանց վրա ափելացնենք նաև ոտար իշխանների տրված թանկարժեք նվերները:

Դարբինի առաջին զրագմունքն եր, մասնավորաբար քաղաքներում, ազնվականների և նրանց վաստակ իշխանների համար զենքեր պատրաստել:

Եինարարության ասպարիզում հիմնական տեղ եյին բռնում իշխանական դասի ապարանջների, յեկեղեցիների և ամբությունների շինությունը: Անետրական կապիտալի ուժեղացման շրջանում հանգես եր զալիս մի նոր գասակարգ, վոր իր կարգին հանդիսանում եր այդ արտադրույնների սպառու:

Ինչ վոր Զոմբաբար յեկրոպական միջին զարի համար ասում ե, թե «...բոլոր մետաղագործների ձնչիչ մեծամասնությունը, հյուսվածեղենի ասպարիզում՝ ուժխառուղների մեծ մասը, զբեթե ամբողջ ճարտարապետությունը, չխսնելով պերճանքի առարկանների մասին, իրենց արտադրույթները հարուստներին եյին վաճառում», <sup>2)</sup> նույնը կարելի և ասել նաև արևելյան ֆեոդալական յերկիրների համար.

Այս կերպ վորոշվում ե այն շուկան, զորի համար արտադրվում եյին այդ ապրանքները:

Արհեստավորական դասի սցիգալական դրության պարզաբանման տեսակետից մեզ շահագրգուստ ե նաև այն հիմնական հարցը, թե արհեստավորական արտադրույթան ձեր շուկայի հանդեմ զարգացման թնչ աստիճանի վրա եր զանցում:

Արհեստաների շահայի հարարերությամբ, արտամական զարգացումը ցույց ե տալիս, վոր նրանք անցել են հետեւյալ չորս հիմնական ձերից:

1. Արտադրողներ, վորոնք սպասողների տունն են աշխատում:

2. Արտադրողներ, վորոնք իրենց սեփական տան մեջ վերջին սպասողների համար որավարձով են աշխատում և այնպիսիներ, վորոնք ուրիշ արտադրողների համար են աշխատում: Ինչպես ներկարարները, ձաւիչներ և այլն:

<sup>1)</sup> H. Topdschian Die Jnnere Zustände էջ 45. Յերբ յեկեղեցին տեղական շուկայում չեր կարողանում զանել իրեն հարկավոր զարդը, այդ ճարպում եր այլ շուկաներից: Այս մասին պերճախոս որինակ և Անիի մայր յեկեղեցիի համար Հնդկաստանից ըերդած «Պըլոր կանթելը». Մ. Շուռեայեցի էջ 149.

<sup>2)</sup> W. Sombart, Der Moderne Kapitalismus. Bd. I, էջ 218

3. Արտադրողներ, վորոնք տեղական շուկայի համար են արտադրում, լինի այդ առաջանքի վրա, լինի վորոնք պահպատ:

4. Վերջապես արտադրողներ, վորոնք ավելի խոշոր շուկայի (միջյերկրային) համար են արտադրում (արտահանման համար):

Այսու աստիճաններից վերի վրա եյին զանգված ֆիոդ. Հայաստանի արհեստոները:

Միիթար Գոշը իր Դատաստանագրքի § 124-ը նվիրել է արհեստագորներին, այդակի աված և.

«Արտահաստատոք ամենայն ըստ որում և իցեն արտեստի, եթե հասուածով զործիցն և եթե վարձով, յարձամ ոչ ըստ հաճոյից տեսան զործեցին ...»<sup>1)</sup>

Դատաստանագրքի այս կանոնում ուշադրության արժանի յեն ռիթե հասուածով զործիցն և եթե վարձով զարձովածքը և ստեառն ըստը: Կարսուը առաջինը թարգմանել և «sei es dass sie im Gesamtakkord oder in Stücklohn arbeiten» և յերկրորդը՝ «Arbeitsherr»: Պետք և ասել վոր Գոշի խմբագրությունը բավականին մաթ և և կարող և արհեստավորական զարդացման այլազան ձեւերին միանգամայն հարմարվել:

Նկատի ունենալով արհեստագորական մի քանի ճյուղերի զարդացումը, կարելի և նրանք զասել վերջին աստիճաններն: Մասնավորաբար ճյուղաձեռների ճյուղը, վորի արտադրույթները վորապես հայկականք կամ «Երզնկարյի» կերպաններ անվանի են յեղել Այս անվանութենակը առաջադրում են սույն ապրանքների ոտար շուկաներ արտահանումը:

Յեթե արհեստների վորոշ ճյուղերում զարդացման այդ չափը ընդունենք, սա գեռ չինշանակում բոլոր արհեստների համար: Հավանաբար, արհեստի այյազան ճյուղերում այդ հիշված չորս աստիճաններն ել հավասարապես գոյություն ունեյին:

Ուրեմն, ֆեոդ. Հայաստանի վորոշ քաղաքներում արհեստագորական վորոշ ճյուղեր հասել են իրենց զարդացման աստիճանին: Այժմ հարց և առաջնում, արդյոք արհեստների զարդացման այդ աստիճանի վրա առաջացել են համքարական կազմակերպություններ, վորոնք զուղընթաց են ընթացել տնտեսական այդ զարդացման:

Դ) Եղիազարովը 17-րդ դարում Հայաստանում համբարությունների պոյությունը ընդունում են<sup>2)</sup> Ա. Թարայանցը Եղիազարովին հետևելով զրում ե.

1) Ա. Արք. Թաստամյանց, Միիթար Գոշի Դատաստանագրիքը, § 124, և 436 Կարսուը այս հոդվածը թարգմանում և այսպես՝

In Betreff der Handwerker im allgemeinen, welchelei Handwerk sie ausüben mögen, sei es dass sie im Gesamtakkord oder im Stücklohn arbeiten, falls sie das werk nicht nach dem Willen des Arbeitsherrn herstellen ...»

2) Taraintz, das Gewerbe in Armenien S. 54/55. հմմա նաև հարկան Քրաստանի համար Gogitchayschwili, Das Gewerbe in Georgien, S. 100.

«Հայտնի յեւ արդեն, վոր 17-րդ դարում Հայաստանում զոյություն ունելին համբարությունները, վորոնք բավական զարգացած ելին: Բայց հավանական է, վոր նրանք շատ ավելի առաջ ել գոյություն ևն ունեցել հայ արհեստավորների մեջ, վորովհետև համբարությունները, վորպիս հին ժամանակների ճանապարհորդները վկայում են վաղուց արդեն ծաղկում ելին պարսիկների մեջ և Հայաստանը հին ժամանակներում քանից սահմանի Պարսկականականի ձեռքին կամ զոյն նրա աղջեցության տակ»:<sup>1)</sup>

Ինչպես տեսնում ենք, այստեղ պարսկական աղջեցության հարցն եղածում: Մեր կարծիքով, վոյ թե աղջեցությունների հարց պիտի հարուցվեր, այլ հարկավոր և՛ արհեստավորական արտադրության զարգացումը պարզել: Յեթե այդ կազմակերպությունների տնտեսական հիմքերը զոյություն չունենալին, նրանք չեյին կարող առաջ դալ: Եղիազարովի 17-րդ դարի համար համբարությունների Հայաստանում զոյություն ունենալու մասին ասածը, մեզ համար կարող եւ ուշադրույց լինել նրանց հետքերը նախորդ գարերում վնասակատից:

Յեթե ճիշտ եմք այն յենթագրությունը, թե ֆեսդ. Հայաստանի քաղաքներում վորոշ արհեստներ մեր ժամանակած զարգացման աստիճանին վրա ելին զանվում, ապա ուրեմն արհեստավորության ուրույն համբարություններում կազմակերպված լինելը մեզ անհավանական չի թվում: Այս հարցի վերջնական լուսաբանման համար պեղումներին վերապահված եւ խոշոր դեր:

Մեր կարծիքով, այս տեսակետից ուշադրության արժանի յեւ «քաղաքացի զիսաւորքը», վոր վորքան մեզ ծանոթ ե, մինչեւ այժմ ուշադրության չի առնվել:

Այս տերմինը գործ եւ ածում առաջին անգամ 1045 թվին Արքա: Լաստիվերտացին, յերբ մեզ նկարազերում եւ Անիի զբավումը ըյուղանդացիների կողմից:

«... Իսկ քաղաքացի Գլխաւորքն որ նստէինյԱնի...»<sup>2)</sup>:

Նման մի վճռական բովեյի առթիվ (Անիի զբավումը Սևլչուկ թուրքերի կողմից 1064 թ.), զանում ենք նույն տերմինը կիր: Գանձակեցու մատ:

«...և որք զիսաւորքն էին ի քաղաքին»<sup>3)</sup>)

Ո՞վեր ելին այս «քաղաքացի զիսաւորք»: Մեր կարծիքով, սա հատուկ մի աերմին ե, վոր առաջացել ե արտադրական նոր փոխ-հարաբերություններից, քանի վոր, պատմիչը նախորդ յերեսի վրա տալիս ե յերկու կուսակցությունների զլուխ կանգնող իշխանները և անմիջապես, առանց դեպքերի լուսաբանման, զործ ե ածում «քաղաքացի զիսավորքը»:

Արժեք հիշատակել այստեղ, վոր հունարեն նոր կտակարանի prespyteros բառը 5-րդ գարում հայերեն թարգմանվել ե զիսավոր: Իսկ prespyteros մի

<sup>1)</sup> Աղջագրական հանդես, գիրք III, եջ 61, 62. Թիֆլուս:

<sup>2)</sup> Արքա: Լաստիվերացի. Դլ. Ժ. եջ 42

<sup>3)</sup> Կիր. Գանձակեցի. Դլ. Իե. եջ 139.

շարք նշանակությունների կողքին, նշանակել և նաև երեց, ամենից տարիքավորը:

Մենք սրանից դեռ ևս չենք կարող յեզրակացնել, խնդրո առարկա քաղաքացի գլխավորները վորպես արձանագրություններում: Հայտնի յեն վոր միջնադարյան Յեփրոպայի համբարական կաղմակերպություններից կազմվել ե քաղաքի խորհուրդ: Մեր ակնարկածը վերաբերում և նման մի խորհուրդի:

Պրոֆ. Որբելիի հրատարակության տվյալների 1269, 1289 և 1290 թ. թ. վերաբերող արձանագրություններում կա «Երիցանի» տերմինը, վոր գործ և ածվում վորպես քաղաքի խորհուրդ: <sup>1)</sup> Այս թվականներում քահանաները յերեց չեն անվանվում:

1126 թ. Ապլովարի վորդին, յերբ զալիս և Անին դրավելու, այսպիսի մի ուշազրակ վկայություն ունենք:

«...զայ ի խնդիր (Ապլովարի վորդին՝ Փատլունը) հայրենի քաղաքն Անւոյ, և աղերսանօք խնդրէ յԱպուհիթէ և յաւովաց քաղաքին...»<sup>2)</sup>

1258 թ. Մուֆարդինի պաշարման առթիվ նույն պատմիչը դործ և ածում «...աւագ և զլուխ երիցանցն որ անդ»...» դարձվածքը:

Մրանց միանում ե ն. Մասի հետևյալ կարծիքը. «Անիի լիսակատար ինքնավարությունը բնորոշվում և նույնպիս ավազների այն խորհրդով, վորը վարում եր քաղաքի բոլոր գործերը, և նրանց կարծիքը շատ անզամ ավելի նշանակություն եր ունենում քան կառավարչի ցանկությունն ու հայացքը: Ավագների այս խորհուրդը, վորի ծագման մասին առ այժմ դեռ տեղիկություն չկա, համենայն զեպս զոյտություն ուներ Շեղատանների, վրացիների և Յերկանաբաղուկների՝ Անիում տիրապետության ընթացքում»<sup>3)</sup>)

Համաձայն ն. Մասի այդ ավագների խորհուրդը հասնում և մինչև 1072 թ. ն. Մասը Անիի ինքնավարության մասին առաջին անդամ խոսել և թաթարական շրջանից մեղ հասած մի արձանագրության մեջ «որ եղել մայրաքաղաք Անի խասին ջուռ»), նախադասության մեջ ոխտախնջուռ ըառը

<sup>1)</sup> 1926 թ. ամռանը հնարավորություն հմ ունեցել Լինինդրատում հրատարակչի մոտ այդ արձանագրությունները կարդալու:

<sup>2)</sup> Վարդակ, հավաքում պատմության, Վենետիկ 1862 եջ 120.

<sup>3)</sup> Վարդակ, եջ 151

<sup>4)</sup> «Արարատ» ամսագիր, № 6, 1911 թ. եջ 481 հմմտ. նաև Լ. Օրբելի, «Հավաքածուներ» Անդ «Նեվա» ամսագրի № 5-ում 1911 թ. եջ 421, 425.

<sup>5)</sup> Կ. Կոստանդնաց, Վիմական տարեգիր, եջ 221.

սուպարանի վայր նախադասությունը թարգմանել և „так как столица Ани сделалась удалым владением<sup>1)</sup> Արցոք Արիստ. Լաստիվերտացիի «քաղաքացի զլիավորք» գործվածքի և կամ կիր. Գանձակեցու «...որք զրխաւորք էին ի քաղաքին...» պարբերության և այս ավագների խորհուրդի միջն զոյություն չունի մի կապ:

Վերին աստիճանի կարեսը մի հարց, վորի պարզաբանումը կարուտ ե դեռ ևս նոր վկայությունների: Ինչպես վերի ասացինք, այս հարցի լուսարանման տեսակետից խոշոր գեր ունեն կատարելիք անցյալի քաղաքների ավերակներում կատարվելիք պիզումները:

Ֆեոդ. Հայաստանի արհեստավորական-առևտրական քաղաքներում կար մի ուրիշ գասակարգ, վոր անկասկած ավելի խոշոր գեր եր կատարում քան արհեստավորները:

Այդ գասակարգը բազկանում եր առևտրական և վաշխառուական կապիտալի ներկայացուցիչներից:

#### IV. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՅԵՎ ՎԱԶԽԱՌՈՒԱԿԱՆ ԿԱՊԻՏՈՒՄ

##### Ա.

Առևտրական և վաշխառուական կապիտալները, վորոնք անրաժան են միմիանցից, զոյություն են ունեցել զեռ շատ վաղ ժամանակներում: Այս յերեսութը բացատրվում է այդ յերկու կապիտալների բնույթով:

Յերբ ուսումնասիրում ենք ֆեոդ. Հայաստանի քաղաքների բարգավաճումը, զոյուղական և քաղաքային ազգաբանակության մեջ առաջացած փոփոշություններն ու հակադրությունները ստիպված ենք ավելի հանդամանորնեն կանգ առնել տնտեսական այս զործոնի վրա և ցույց տալ մի կողմից նրա պատմական պրոցեսում ստացած փոփոխությունը և յուս կողմից վեր հանել այն դերը, վոր նա կատարել և ֆեոդ. Հայաստանի հասարակական կյանքում:

«Վորքան անզարգացած և արտադրությունը, նույնչափով ել զրամական կարողությունը վաճառականների ձեռքում և կենարոնանում, կամ վաճառականական կարողության մասնահատուկ ձեւ և հայտ զալիս»<sup>2)</sup>

Կար Մարքսի այս նկատողությունը, վորը վերաբերում է առևտրական կապիտալի պատմական զարգացման պրոցեսին, վորոշակի յերեան և հանում այն դերը, վոր ան կատարելու եր արտադրության դեռ ևս վոչ զարգացած աստիճանի վրա:

Իսկ այդ դերը ավելի մեծանում է, յերբ հետևում ենք առևտրական

<sup>1)</sup> Н. Марք., Новые материалы по Армянской эпиграфике. Записки Вос. Отд. И. Р. Арх. Общ. т. VIII. № 77—80. СПБ. 1893.

Մառը նույն կարծիքը հայտնում է նաև «Помощ Армении»-ում ապածիր հոդվածում:

<sup>2)</sup> К. Маркx. Das kapital III<sub>1</sub>, кар. 19 5. 310.

կապիտալին արտադրական այն պայմաններում, յերբ գոյություն ունեն եքստրեմիստը: Մարքսը բացորոշ զրում է այս մասին:

«Այն որենքը, վոր վաճառականական կապիտալի ինքնուրույն զարգացումը կապիտալիստական արտադրության զարգացման տառինինինի հետ խոտոր և համեմատում, հայս և գալիս ամենից ավելի միջնորդ վաճառականության (Zwischenhaudel) առամության մեջ. ինչպես վենետիկցիների, ճենովացիների, հոլանդացիների և այլնի մոտ վորտեղ գլխավոր շահը արվում է վոչ թե սեփական յերկրի արտադրույթների արտածումով, այլ՝ վաճառականական և անտեսական տեսակետից չզարգացած հասարակությունների արտադրույթների միջնորդ հանդիսանալով: Այստեղ զարայուն վաճառականական կապիտալն եւ, բաժանված եքստրեմիստից—արտադրության յերկրամասներից—, վորոնց միջն միջնորդի գեր և կատարում: Այս և հանդիսանում նրա կազմավորման զիխավոր աղբյուրը:<sup>1)</sup>

Մարքսը այս և հետագա տողերում տալիս և առետրական կապիտալի կազմավորման և զարգացման զիխավոր աղբյուրը: Տնտեսական զարգացման այդ աստիճանի վրա առետրական կապիտալը գտնվում եր մենաշնորհյալ լինելու գրության մեջ և այս իսկ հանգամանքից ստեղծվում եր նրա համար վերին աստիճանի նպաստավոր հոգ:

Ֆեոդալական Հայաստանի արարական շրջանում առետրական կապիտալի կազմավորման և աճման մասին զարափար կազմելու տեսակետից, մեզ անհրաժեշտ ե մի կողմից աչքի առաջ ունենալ յերկրների այն կոմպլեքսը, վորտեղ զտնվում եր ապրանքափոխանակության ծանրության կենտրոնը և մյուս կողմից վեր հանել այն դերը, վորը վիճակվել եր ֆեոդ. Հայաստանին յերկրների այդ կոմպլեքսի մեջ Միայն այդ ընդհանուր փոնի վրա հնարավոր կը լինի ֆեոդ. Հայաստանի առետրական կապիտալի մասին վորոշ զարափար կազմել:

Խնդրու առարկա ժանանակաշրջանում առաջավոր Ասիայում յերկու զիխավոր քաղաքական ուժեր գոյություն ունեն: Արարական և բյուզանդական: 10-րդ և 11 րդ դարերում արևմտյան Յեկոպայի հարայում վենետիկին ու Ճենովան: Ահա այն յերկրամասը, վորտեղ կատարվում եր այս ժամանակաշրջանում ապրանքափոխանակությունը:

Խեկ այդ ապրանքափոխանակության ծանրության կենտրոնը հանդիսանում եր արքայանների արարական պետությունը: Տրված լինելով այն, վոր արարական հողամասերից եյին անցնում, անմիջականորեն, Արևմելքի ապրանքները:

Զրային հաղորդակցության ասպարիզում այս պետությունների սահմաններում բացառարար, նկատի յին գալիս Միջերկրականը, Աև ծովը, կասպիրական ծովը Պարսից ծոցը: Իսկ շամաթային հաղորդակցության համար կարավանների ճանապարհները:

Այստեղ մեզ շահագրառում են այս վերջին ճանապարհները: Համաձայն Fr. Stiwe-ի վորը բարեխիղճ կերպով ուսումնասիրել և

<sup>1)</sup> Ibid, Das Kapital III<sub>1</sub>, քար. 19. 5. 312/13, 314/15.

արաբական աղբյուրները, Բաղդատից մեկնել են հինգ զլիսավոր կարավանի ճանապարհներ<sup>1)</sup>: Սրանցից յերկուսը արևելյան և արևմտյան ճյուղավորություններով անցնում են ֆեռոդ: Հայաստանից, Արևմտյանը ճյուղավորվելով՝ հասնում է նաև Հայելու և նրա վրայով շարունակվում Միջերկրական ծովի ափու Յերրորդ կարավանի ճանապարհը յերկարում է մինչև Պարսից ծոց և այս կերպ հարաբերությունը և հաստատվում Հնդկաստանի, Հնդկաշխինի և Աֆրիկելի արևելյան յիզերքի հետ: Արաբների Հնդկաստանի և Զինաստանի հետ ծովային ուղիով Թ-րդ զարթ կիսուն ունեցած առևտրական հարաբերությունների մասին մեզ լինակատար տեղեկություններ են տալիս, արար առևտրականների պատմվածքները<sup>2)</sup>: Բաղդադը մի ուրիշ զլիսավոր կարավանի ճանապարհով կազմվում է ուղղակի Հայելու հետ և սրա վրայով Միջերկրական ծովի հետ: Բայց վերջին ճանապարհով Բաղդադը՝ Համագան-Նիշապուրի վրայով կազմվում է կենտրոնական Ասիայի հետ:

Անշուշտ, առևտրական այս հարաբերությունները զնահատելիս, աչքի առաջ պետք և ունենալ այն ժամանակաշրջանի հազորդակցության ասպարիզում գոյություն ունեցող հազորդակցության միջոցների տեխնիկայի զարգացման աստիճանը:

Ճանապարհների այս ցանցի մեջ մեզ շահագրգռում են, մասնավորաբար, Բաղդադից մեկնող և արևելյան ու արեմտյան ճյուղավորություններով ֆեռոդ: Հայաստանից անցնող կարավանի ճանապարհները:

Նախ քան Ֆր. Stüwe-ի ուսումնասիրության ժանոթանալը, Բաղդադից մեկնող այդ յերկու ճանապարհներին ելինք հանգել աղբյուրների և գոյություն ունեցող քարտեսների ուսումնասիրությամբ:

Արևմտյան ճանապարհը անցնելով Միջազնետքից հասնում եր Ասիր—Մայաֆարիքին—Արգան—Բիթլիսի: Բիթլիսից յերկու մասի եր բաժանվում: մին Ռոտան: Վանի վրայով գետի արևելք Բերքի և անցնում և շարունակվում գետի Պարսկաստան՝ Խոյ քաղաքը<sup>3)</sup>: Յերկորորդը, վոր Բիթլիսից Դատվան և գնում, բացառապես հետաքրքրում է մեզ, վորովհետեւ անցնելով Խլաթ և Մանազկերտ քաղաքներից՝ հասնում է Քալի-Քալա (Երզրում):

Արևելյան ճյուղավորումը, վոր կրկն Բաղդադից և զուրս գալիս, անցնում և Պարսկաստանի վրայով Մարաղա—Ռերմիա—Դիլման—Խոյ քա-

<sup>1)</sup> Friedrich Stüwe. Die Handelsfahre der Araber unter den Abbassiden. Berlin 1836. Հմմատ. գրքի հետեւմ գտնվող քարտես:

<sup>2)</sup> Relations des voyages faits par les Arabes et les Persans dans l' Inde et à la Chine, par M. Reinaud, Paris 1845. Նույնպես M. Ed. Dulaurier. Relation des voyages. Paris 1844.

<sup>3)</sup> Նասիրի Խորասան, Խորասանի սելջուկ Արու Սուլեյման Շաղրի սուլթանի գանձապահը, 1045 թ. Մերքից ճանապարհ ընկնելով գնում է Մերքերի Նրա անցած ճանապարհը մեզ վրաշակի ցույց և տալիս Հայաստանի հարավից գետի Մերք գնացող ճանապարհը: Մերք ներշարուր—Կազմին—Շեմիրամ—Թագրիգ—Խոյ—Բերքի—Վան—Ռոտան—Խլաթ—Բիթլիս—Արզն—Մայաֆարիքին—Ամեզ և Հայելով վրայով գետի Պեյրութ և Մերքերի: Այս ճանապարհազիմքը մի կողմից հաստատված և մեր բնած արեմտյան ճյուղավորումը և մյուս կողմից ցույց և տալիս Բիթլիսի կազմը Խորասանի հետ: Relation du voyage de Nassiri Khosran, trad. fr. par Ch. Scherer եջ 10—25. Paris 1881.

դաքնիրից և համառում Նախիջեան—Դվին։ Դվինից ճյուղավորվում են մի շարք ճանապարհներ, վորոնցից մին զնում և թիֆլիս, մյուսը՝ Բարձավի վրայով (Բարձավը Ասանի կենտրոնական քաղաքն էր, նշանավոր իր առ կուրկի կոչված շուկայով) անցնում ե գեղի հյուսիս՝ Դեբրենդ (Բարձ-Արգար) և հարավ-արեւելք գեղի Արգարիւ։ Դվինից մեկնող յերբորդ մի ճանապարհ, վոր մեզ այժմ ավելի յե շահագրգռում, հյուսիսային և հարավային հյուղավորութեան համառում է կրկին Արծն-Կարին (Երզրում<sup>1)</sup>։ Հետագայում Պարսկաստանից Տրապիզոն գացող ճանապարհը, փոխանակ Դվինի անցնում էր Անիից<sup>2)</sup>։ Անցյալի այդ առևտրական հարարեսաթյան վորաբերության վորաբեր Արգար-Չայի վրա։<sup>3)</sup>

Առևտրական ճանապարհների այս ցանցը մի քանի տեսակեաներից շահեկանություն և ներկայացնում։

1. Բաղդատից մեկնող և արեւելյան ու արևմտյան ճյուղավորութեարով ֆեոդ, Հայաստանից անցնող ճանապարհները հանգում են մի այնպիսի վայրում Արծն-Կարին, վորը թե բյուզանդական և թե արաբական պատմիչներից մեզ ներայացվում ե մի առևտրական կենտրոն, վոր անմիջական կապ ունի Տրապիզոնի հետ<sup>4)</sup>, Կարինը առևտրական հարարերության մեջ էր նաև Վրաստանի և Պարսկաստանի հետու<sup>5)</sup> Վերին մեր հիշած Ամերից գեղպի Հալեպ մեկն դ ճանապարը Հայստանը կապում էր Միջերկրական ծովին։

Ինչ վերաբերում ե Դվինից գեղի Դեբրենդ մեկնող ճանապարհներն, Ձա՛Շյուլին ցույց և տալիս, վոր այդ ճանապարհը Կասպիականի յեղերքը դանվող այժմյան Աստրախանի և Վոլգայի միջոցով կտպվում էր հարավային Ռուսաստանի Վյուտարայի (Քիյև) հետ և յենթագրվում է, վոր Թօն և Վոլգա գետերի միջև, նրանց իրար ամենամոտ յեղած մասում, դոյցություն։

<sup>1)</sup> Հմմտ. այս ճանապարհների ցանցի սասին. ինք եառնեալ եջ Շօվ. իսասիրի, եջ 192—197. H. Topdschian, die Innere Zustände, եջ 4/1/42. Ghazarian. Armenien unter der Araberherrschaft եջ 68. K. Reichel, Städte höhere Lehranstalt zu Charlottenburg 1900. Բարձավի մասին, վորպես առևտրական կենտրոն քաղաքի. Հմմտ. Վ. Բարտոլդ, Место при каспийских областей и т. д. Баку 1924 եջ 34.

<sup>2)</sup> W. Barthold, „Ani“ in Encyklopédie des Islam.

<sup>3)</sup> Հմմտ. Н. Я. Марр, Раскопки в Эриванской губернии տես „Очерт. Имп. Арх. комиссии“ за 1892 г. СПБ. 1894 դ 75—86.

<sup>4)</sup> Կոստանդին Պորֆյորովին (Գլ. 46, 207 եջ, 23—208, 4) Կեսերինոս (II, 577, 7 շար.) Թեսդուռապուսի (Կարին) մոտ Արծն քաքաքի վաճառականական նշանակությունը, 11-րդ դարում, նկարագրում են։ Սոորե հայ պատմիչների վկայություններից ավելի հանգամանորեն կր խոսինք այս քաղաքի մասին։ Արաբական աղբյուրների վրա հիմնվելով Գր. Stüwe (Die Handelszüge etc. s. 184) խոսում ե Երզրումի առևտրական դերի մասին։

<sup>5)</sup> Կոստանդին Պորֆյորովին. Գլ. 45, 200 եջ, 13—17, 205 եջ, 16 —21.

ունեցել և ջրանցք:<sup>1)</sup> Վոր Դերբենտում հայ առետրականներ յեղել են, այդ մասին ունենաք հետեւյալ ուշագրավ վկայությունները:

Տարարի արար պատմիչը Դերբենդի նվաճման մասին խոսելիս ասում է.  
«Հայք այստեղ չեն բնակում, այլ միայն անցուղարձ կ'անեն»<sup>2)</sup>

Բայ յերեվայթին, այդ առետրական հարսրերությանները հետագա դարերում ստացել են ավելի ուժեղ բնույթ, վոր 1085 թ. Մատթ. Առաջին այնուղի հայ թագավորների մասին և խոսում.

«... Եին և այլ թագավոր հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կաղանք, սահմանակից Օզաց և Աղուանից...»<sup>3)</sup>

2. Եերկրներ յեղակացությունը, վոր բղխում և անժիշտականորեն առետրական ճանապարհների այս ցանցից, ֆեոզ. Հայաստանի տարանցիկ մի յերկիր լինելու հանգամանքն եւ: Մի պարագա, վոր առետրական կապիտալի կուտակման և աճման համար վերին աստիճանի նպաստավոր եր հանգիստանում: Ֆեոզ. Հայաստանը գտնվում եր այն պայմանների մեջ, վորոնց մասին խոսել և Մարգար առետրական կապիտալի պատմական զարգացման մասին կատարած իր վերլուծութենքը մեջ:

Թեե մեր ուսումնասիրության ժամանակաշրջանի մասին մասնավոր առետրականների կուտակած հարստության վերաբերող վկայություններ չունենաք, սակայն, մի քանի կարենոր առետրական կենտրոնների՝ ինչպես որինակ կարսի, Արծնի, Դվինի, Խաթի մասին ունենաք հատկանշական բնութագրութենք, վորոնք կարելի և ուղղակի փաստեր համարել մեր մատնաշած առետրական կապիտալի կուտակման համարել:

Այսպես որինակ՝ Լաստիվերտացին 1053 թ. «յզփացեալ» Կարս քաշղաքի մասին ասում ե.

«... հարստացեալք բազում ընչեղութեամբ 'ի ծովէ և 'ի ցամաքէ...»<sup>4)</sup>

Կամ 1049 թ. Արծն քաղաքի մասին հետեւյալ վկայությունը.

«Այլ քաղաքին, և քաղաքի այսպիսում, որ հոյակապ և ականավոր էր ամենայն աշխարհաց, ...և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել 'ի սմա զզօրութէւն իւր...»<sup>5)</sup>

<sup>1)</sup> Fr. Stüwe, Die Handelszüge etc. տես գրքում յետել գտնված քարտեսը, Պրոֆ. Հակ. Մանանցանը նույն յեղակացության և զալիս Դվինից Դերբենդ մեկնող ճանապարհի մասին: Հակ. Մանանցան, Հայաստանի պատմությունը թուրք թաթարական արշավանքների շրջանում. էջ 86, Ենթան 1922. Տես Արենիքի և Արեմուտիքի ճանապարհների մասին „Նովый ВОСТОК“-ի № 8—9 (1925 թ.) համարում Յ. Գյորկո-Կրյաջին-ի, Վելիկո Առաջական հոգածություն համարում:

<sup>2)</sup> Բագրատ Խալաբյանց, արաբացի մատենագրեր Հայաստանի մասին էջ 84. Դիբնաւ 1919.

<sup>3)</sup> Մատթ. Առահենցի, էջ 231 Վաղարշապատ 1898.

<sup>4)</sup> Արիստ. Լաստիվերտացի, Գլ. ԺԵ. էջ 61.

<sup>5)</sup> Ibid Գլ. ԺԵ. էջ 53.

Խակ Թովմա Արծրունիի մոտ կարգում հնք 893թ. Դպինի մասին.

«...յորում շահաստան Դուքն, մարզախիս պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրեասիկ վաճառականութեամբ և աղջի աղջի պղծութեամբ յափրացեալ յզփրացեալ...»<sup>1)</sup>

Նասիրի Խոսրաւի վկայությամբ 1045թ. Խլաթ քաղաքը միջազգային առեւտրական կենտրոն է հանդիսանում.

«Խոսում են այդ քաղաքում, ասում և ճանապարհորդը, յիշեք լեզուներով, արաբերեն, պարսկերեն և հայերեն... վաճառականական գործառնությունները կտարաւում են պղնձե զբամով»<sup>2)</sup>

1064թ. Անսից այցը փառավորին» մօրուքն են կարում Անտիոքի հույները և ինչերը զրավում: «Դորզ Շիրակացին», ասում և պատմիչը, «առեալ զօրս թուրքաց հինգ հարիւր այր», ավերաւմ և 12 դիւզիր»<sup>3)</sup> 500 թուրքերին վարձելու համար պարզ և, զոր նա պետք և ունենար բավական հարսաւթյուն:

13-րդ դարուն վերաբերող վկայություններ խոսում են հարուստ վաճառականների մասին. այսպես որինակ Կարմնեցի Աւելիի մասին, զոր թիվավոր եր հասաւատիկ Կարինի թաթարների կողմից զրավումից հասու և վորին վրաց Դավիթ թագավորը հայր եր անվանում:»<sup>4)</sup> Սրու վորդին, Ճարրու Գոշա վանքի արձանագրության մեջ տառմ եւ.

«...իմ հայրն Ումեկ, զնեալ էր զԴիսիի ի քասառն հազար կարմիր տոււատին եւ Ճարրու գնեցի զՅովս իւր ամէն սահմանաւուցն ի գառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր ու ուկին թանի, ի Դի կարմիր տուկաւան»<sup>5)</sup>

Առեւտրական կապիտալի հեշտ կուտակման մասին ուշազրով մի ուկնարկ և նաև այն նամակը, զոր Բագրատունի Սմբատ 1-ը (890—914թ.թ.) ուղարկել և Աստրապատականի եմիր Մուհամմետ ալ Աֆշարին, յերբ վերջնու անհանգստացել եր Սմբատի և իես կայսեր միջն սունդծված մերձեցումից: Սմբատը իր զեսպանների միջոցով Աֆշարին բացատրում է, զոր իր և հունաց կայսեր միջն լոկ առեւտրական մի զաշինք և կնքված: Ժամանակակից պատմիչը հետեւյալ կերպով հաղորդում է.

«...զի թէ սէր ընդ կայսեր եղի, և այն ես, վասն ձեր օգտի, զի թերես որ պիտոյ է ամիբապետին մեծին. և զքոյ ևս դիւրաւ զպէտո ի յունականաց անտի զտանիկ մարթացից, և ի նպաստ ոծության ձեզ ընծայել զերեմի հանգերձից և զարդուց և զսպասուց վայելս. այլ և վճառականաց՝ որք ընդ զենիդ քո բացեալ ճանապարհ, զի արացին մուտ աշխարհն նոցա, և ի նոցա Ալութենին փարթամացցուցին զձեր զանձարանող»<sup>6)</sup>

<sup>1)</sup> Թօվմա Արծունի, III, Պլ. ԻԲ. եջ. 230.

<sup>2)</sup> Relation du voyage de Nassiri Khosrau, trad. fr. par Ch. Schefer, Paris 1891թ. 21/22.

<sup>3)</sup> Մասք Ռուահեցի, եջ 225/226.

<sup>4)</sup> Կիր. Գ-անձակեցի, Պլ. ՄԵ. եջ 210. Վարդան, ԶԸ եջ 147.

1283թ.

<sup>5)</sup> Կ. Կոստանդիան, Վիժական Տարեկիր, եջ 124.

<sup>6)</sup> Հովհ. կարողիկոս, Պլ. ԼԱ. եջ 201.

«Եւ ի նոցա լիութենէն փարթամացուսցեն զձեր գանձարանսղ» պարբերությունը ցույց է տալիս առետրական կապիտալի այն արագ կուտակումը, վոր հատուկ եր այդ ժամանակներին:

Պատմական այս վկայությունը միաժամանակ ցույց է տալիս այն ուժեղ առետրական հարաբերությունը, վոր ստեղծվել եր Բյուզանդիոնի և Հայաստանի միջև։ Այդ առետրական սերտ հարաբերությունը ապացուցվում է նաև հայ և հույն առետրական կապիտալի միջև ստեղծված պայքարով, վորը հատուկ ուսումնասիրության նութիւն կրդանաւ։

Հաստատած կարելի է ասել, վոր այս ժամանակաբարձնում փեռող Հայաստանում գործող առետրական կապիտալի համար կողոպտելու ըոլոր նախադրյալները զոյտություն ունենին։

ա) Մայր յերկիրների միջև կատարված ապրանքափոխանակություն.

բ) Այդ յերկիրներում զույություն ունեցող վոչ զարդացած արտադրական յեղանակ։

գ) Հափիլյալ արդյունքի գերակշռող ժամանակակից կապիտալի կողմից:<sup>1)</sup>

Այս պայմաններում առետրական կոտիտալի այս կերպութեանցումը, տնկուսկած, իր անդրազարձումը պիտի ունենար ազգարնակության այլ շերտավուրութեների վրա։ Մակայն, նախ քան այդ հարցին անցնելը մեղ հարկավոր ե մի զաղափար կազմել այն ժամանակվա վաճառականության կազմակերպության մասին։ Այս հարցի պարզաբանումից հետո վորոշ չափով մեղ հնարքավոր կըլինի այդ առետրականների փեռող Հայաստանի սոցիալական կյանքի վրա արած ազգեցությունը իմանալ և առաջացած հակադրությունը ընորոշելը

Վերև ապրանքափոխանակության ընդհանուր ցանցը յերեան հանելուց հետո, ընդգծեցինք ժամանակաշրջանին հաղորդակցության միջոցների տեխնիկայի զարգացման աստիճանը նկատի առնելու անհրաժեշտությունը։

Առհասարակ արտադրական ուժերի զարգացման չափը պայմանավորում է պատմական մի վորոշ ժամանակաշրջանում տնտեսական տվյալ ընտալավագությունը զոյտություն ունեցող կազմակերպությունը։ Նկատի ունենալով այն հիմնական պարագան, վոր արևելքում հաղորդակցության միջոցների տեխնիկան դարեր շարունակ իր նախնական վիճակում և գտնվել ուսափի, հետագա զարերի վաճառականության կազմակերպման ձեր առավել կամ նվազ չափով պիտի լիներ նույնը։

Այս ժամանակաշրջանի վաճառականության կազմակերպության մասին կաշխատենք պարզել միայն յերկու հարց։

ա) Հաղորդակցության միջոցների տեխնիկան և ճանապարհորդությունների հետ կապված դժվարությունները։

բ) Տիրող անապահովությունը կարավանի ճանապարհների վրա։

ա) Տերը կարդում ենք Արևելքի կարավանի ճանապարհների միջոցով կատարված ճանապարհորդական նկարագրությունները, ճանապարհորդությունները, վորոնք հնարքավոր են յեղել մի շարք դժվարություններ հաղ-

1) K Marx, Das Kapital III, քար. 19, 5, 314/315.

թահարելով, յերբ մեզ ծանոթ են այդ ճանապարհների վրա տիրող անտապահովությունն ու բազմաթիվ մաքսային գժվարությունները, այն ժամանակ բոլորովին այլ պատկեր ենք ստանում Արեւելքի առևտրականի մասին, ինչ վոր ունինք այժմյան կապիտալիստական յերկիրների առևտրականների մասին։ Եթեր անցյալում վաճառականները կարավանների հետ շիզում եյին քաղաքից քաղաք, այժմ առևտրականնը մտավոր միջոցներով աշխատում է տիրապետել համաշխարհային շուկային իր արամադրության տակ ունինալով տեխնիքական բազմազան հարմարություններ։

Բավական և մի որինակ բերել անցյալի վաճառականների ապրանքների տեղափոխության ընթացքում հանդիպած գժվարություններից, այն ժամանակ մեզ համար պարզ կը լինի այն հսկայական տարրերությունը, վոր առաջանում է հաղորդակցության տեխնիկայի զարգացած շլինելու հանգամանքից։

«Տեսանք նրանցից(հայ վաճառականներից)», ասում է Պիտոն զը Տուրնըֆոր, «շատեր և ամենահարուսաններից վոտով մեծ գետերն անցնելիս, ջուրը մինչև վիզը, բարձրացնելու ընկած ձիերը՝ փրկելու համար իրենց մետաքսի հակերը...»<sup>1)</sup>

Վաճառականը ստիպված եր որեր, ամիսներ, նույնիսկ տարիներ ճանապարհորդության մեջ լինել։ Վերհիշենք Թովմա Արծրունիի խոռոքերը Դվինի վաճառականների մասին։

«...և վաճառականքն զ հեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն...»<sup>2)</sup>

Իստախրիի և իրն Հառուքալի հաղորդակած քաղաքների հեռափորությունները մեզ զաղափար են տալիս այդ ժամանակաշրջանի հաղորդակալցության միջոցների տեխնիկայի զարգացման աստիճանի մասին։ Համաձայն այդ վկայությունների՝ Բարտավը Արտապիլից 50 փարսախ, Թիֆլիսից 52 և Դվինից 80 փարսախ հեռու եր Մարտավյից Դվին 50 փարսախ=7 որվա ճանապարհ,<sup>3)</sup> Արդարիլից Ամիդ ուղիղ մի ճանապարհ 225 փարսախ։ Այդ ճանապարհը անցնում է եր Արդարիլ—Մարտավա (40 փար.)—Աւրմիյա (20 փ. համաձայն Իստախրիի 4 որ) —Մալմու (2 որ) —Խոյ (9 փար.) —Էրկրի (30 փար.) —Արծրէ (2 որ) —Խլաթ (3 որ) —Բիթլիս (3 որ)<sup>4)</sup> —Արծն

<sup>1)</sup> Pitton de Tournefort, Voyage du Levant t. II, եջ. 393

<sup>2)</sup> Թովմա Արծրունի, III, Գլ. Թ. եջ 172.

<sup>3)</sup> Իստախրի, 192—193 նըն Հառուքալ, 151. համաձայն այս պատմիչների վկայության՝ կարավանը կարողանում էր մի որվա ընթացքում 7 փարսախի ճանապարհ կտրել։ Փարսախը 4-6 քիլ. մ. ընդունելով, կարավանը կարողանում էր, ուրեմն, մի որվա ընթացքում 28-42 քիլ. մ. ճամբար անել։

<sup>4)</sup> Իստախրին գնում է մի որ, Աբուլֆիզան 2 որ. եջ 179.

<sup>5)</sup> Իստախրին գնում է մի որ, Աբուլֆիզան, Մուբատասին յեզ Իզրիսին 3 որ։

(1 որ)<sup>1)</sup> — Մայափարիքին (4 որ) — Ամիդ (2 որ): Աւրեմն Արդարիլից Ամէդ հասնելու հնարավոր և լինում 32 որվա ընթացքում:

Հետագա զարերից մեզ հասած վկայությունները զալիս են միանգամայն հաստատելու այս իրողությունը:<sup>2)</sup>

Հաղորդակցության միջոցներէ չզարպացած լինելը, ինչպիս նաև այն փաստը, վոր ապրանքները զիխավորաբար ոտար յերկրների արտադրույթներ եյին, առաջ եր բերում այն հետեանքը, վոր հայ առեարականներից շատեր իրենց կյանքի մեծ մասը անց եյին կացնում Հայաստանից դուրս:

Արանով և բացատրվում Միխիթար Գոշի զատաստանագրքի § 13ը:

«ԺԴ. Յորժամ այլ վասն պատճառի իրիք և կամ յաղակս վաճառի ձանապարհ երթալ յամիցէ անսալ արժան է կնոջնուք»<sup>3)</sup>

Ուրեմն, «յաղակս վաճառի» ուշանալը մի տարածված յերեսոյթ և յեղել, վոր դատաստանագրքում հատուկ մի կանոն սահմանվում և այդ վաճառականի կոնջ համար:

Այս պարագան արժե ընդգծել առեարականների ֆեոդ. Հայաստանի սոցիալական կյանքում կատարած դերի ընորոշման տեսակետից:

Ո) առևտրական գործառնությունների տեխնիկան պայմանավորվում և տուաջին հերթին փոխադրական և հաղորդակցության այն միջոցներով, վորոնք վոյություն ունեցել են այս ժամանակաշրջանում: Մենք բոլոր կետերի վրա շենք ծանրանա: Այստեղ արժե ընդգծել ձանապարհների վրա տիրող անապահովությունը, վոր զարեք շարունակ գոյություն և ունեցել:

Այսպիս Ալ-Մանսուր Խալիֆի (754-775 թ. թ.) ժամանակաշրջանին վերաբերվող մի վկայություն, սուրբացի պատմիչ Դընիի կողմից, մեզ ասում ե.

«...Գրավում եյին ձանապարհները և կողոպտում անց ու գարձ անողները...»<sup>4)</sup>

843 թվի մասին Միքայել Սուրբացի պատմիչը մեզ տալիս և հետեւ վկայությունը.

«Այս թագականին (843), Մանսուրը, Աֆիշինի քրոջ վորզին, սկզ սավ կողոպտել վաճառականները և մտածում եր ապստամբվել Հայաստանից մի վաճառական բռնից և կողոպտեց նրա ունեցածը»<sup>5)</sup>

<sup>1)</sup> Մուշասասին Բիթլիսից — Արզն ունի 2 որ և Արզնից — Մայափարիքին 2 որ. ԱբուլՖիզան՝ Բիթլիսից — Մայափարիքին 4 որ. և լ. 39. Հմմտ. սրանց մասին Ի. Topdschian, Die innere Zustände s. 42 ծանոթ 6), 7), 8).

<sup>2)</sup> Արքահամ Կար. Կեհանցի, գլ. ա. եջ 2 գլ. Ժէ, եջ 24, գլ. իբ. եջ 29. Guill. de Rubrouk, Récit de son Voyage եջ. 296.

<sup>3)</sup> Ա. Արդ. Բասղամյանց, Միխիթար Գոշի Դատաստանագիրքը եջ 109.

<sup>4)</sup> IV. ème partie Chronique de Denys de Tell Mahré, եջ. 104

<sup>5)</sup> Miehel-le Syrien, Chronique, L XII, ch XXI, P III, p. 100 trad fr. par Chabot, J. B. Paris 1905.

1067 թվին ավագակների կողմից ստեղծված անապահով դրության մասին նույն պատմէչի մոտ գտնվում են այլ վկայություններ<sup>1)</sup>)

Կիր. Գանձակիցին 1260 թ. Մերտին քաղաքի հոլավու խանի կողմից զրավճան ամթիվ հաղորդում ե.

«...Առաքեաց (Հոլավու) զօրս իվերայ քաղաքին Մէրտինայ, որք հազիւ կարացին առնուլ զնա յետ բազում աւուրց. կոտորեցին և զրազում յելուզակս վնասիչս ազգաց և ճանապարհորդաց, զօրս զանարիս անուանէին՝ թուրք ազգաւ, ամրացեալք ՚ի թաւ մայրին և ՚ի դժվարին վայրս ամրոցացն, անթիւ բազմութիւնք...»<sup>2)</sup>)

Նման վկայությունների շարքը կարելի յեր յերկարել:

Այս մասին ուշագրավ մի վկայություն և այն խոսակցությունը, զոր ունեցել և 1711 թվին Thesaurus linguae Armeniacae ի հոդինակը Joh. Joachim Schröder-ը Պարսկաստանից Ամստերդամ յեկած մի հայ վաճառականի հետ.

«Ֆ.—Զարմանալի ճանապարհ այն և առավել մեզ վոր չենք տեսնել. մա էդ խօսքդ կարավան ինչ լեզու այ, կամ ինչ ասել.

Հայ վակառականը պատասխանում ե.

«Ս.—Մեկ ալ մեծ զարմանք այ երբոր նաւի հաքաբիթ կուրսենք. կարվան որ թուրքեն քեարվան կամէ հայոց լեզուա, տանել սաքի, կարող վաճենու. (ընդգծումը մերն ե, Հ. Զ.) որ աշխարհօրէն կասին. զարշու կենալու կարող»:

«Ֆ.—Մա պարոն Մաֆար ձեր վաճառականքն ինչպէս ճանապարհ կանեն.

«Ս.—Խիստ հեշտ և սափայով զարա երբոր շատվոր են, և շատ ապրանք կայ, կարավան կուղառնան, և ունեն իրեն քեարվան բաշին, չափուշն, թփանքչին ամեն փուսաթովն ապրանքն, ուղտերն, ձի կամ ջորի կուրառնան, և իւրանք ձիւռոք ինչպէս մին մեծ օրտու կուզնան, ու ամէնքն քեարվան բաշու հբամանաւ աստ կամ անդ կիջևանին...»<sup>3)</sup>

Կարավանի սահմանավորումը վարպետ էկարոզ վանելոյց կամ զպարշու կենալու կարող, ինչպես նաև քեարվան բաշին, չափուշը, թփանքչին խոսում են այն անապահով զրության մասին, զոր զոյություն և ունեցել Արևելքի կարավանի ճանապարհների վրա.

Ճանապարհների այդ անապահովության պատճառով վաճառականը առաջին հերթին պիտի մտածեր փողի ապահով փոխադրության մասին:

Այս մասին ուշագրավ մի վկայություն և Վարդանի առակներում հետեւյալ կտորը.

«Ասի յիմաստնոց, թէ իմաստուն վաճառականք յորժամ երկըն-չին յավագակաց ի ճանապարհին, ոչ տանին զդանձաւ իւրեանց ընդ

<sup>1)</sup> Ibid p. 162/64,

<sup>2)</sup> Կիր. Գանձակիցի ԴԼ. Կ. Եջ 227/28.

<sup>3)</sup> Joh. Joachim Schröder, Thesaurus linguae Armeniacae Եջ 343/344. Amsterdam 1711.

ինքեամս, այլ տան ի փոխս զգանձս իւրեանց [յ] այնպիսի վակառության, որ ունին յաշխաղն իւրեանց տուն և զանձ, և տունուն ի նմանէ ձեռագիր և երթայ խախաղությամբ և տանի զձեռագիր վաճառականին և առնու զգանձ իւր խոսնէ նորաց<sup>1)</sup>)

Այս վկայությունը Wechsel-ի սկզբնական շրջանն է հիշեցնում, վորք 13-րդ դարի կիսան ձեռնովայում սովորական զարձած եր<sup>2)</sup>)

Առետրական կապիտալի մասին մեր ասածները ամրողացնելու համար մնում և մի քանի խոռք ասել նաև ուսար առետրական կապիտալի մասին:

Ամենայն հավանականությամբ արարները, վորոնք ըստ Իրն Հառարակի «արտաքին Երանեայ-յում գաղութներ ունելին, մեծ զարկ ելին ատլիս ֆեոդ Հայաստանի ապրանքափոխանակության» Այդ արարները Հայաստանից գուրս անմիջական կապեր ունենալով, տեղացի ազգարնակության առաջ նոր հետանկարներ ելին ըաց անում: Նրանց կատարած զերք այս ուղղությամբ մեզ համար ավելի պարզ կը լինի, յերբ նկատի ունենանք վաճառական զարգացումը խալիքատի յերկրամասերում:

Ուշագրավ մի ակնարկ և 768 թվի Պարագի ժողովի ժա կանոնը գիտության վու քրիստոնյա ազգարնակություն գոյություն ունենալու մասին: Այդտեղ ասված եւ:

«Ժա Թահանայք պատուեր արասցին արանց և կանանց և զստերաց նոցա, զի չարացեն ընդ հեթանոսի զուգութիւն...»<sup>3)</sup>)

Սուրբացի պատմիչի մտու ունենք ուշագրավ վկայություն Ամիզ, Արդին և Մայափարիքին քաղաքները հասասաված Մուսուլի ընակիչների մասին, վորից յերեսում եւ, վոր նրանք վերին աստիճանի հարուստ են յեղել և պարագել վաշխառությամբ<sup>4)</sup>) Այս մասին ավելի մանրամասն քիչ հետո: Վերը մենք տեսանք Խլաթ քաղաքու արարացի առետրականների մասին նասիքի Խորրառությունից,

Բացի արտք առետրականներից հանդիպում ենք այս ժամանակաշրջանում ևս հրեա առետրականների նախկին զարերում սրանց Հայաստանում մեծ քանակությամբ լինելուն մասին մեր ամրողական ուսումնասիրության առաջին մասում մանրամասն հայտնել ենք:

Իրն Խորդագրե արար աշխարհագիրը 879 թվին խոսում և հրեյանե-

1) Ժողովածու Առակաց Վարդանայ, Մաս II. Պետրովը 1895, եջ 184.

2) Grasshofe իր «Wechselrecht u/er Araber» (Berlin 1899) աշխատության մեջ ապացուցել է յերկրոպական wechselի Արեվելքից (Արարիայից) Աղանիա և Խոտալիա ներմուծումը, Արարական ամենահին Wechselը մեզ հասել և 871 թ.-ից առաջ. հմտու. G. Tasov, Die ältesten spuren des Wechsels Mit d. Seminars f. orient. Sprachen Jahrg. XXVIII, 1925 թ. 280/81.

3) Կանոնագիր հայոց, եջ 168. Թիֆլիս 1914.

4) VI ème Partie chronique de Denys de Tell-Mahré-եջ. 92.

րի արեւելքի և արեմուտքի առևտրի ասպարիզում կատարած խոշոր դերի մասին:

«Ճամբրորդում եյին, առում և աշխարհադիրը, Արեմուտքից Արեւելք և Արեւելքից Արեմուտքը, մերթ ցամաքով և մերթ ծովի ուղիով...»<sup>1)</sup>

Ազա թվաւմ և այն ապրանքները, զարոնց շուրջ տեղի եր ունենում այդ առևտուրը Արեմուտքից բերում եյին ներքինիներ և սարուկներ և մաններ, մետաքսե հյուսվածքներ, մորթիներ, սուրեր և այլն:

Սեղուկ Մելիքշան սուլթանի ժամանակ ոչչն էին գաւռուք կապանին» վկայում ե Ստ. Որբելյանը, ապա նկարազրելով 1103 թ. Զորթմանի արշավանքը հիշատակում և հնատեալ ուշազրավ վկայությունը.

«...և իշխն ընզ մեծ աւարի հնդկացան ի քարաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ վասն անհնարին զոլոյ մաից մարդկան և սկսան կոտորել ի Զհղաթաղոյն...»<sup>2)</sup>

Ուրիշի, 1103 թ. Կապանում զոյսթյուն և ունեցել Զհոտաթաղը, այս նշանակում ե, զոր կամ այդ թվականին և կամ նըրանից տառաջ կապանում յեղել և հրեական զազութ:

Ցեղակացնելով, կարելի և տանը, զոր արարական տիրապետության ցըշանում ֆեոդ. Հայաստանում ինչպես հայ առևտրական կապիտալը, նույնապես և ոտար առևտրական կապիտալը բավականին մեծ համեմատություններ եր ոտացել և խնդրո առարկա, ժամանակաշրջանում նա կարողացել և խոշոր կուտակումներ կատարել:

Խնչպիս անդրադարձում և ունեցել հարստության այդ կուտակումը ազգարնակության այլ շերտերի վրա Այս կերպ հասնաւմ հնք արդին վաշխառուական կապիտալին:

## Բ

Վաշխառուական կապիտալը պատմական իր զարգացման ընթացքում արտադրական յնդանակի նախակապիտալիստական շրջանում, ստացել և յերկու հատկանշական ձև:

Առաջին վաշխառուն զրամ տվել և տոկոսով խոշոր հոգատերերի, յերկորդ՝ մանր արտադրողների, մասնավորաբար զյուղացիության, զորովճետե, նախակապիտալիստական շրջանում յերկրագործությունը հանդիսանում եր արտադրության գերակշռող ճյուղը և այդ ժամանակաշրջանում մանր արտադրողների ճնշիք մեծամասնությունը կազմում եր զյուղացիությունը:

Այս հիմնական յեղակացությունը, վորին հասել և կ. Մարքսը վաշխառուական կապիտալը վերլուծելիս, <sup>3)</sup> ցույց ե տալիս այս հարցի քըննության մեթոդական ուղին:

Վաշխառուական կապիտալի առաջին ձևը արտադրական ուժերի դար-

<sup>1)</sup> Իրն Խորդազը Շլուշչի մոտ, Le Caucase, l'Arménie, l'Azerbeijan. Revue du Monde Musulman, 1911 T. 11. թ. 273/74 նաև Goeje-Bibl. geogr. Arab VI 114.

<sup>2)</sup> Սա. Արքելյան, II, զլ. կա. հջ 78.

<sup>3)</sup> K. Marx, Das Kapital III 2 կար. 16, 5, 133

դացման տեսակիտից հասարակականորեն հեղափոխիչ դեր և կատարում, վարովնետե նա, քայլայում և տարբալուծում և նախկին սեփականատիրական ձեռները Յերկրորդ զեղքում, այսինքն՝ մանր արտազրույներին տըրդած վաշխառուական կատիտալը, զրկում և այդ մանր արտազրույներին իրենց անահատ թյունը գարգացնելու հնարավորությունից։ Ուստի, այս դեպքում արգելը լինելով արտազրական ուժերի զարգացման, վաշխառուական կապիտալը հասարակականորեն հանդիսանում է բացասական ազգակ<sup>1)</sup>

Այս տեսակիտից ելքացարքովում և այն յերկրորդ հիմնական հակագրությունը, վոր զոյություն և ունեցել խնդրու առարկա ժամանակաշրջանում ֆիոդ Հայաստանի քաղաքի և զյուղի միջներությունը առաջանառուվ

Թի առաջին ձեր ֆեոդ, Հայաստանում իր արտահայտությունը ունեցել է, դժվարանում ենք այս մատին մի բան տակ մատենազրական և այլ վըկայությունների բացակայության պատճառով։

Ինչ վերաբերում և վաշխառուական կապիտալի ֆեոդ։ Հայաստանի զյուղում զործած քայլայիչ դերին, մեր կարծիքով, մասնավորաբար Արքուն։ Լաստիվերուացիի մոտ կան փաստացի հիշատակաթյուններ այս մասին։

Սակայն, նախ քան հայ պատմիչի վկայություններին անցնելը, մենք անհրաժեշտ ենք համարում նախ վկայություններ բերել սուրբիացի պատմիչ Դընի-զը Դել Մահերեյից։ Առար այս ազրյուրի վկայությունը յերկու տեսակիտից շահնեկան և մեզ համար Առաջին այն՝ վոր այդ վկայությունը վերաբերում և կամ իրն Հառուալի անվանած շարստաքին Երմենիա-ի վորոց քաղաքներին և կամ հարեան Միջազնատքին։ Յերկրորդը, վոր այդ վըկայություններից յերկրորդի ընդարձակ նկարագրականը վաշխառուական կապիտալի ժամկե, մեզ հնարավորություն կըսա ավելի վըրշտկի հասկանալու հաստիվերուացիի մեզ և ընդհանուր խոսքերի իմաստը։

Դընի-զը Դել-Մահերեն 769/770 թ. Ամիդ, Արդն և Մայափարիքին քաղաքների մասին հաղորդում ե.

«Միջազնաքույզում ապրող մուսուլման ժողովուրդը չափազանց հարուստ եր այս թվականին (769/770) վորովնետե յերկրի ընակիշների աշխատանքը շահագործում եր, վոր լափում եր անարդար rachat<sup>2)</sup> զնելով (վերցնութեներով) և վաշխերով... վաշխով փող եյին տալիս, իրենց զրամեերը rachat ների համար եյին տալիս և չափազանց բարձը տոկոսներով. ստրուկների և սարկուհների տեր զարձան. տեր եյին շարժուն ինչքերի, այդիների և հողերի»

«Հասարակաց հրապարակներում դիկտատորների և յերկրի տերերի նման նստում եյինք»<sup>3)</sup>

<sup>1)</sup> K. Marx, das Kapital III kap. 16, s. 135/136

<sup>2)</sup> Թարգմանիչը, J. B. chabot, rachat բառին հետեյուլ բացատրություններում նշանակում է առաջարկություն, ուշադրությունը տալիս. «c. a. d. d'après le contexte, moyennant un contrat aux termes duquel on devait les rembourser en nature, avec des denrées qu'on leur cédait à un prix audessous du cours».

<sup>3)</sup> IV ieme partie Chronique de Denys de Tel-Mahré, trad. fr. par J. B. Chabot, p. 93 Paris 1895.

Ֆեռդ. Հայաստանի հարավում առևտրական այս կենտրոնների մասին Դընիքի այս ուշագրավ վկայությունը կասկած չի թողնում այն հակագրության մասին, զոր սառեղջվել եր վաշխառուական կապիտալի միջոցով։ Անտարակույս, նման պայմաններում հողը դառնալու եր առուծախսի տուարկան Ատ. Որբելյանի փաստաթղթերում և Վիճական տարեցրի արձանագրություններում կան մի քանչներ, զորոնք կարող են նմուշ ծառայել այս մասին։ Առաջ կը բիրենք այնպիսիներ, զորոնք վերաբերում են արտր հոգատերերի կողմից վաճառված սեփականություններին։

873 թ. Սյունյաց Մարիամ իշխանուհի նվիրատվությունների մեջ առված ե.

«... Եւ զնեալ ի հագարացի մարդկանէ զգեօղն Շողուզայ ընդ 60.000 զրամի ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ի սեպական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն նմանապես և զեօց մի ի Մագաղ զաւառի ընդ 3.000 զահիկանի զնէ և տայ ի սուրբ եկեն, ին որոյ անուն զեղջն Գնէրք։<sup>1)</sup>

907 թ. Արամոնափ արձանագրության մեջ կարդում ենք.

«...Ես Գրիգոր, Սիւնեաց աէր, որդի Վասակա, շատածախ զանձիւք զնեցի ի հագարացեաց...ընդ նմին և նորողեցի զսա...»<sup>2)</sup>

Յեթի Սյունիք ւմ, զոր իր աշխարհազրական դիբքով ֆեռդ. Հայաստանի անմատչելի զավաներից մին եր, արար հոգատերեն զոյսիթյուն ունեցել են, զորոնք հողի առևտուրով են զրազվել, ավելի մեծ չափերով պիտք ե ընդունել, մեր կարծիքով, այս դրության զոյսությ ընը Հայաստանի զաշտային մասերում։

Դընիքի վկայությունը ուշագրության արժանի յե նաև այն տեսակետից, զոր նաև մեզ տալիս ե վաշխառուական կապիտալի եկեղեցման այն ձեզ, զոր զոյսություն և ունեցել այդ ժամանակաշրջանում։

Այստեղ հետաքրքիր ե ընդգծել րաշատ-ի ձեզ, զոր ըստ յերեսույթին կրկնակի վաշխի մի դրություն և ներկայացնում։ Այս կեաը ավելի կը սկարզի հաջորդ վկայությամբ։

Դընիքի մեջ թողել ե Միջազգեհաքում զործող վաշխառուական կապիտալի մասին մի ընդարձակ նկարագրական, զորու կենդանի զոյսիներով մեր առաջն և զնում 8-րդ զարի 70-ական թվերին քաղաքի և զյուղի փոխհարաբերությունները։

«Պյուղացիները (les hommes de campagne), անգութ հարկապահն չությունից ձնչված, քաղաքներն եյին գալիս և նվերներ բերում նրանց, զորոնք վաշխով փող եյին տալու վերջինները նրանց տեսնելով առում եյին քրարի եկարժ, և սիրալիք բաւելով ավելացնում եյին քեզ կտամ ամեն ինչ, յերբ գու կարիք զգաւու Մի մատանգիքիր, զորքան ևս ապրելու լինեմ, քեզ կտամ. վ. զ. զորքի կարիք չես ունենալ թեղանից վկա, յերաշխառագործություն, ավանդ չեմ պահանջեր, վհչ տոռ կոս և վհչ րաշատ, Կառնես և յերը հունձքը հավաքես, իմ ինչքըս կը

1) Ա. Թրբելյան, 1. գլ. 16, էջ 218/19

2) Ա. Կոստանդնուպոլիս պիտական տարեցիք էջ 6,

բերես կամ ինձ ցորեն կամ գինի կըտաս այդ ժամանակամիջոցում ֆնա այժմ և վերադարձիր մի քանի որից հետո»:

«...Գյուղացին հանդիսա մնում եր իր տանը մինչև հարկապահանջների զալը: Ցերը վերջինները նրան հանկարծակի եյին ըերում առում եր նրանց. «Ապասեցք մի քիչ, կը բերեմ շուտով». և աճապարանքով զնում եր այն մարզու մոտ, վոր հույս եր տվել իրան: «Տէր, ասում եր նրան, բարեհաճիր տալ ինձ այն՝ ինչ վոր քեզանից խնդրում եմ, վորպեսի ինձ խարազանով չծեծեն»:

Որեւ ձգդումներից հետո, յերբ գյուղացին մահվան տառապանք և ապղում, վերջապես համաձայնում ե տեղը» տալ խնդրվածը և գյուղացոց պահանջում ե մի զրություն: Ցերը գրությունը պատրաստ ե՝ կրկին ձըդ ձգում:

«...Ցեվ յերբ գյուղացիները առոտու կանուխ զալիս եյին, ասում ե, «Չեմ տար, յեթե մի ավանդ չտաս»: Ավանդը ստանալուց հետո հարց եր տալիս. «Վերքան տոկոս պիտի տաս այս գրամի համար. և վերքան ցորեն րահա-ի համար: Վորովհետեւ ցորենը իր ընթացիկ գինով չեմ ընդուներ»:

«Նեղը ընկած լինելուն պատճառով համաձայնում եյին ինչ վոր նրա բերանը պահանջում եր»: <sup>1)</sup>

Ցերը գյուղացին մի կերպ փոխ վերցրած գումարը ճարում ե և բերում պարտքը վճարելու, վաշխառուն ստանալը ձգդում ե և աշխատում ե գյուղացին պարտական թողուլ:

Դընիի այս ուշագրավ վկայության մեջ ուշադրության առնելիք կետը այն ե, թե ինչ հանդամանքներում գյուղացին ստիպված ե լինսաւմ վաշխառուի վոտը եյնալու:

Այստեղ պարզ ասված ե այդ մասին. հարկապահանջների խարազանն ե այդ:

Ցեթե սուրիացի պատմիչ Դընին փոխարինենք Դեսնի յերիցով, այն ժամանակ նույն սահմաններում գտնվող հայ գյուղացիության պատկերը ևս կը պարզի մեր առջև: Մըայն խոսք կարող ե լինել հարաբերական տարբերության մասին: Արարների փեղալական Հայտատանում վարած հարկային քաղաքականության մասին մեր կատարած ուսումնասիրությունը <sup>2)</sup> ցույց տվեց արտադրող դասի այն սոսկալի դժվարությունները, վորոնց առջև կանդնած եր ան, հարկերը դւամով վճարելու ստիպված լինելու պատճառով:

Արտաքին իշխողներին վճարելիք արիպուտների համար մանք արտադրող դասը վորոշ ժամանակներում անելանելի կացության եր մատնվում: Արա վրա ավելանում եյին նաև ներքին փեղալաներին վճարվելիք հարկերը, վորոնք, մեր կարծիքով, հողատիրության կենտրոնացման և ապրանքափոխանակության այս շրջանում ավելի ծանրանում եյին:

Այս տնտեսական պայմանները, վորոնք գոյություն ունեցել են Մի-

<sup>1)</sup> IV ieme partie chronique de Denys de Tell-Mahrè եջ 151/153

<sup>2)</sup> Տես ՀՍԽՀ Պետ. Համալսարանի Պիտական Ցեղենկանքը № 2, Ցերեան 1927 թ.

ջաղետքում արարական սիրապետության շրջանում, զոյություն ունեցին նույն ժամանակաշրջանում Քեռով. Հայաստանում, Աւատի, ամենայն հավանականությամբ, յերկու յերկրներու առաջացած յերեսույթները առավել կատ նվազ չափով նույնը պիտի լինեցին: Ինչպես ասացինք, խօսք կարող է լինել հարաբերական տարրերությունների մասին, հիմքում զրությունը միանույն եր:

Այժմ քննենք Արխատ. Լաստիվերտացիի ալին վկայությունները, պարագայ վերաբերում են ֆեոդ. Հայաստանի յերկու հայտնի քաղաքներին՝ Արծանին և Անին:

11-րդ գարի կիսուն նրա ներկայացրած այս յերկու քաղաքները հասել եյին զարգացման մի շրջանի, վարտեղ քաղաքի և դյուղի միջև ստեղծված փոխնարարերությունները ավելի բյուրեղացած ձեռվի արտահայտվել են Քաղաքի կողմից զյուղը շահագործելու, կեղեկելու պատմականի, որին նշանական այդ արտահայտությունը պատմիչը իր դարի կրոնարարոյական աշխարհայացքով մեր առջևն և զնում:

Անցյալը հիշելով, յերբ գեևս առետրական-վաշխառության կապիտալը զանգվացման սկզբնական շրջանում, վաճառականները, առողմ և պատմիչը 1049 թ. Արծն քաղաքի մասին.

«...եկեղեցւոյ շինողք և զարգարողք... ոչ զոյթ խարեւոթիւն ի վաճառսն, և ոչ նենութիւն ի տուրեատիկ փոփոխուննաւ. Ընդ բաժ-  
րասահնօք էր վաշխից և տոկոսեացն շահքն. . .<sup>1)</sup>»

Բամբասպում եր վաշխի և տոկոսի բերած շահը, հիշենք Վ դարի չորրորդ Մանդակունիի ճամար.

«Եւ այնչափ անօրէն են ախտ փոխոց տոկոսնեց, մինչև յամուլ արգանդէ խնդրէ. որդի բռնութիւնամբ, և յապառած քարանց պատող որոնէ, և աանց սերման կամի արդիւնս ժողովել, և յարուաց ծնունդըս պահանջել, և քարէ կաթն կթել, և ի վիճաց ասր ստանալ...»<sup>2)</sup>  
Հակառակ նրան, վոր վաշխի շահը բամբառվում եր, սակայն, սա դեռ չի նշանակում, վոր նա իր ավերները չեր գործում. այսպիս; կարդում ենք նույն ճառի շարունակության մեջ.

«...Եւ պատուհասեալք պատժին չարապէս խնդրողք վաշինիցն և փողոցն՝ որ ընդդէմ պատուիրանացն Աստուծոյ չարեացս իւրեանց ի վաշխու տան, և տոկոսուօք անդէն պահանջնեն, և անակնածելի ուտեն զմարմինս տնանկաց, և ըմպէն գարիւն նորա անողորմ:

«Երբին սուզ ինչ պախրէն կամի՞ վաճառել...և երբեմն խորհի գաղտագնաց լինել ի տար աշխարհ...»

«Եւ եթէ աղքատ ևս իցէ փողապարտն, ի ծուփս և ի հոգս մաշի հանապաղ. անքուն և գառնաքուն ի զիշերի ննջիւն նորա. տխուը և տրտում և մտայոյ ի տուրն նեան շրջի, և ոչ դիտէ յ երթաւճ։<sup>3)</sup>

<sup>1)</sup> Արիս. Խաչկարացի դժ. հ. 53

<sup>2)</sup> Հովհ. Մանուկյանի Ե. կ<sup>թ</sup> 63. Վենետիկ 1860

<sup>3)</sup> Համեմատելու հասը: Խջ. 63-64. վորքան նմանություն Սոլոնի հայտնի իշեցի հետ.

.... Während so der Unheil stetig wütet in der Bürger kreis.

Wanderu die verarmten Leute ins Eleud Scharenweis. Als verkauft Schuldenecknechte bindet sie der Ketten schmach. Und so tragen der Fronde bittern Zwang u. Ungemach“

<sup>1</sup> Stowasser, „Griechenlyrik“, Heidelberg O.J.s. 6 bei

K. Wittvogel, Geschichte d. Bürgerlichen Gesellschaft, 5. 208

Նույնը չի հիշեցնում արդյոք յերբ կորյունի մոտ կարգում ենք.  
«...եւ բաղում մուռհակս անիրաւութեան պատառեաց»:<sup>1)</sup>

Այսպիս յերբ վայիսի շահը բամբասպում եր:

Փոխվել ելին ժամանակները, անտեսական կյանքը ընթացել եր պատմական անհրաժեշտությունը, արտադրական ուժերի զարգացումը պայմանաված արտադրական փոխանարարերությունները անտեսական կատեղորիաների մասին նոր հայեցողություն և ըմբռնում եր առաջացրել.

«Վաշինց և տոկոսեաց օրէնք եղանք, շարունակում և կաստիվերացին, «եւ ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ զպտուզ ի ժամու իւրում առ ի կերակուր մարգկանը»:<sup>2)</sup>

Անհարական վաշխառուական կապիտալը կարողանում է որինականացնել «ընդ բամբասանօք» յեղող վաշխի ու տոկոսի շահը: Յեկ սրան և վերագրում պատմիչը, կրօնական գունավորումով, յերկը արգանդի պըղծումը և նրա անընդությունը: Այսուղ պատմիչը վեր և հանում այն քայլայիշ դերը վոր կատարում և վաշխառուական կապիտալը դյուզական մանը անտեսություններում:

«Բամբական և միայնա, ասում և Մուրքս, և վոր մանք դյուզացու մի կովը սատկի, այն ժամանակ նա անկորող կը լինի նախկին տատիճանու վերարտապրության սկսելու: Այդ կերպ նա կընկնի վաշխառույի ձեռքը, և միանդամ վոր ընկավ, նա յերեք չազատվի»:<sup>3)</sup>

Յեկ կամ մի յերաշտ տարի կամ բնության այլ պղես, վորոնք այնքան հաճախազեալ են յեկել ջրասակավ այս յերկրածառում, մանը արտադրող կարիքի մեջ զցի և նա ստիպվի դիմել վաշխառուին, այլիս շատ դժվար կլինի նրա ճիրաններից ազատվել և ահա երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալու զպտուզ ի ժամու իւրում:

«Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր Սեքարայիք և Պիհունացիք, և արգարութեան օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղեւ արծտիթասիրութիւն քան զաստուածասիրութիւն, և մամոնայն քան դՔրիստոս... իշխանք սորա զողակիցք եղին գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք...»<sup>4)</sup>

Ուշագրավ յերկույթ ե, վոր պատմիչը կապում և առևտրական-վաշխառուական կապիտալի ուժեղացումը աղանդավորական շարժման հետ:

Ուժմ ելին շագագործում և կողոպտում. պատմիչը տալիս և այս հարցին պատասխան:

«Զոտունս անակից» (տնանկից) աղքատացն, և զոտամանս անգաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն...»<sup>5)</sup>

1) Կորիւն, Պատմություն վարուց և մահվան սրբույն Մերուղա վարդապետի էջ 36 վենետիկ 1894.

2) Արքան. Լատիվերացի զլ. ժթ. եջ 52

3) K. Marx das kapital III<sub>2</sub>, kap. 16, S. 138.

4) Արքան. Լատիվերացի, Պլ. ժթ. եջ 54

5) Ibid Պլ. ժթ. եջ 54

ի՞նչու իշխանները դառնում են «զողակիցք զողոց» և մեծատունները յափշտակիչներ:

«Ամբարտավանություն» տնվանում և պերճանքի հավելումը, վորը անմիջական հետեւանքն և առևտրական կապիտալի զարգացման և ֆեոդ. հայաստանի Արենելքի-Արևուտքի ապրանքափոխանակության ցանցին մեջ ընկնելուն:

«Այդ՝ ամենիցուն չար և ախտո այս (պերճանքի հավելուն մասին և խոսքը), ըայց կարի առաւել կանանց ազդի», ապա թվում և նրանց զարդերը. «... զգինզոն և զմատանիսն, զապարանջանսն, զրօդէսն և զմենեանզոն և զայլ ամենայն»:<sup>1)</sup>

Անա թե ինչու ստեղծված այս նորանոր և բազմադան պերճանքի պահանջների պատճառով անաշխատ հասույթով ապրողները դառնում են «գողակից զողոց» և մեծատունները հափշտակիչներ. որինակացնում են վաշին ու տոկոսը, լինում և «ցորենոյ բազմապատկութիւն»: Յեկ այս դրուժյունը ուղղակի քայլքայում և գյուղացիական տնտեսությունները, արգելք լինելով արտադրական ուժերի զարգացման. միաժամանակ հավերժացնելով այս թշվառ պայմանները. վորտեղ աշխատանքի հասարակական արտադրողականությունը աշխատանքի իսկ հաշվույն չի զարգանում, ինչպես առնասարակ անսում ենք կապիտալիստական արտադրության մեջ:<sup>2)</sup>

Թե ինչ չափերի հասել եր մանր զյուղացիության շահագործումը և քաղաքներում հարստության կուտակումը, այս մասին կարգում ենք հետեւյալը Սատթ. Ռւուհնեցու մոտ Դավթուկ անուն մի քորեպիսկոպոսի մասին: Նախ ընդհանուր առմասը քաղաքի հարստության մասին ասելուց հետո, «այլ զոսկւոյ և զարծաթոյ և զդիպակաց ավելորդ է ասել» շարունակում ե,

«...Բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագ քորեպիսկոպոսին որ ասէին Դաւթուկ, եթէ զդանձատուննորա, Արքիհնմն էտո և քառասուն ուղարք բարձան զգանձարանն նորա ութհարիւր վեցկի եղանց ելանէին ի տանէ նորա:»<sup>3)</sup>

Յեթե մենք բառացի չընդունենք պատմիչի մեզ հաղորդած այս վկայությունը, այնուամենայնիվ կարելի յե հաստատ ասել, վոր հարստության կուտակումը քաղաքում ստացել եր բավականին խոչըր համեմատություն:

Յեկ զարմանալու չե, յերբ կաստիվերտացին այնքան ծանր խոսքեր և գործածում իշխանական այն դպյակների և ապարանքների մասին, վորոնք կառուցվել են և վաշինիք փողերով:

Խոսքը վերաբերում է 1064 թ. Սելջուկ-Բուրքերի կողմից Անիի գրավման:

<sup>1)</sup> Ibid Պ. Ժ. եջ 55.

<sup>2)</sup> K. Marx, das Kapital III<sub>2</sub>, kap. 36 185.

<sup>3)</sup> Մասք. Ռւուհնեցի, եջ 103 հմմտ. նաև Սմբատ Պուճսառապի, Տարեգիրք: եջ 66. Փարիզ 1856. Պ. Ալիսան հայապատում եջ 324. ծանոթ. 6.

«Այլ և ի ճարողոյ անիրաւութեան ի նմա զործելոցն տոչորեցաւ բարձրացէն և զեղկցկայարմար ապարանքն, եղեւ և ամենայն ընակութիւնն իրեւ հոգարլուր, և վաշխն ու նենգութիւնն որ ի նմա խափանեցաւ»:<sup>1)</sup>

Քաղաքի և դյուդի մեջև ստեղծված այս սուր հակադրության առջև, պատմիչը ապարանքի կործանման առթիվ, կարծես ցավով իւան ուրախությունն և հայանում: Այդ ուրախությունը բղխում և նրանից, վոր քաղաքի հին նահատեական կենցաղը վոտի տակ եր տալիս և ստեղծվել եր ցոփ ու շվայտ կյանք: Հին բարքերի պաշտպան պատմիչը այսպես և բացատրում այդ շվայտություն և պերճանքի տուած:

«Այս և բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և ՚ի քրտանց տնանկաց փարթամանուն, և ՚ի վաշիրից և յանիրաւութեանց զոտումն իւրանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտը իւրեանց անողորդ ունելով առ աղքատս և տնանկում միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ՚ի զործոց աղտեղութեան ոչ խորշին, այլ միայն արբեալ լինեն ի ցանկութեանցն որ զնոսա ըմբռնեալ ունի՛»:<sup>2)</sup>

Ի՞նչ յեղակացություններ կարող ենք հանել արաբական տիրապետության շրջանում ֆեոդ. Հայաստանի քաղաքի և գյուղի մասին կատարած մեր այս ուսումնասիրությունից.

1. Արարների տիրապետությամբ ֆեոդ. Հայաստանի տնտեսական կյանքում յերկու հիմնական մղիչ ուժեր հանդես են գալիս.

ա) Արարների դրամական հարկերի դանձումը.

բ) Տեղացի վորքաթիվ ֆեոդալների ձեռքում հողամասերի կենտրոնացում:

2. Այս յերկու ուժերի հիմնական անդրագարձումը ներքին տնտեսական կյանքում լինում եր այն, վոր հասարակական աշխատանքում բաժանում եր առաջանում և այս պրոցեսը ժամանակի ընթացքում խորանում:

3. Բացի այս, յերկորդ հիմնական անդրագարձումը լինում եր այն, վոր արտադրող դասի կեղեգումը ավելի սաստիկ համեմատություններ եր ստանում տեղացի ֆեոդալների կողմից: Առաջին հակադրություն:

4. Մի կողմից հասարակական աշխատանքում առաջացած բաժանումը, ֆեոդ. Հայաստանի Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության ցանցի մեջ ընկնելը, մյուս կողմից անաշխատ սպառովների ավելի մեծ թիվով քաղաքներում բնակություն հաստատելը, ինչպես նաև այլ աղղակներ, առաջանում եյին ֆեոդ. Հայաստանի քաղաքների բարգավաճումը և կամ ծնունդ տալիո նոր քաղաքների:

5. Մասնավորաբար, արհեստավորական-առևարական քաղաքներում առևտրական կաղիտալի աշխուժացումով առաջանում եր քաղաքի աղղաբնակության վորոց շերտում հարստության կուտակում:

1) Արիս, Լասեիվերացի, Գլ. Իդ. եջ 111


2) Ibid Գլ. Իդ. եջ 111.

6. Արարացիների գանձած ղըամական հարկերը և տեղացի իշխանութերի կեղեցումների սաստկացումը, մանը արտադրող դասը վաշխառուական կապիտալի ձեռքն եր դցում:

7. Ժամանակի ընթացքում քաղաքի ազգաբնակության վերին խավերում այնքան վորքան հարստությունը կուտակվում եր, նույն չափով զյուղը աղքատանում և քայլքայվում: Ցերկորորդ հիմնական հակադրություն:

Ահա այն յերկու հիմնական հակադրությունները, վորոնք կարողանում ենք մատնանիշ անել ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև արարական շրջանում:

4/V—1927 Շերեվան



ԳԱԱ Երմնարար Գիտ. Գրադ.



FL0428818

2504.7

504

2844  
—  
46